

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Քամալյան Ռոբերտ Արմենի

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
(ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Ը.00.08 – «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

Գիտական ղեկավար՝

տ.գ.դ., պրոֆեսոր Թավադյան Ա.Ա.

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1	10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ	10
1.1. Հայաստանի ազգաբնակչությունը և նրա միգրացիոն հոսքերը	10
1.2 Եվրասիական միգրացիոն համակարգը և միգրացիոն ցանցը	21
1.3 Միգրացիոն հոսքերի պատճառները, դրանց վրա սոցիալտնտեսական զարգացման ազդեցության առանձնահատկությունները	31
1.4 Տրանսֆերտների դինամիկան և օգտագործման կառուցվածքը	55
1.5 ՀՀ աշխատանքային միգրացիայի գործընթացների ուսումնասիրման և կանխատեսման տեղեկատվական ապահովման հիմնախնդիրները	61
ԳԼՈՒԽ 2.....	68
ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ.....	68
2.1. Միգրացիան ներկայացումը նոր դասական տնտեսագիտական աճի տեսության տնտեսամաթեմատիկական մոդելներում	68
2.2. Միգրացիան Սոլոու-Սվենի մոդելում: Բետա- ու սիգմա կոնվերգենցիաի, դիվերգենցիաի պայմանները	75
2.3. Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացները և տնային տնտեսությունների օպտիմալ որոշումները	88
ԳԼՈՒԽ 3	109
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	109
3.1. ՀՀ աշխատանքային միգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա և դրա մոդելավորման հիմնախնդիրները	109
3.2. Միգրացիոն գործընթացների և տրանսֆերտների տնտեսամաթեմատիկական գնահատումը	119
3.3. Միգրացիոն գործընթացների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա (աշխատանքային ուժ արտահանող պետության օրինակով)	134
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	142
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	142
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	152

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից համաշխարհային տնտեսության բնորոշ հատկանիշներից է բնակչության լայնածավալ միգրացիան, և, առաջին հերթին, աշխատանքային միգրացիան՝ մարդկանց շարժը, կապված բնակության վայրի և աշխատանքի փոփոխության հետ: Այն ձևավորում է նոր աշխատանքի շուկաներ և նոր ֆինանսական ու սոցիալ-տնտեսական հարաբերություններ:

Հայաստանը ունի միգրացիայի երկար պատմություն: Թե կանոնավոր, և, հիմնականում, անկանոն արտագաղթը այն կարևոր երևույթներից է, որը ազդում է երկրի բոլոր կողմերի վրա:

Անկախ Հայաստանում XX դարի 90-ն թվականներից սկսած միգրացիան դարձավ ամենա ցավոտ պետական հիմնախնդիրներից մեկը: Խորհրդային Միության փլուզման և շուկայական հարաբերությունների ձևավորման սկզբից, Հայաստանում եղել են մի շարք արտագաղթի հոսքեր, պայմանավորված տարբեր պատճառներով:

Միայն 1990-ականների սկզբներին տնտեսական և սոցիալական իրավիճակի վատթարացման հետևանքով մոտ մեկ միլիոն մարդ մշտապես արտագաղթեց Հայաստանից՝ միանալով Ռուսաստանում, Ուկրաինայում, ԱՄՆ-ում և Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում առկա խոշոր սփյուռքահայ համայնքներին:

Բնակչության աշխատանքային միգրացիան՝ դա պետությունում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացների պատկերն է, պետության բարեկեցության աստճանի վստահելի աղբյուրը: Բնակչության և աշխատուժի միգրացիան տեղի է ունենում այն ժամանակ, երբ առկա է ընդունող և արտահանող աշխատուժի զգալի կոնտրաստը երկրների տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակներում: Եթե երկրում նկատելի է արտագաղթը, սա պետք է առաջացնի անհանգստություն իշխանությունների մոտ: Ի վերջո, տնտեսության հիմնական արտադրողական ուժը՝ աշխատուժն է: Աշխատանքային միգրացիոն հոսքերը կարող են բացասական

ազդեցություն թողնել երկրի զարգացման ընթացքի վրա, ի հայտ բերելով խորը անհավասարակշռություն:

Տնտեսության զարգացումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, կայուն տնտեսական աճը Հայաստանի Հանրապետությունում, խիստ կապված են նրա միգրացիոն հոսքերի և աշխատուժի վերարտադրության, զբաղվածության զարգացման միտումների հետ: Իր հերթին, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, աշխատատեղերի ստեղծումը, արտագաղթի մակարդակը՝ պայմանավորված է սոցիալ-տնտեսական զարգացման և արդյունաբերական արտադրության դինամիկայի և կառուցվածքային փոփոխություններով:

Հետևաբար, կարևոր խնդիրներից է հանդիսանում միգրացիան դիտարկել որպես սոցիալ-տնտեսական գործընթաց՝ Հայաստանի աշխատանքային շուկայի, բնակչության կենսամակարդակի և այլ սոցիալ-տնտեսական ցուցանիշների հետ կապերի տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելը, միանշանակ և սերտ կապված է այն խնդրի և հնարավորությունների հետ, թե ինչքանով նա կկարողանա ճիշտ գնահատել և կանխատեսել արտագաղթի հոսքերի մեծությունը և ուղղությունները, դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա:

Ակնհայտ է, որ միգրացիոն գործընթացների համապարփակ հետազոտության և գնահատման միջոցով է միայն հնարավոր ձևավորել և իրականացնել համապատասխան պետական քաղաքականությունը միգրացիոն կարգավորման գործում:

Ներկա դրությամբ, բացակայում են համապատասխան քանակի հետազոտություններ, որոնցով մոդելավորվում է Հայաստանի արտագաղթը, դրա ազդեցությունը սոցիալ-տնտեսական վիճակի վրա, ինչը թույլ կտար ավելի համափարփակ պատկերացնել երևույթի էությունը: Միգրացիայի և երկրի տնտեսության իրավիճակի միջև կապը հիմնականում ուսումնասիրված է ոչ բավարար մակարդակով: Այստեղից էլ առաջանում են՝ աշխատանքային ռեսուրսների դինամիկ փոփոխության, սոցիալական ոլորտի զարգացման, արտագաղթի հետևանքները երկրի վրա, կառավարման հարցերի կանխատեսման հիմնախնդիրները: Ըստ դրա,

միջպետական միգրացիոն հոսքերի գնահատականը դիտարկվում է որպես բարդ խնդիր, որը բնութագրվում է բարձր մակարդակի անորոշությամբ:

Նման հարցերի ուսումնասիրությունը առավել արդիական է դարձել, երբ 2013թ. Հայաստանի ղեկավարությունը որոշում կայացրեց անդամագրվել Եվրասիական Տնտեսական Միությանը:

Այն պայմանավորված է, ԱՊՀ տարածքում, միգրացիոն հոսքերի անընդմեջ աճով, առաջացնելով մի շարք սոցիալ-տնտեսական հետևանքներ, թե դոնոր երկրների աշխատուժի, այնպես էլ՝ ընդունող երկրների վրա: Պետք է նկատել, որ երկրների բաժնում, որտեղ արտագաղթում են Հայաստանի քաղաքացիները, ԵԱՏՄ երկրները կազմում են ավելի քան 60%: Համապատասխանաբար, նրանց բաժինը տրանսֆերտներում (դրամական փոխանցումներ), համեմատած ՀՆԱ-ին, 2015 թվականին, գնահատվում է ավելի քան 30%, որը, ըստ էության՝ որոշում է երկրի մակրոտնտեսական կայունությունը:

Ատենախոսության **թեմայի արդիականությունը** պայմանավորվում է վերոնշյալ հիմնավորումներով, որոնք ենթադրում են խորը և գիտականորեն հիմնավորված հետազոտություն: Այն թույլ կտա գնահատել ՀՀ միգրացիոն գործընթացները, դրանց ազեցությունը ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վրա, և բարձրացնել միգրացիոն գործընթացների ձևավորման և իրականացման քաղաքականության արդյունավետությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության **նպատակն է** առանձնացնելով առանցքային Հայաստանի ազգաբնակչության աշխատանքային արտագաղթի հիմնական գործոնները, ուսումնասիրել և գնահատել միգրացիայի գործընթացները:

Վերոհիշյալ նպատակի իրագործման համար ատենախոսությունում ձևակերպվել և լուծվել են հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել Հայաստանից միգրացիոն հոսքերի ուղղությունները և դինամիկան.
- Սահմանել և դիտարկել Եվրասիական Միգրացիոն Համակարգը, հաշվի առնելով, որ Հայաստանը Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ)

անդամ-պետություններից է: Ուսումնասիրվել է դրա ազդեցությունը Հայաստանից դեպի միության երկրները ընթացող արտագաղթի վրա, նկատի ունենալով ձևավորված միգրացիոն ցանցերի առկայությունը:

- Բացահայտել միգրացիոն հոսքերի գործոնները և պատճառները, սոցիալտնտեսական զարգացման ազդեցության առանձնահատկությունները:
- Վերլուծել տրանսֆերտների (*դրամական փոխանցումների*) հոսքերը դեպի Հայաստան, որպես արտագաղթի ուղղակի հետևանք, և ուսումնասիրել դրա դերը Հայաստանի մակրոտնտեսական կայությունը ապահովելու տեսանկյունից:
- Դիտարկել է ՀՀ աշխատանքային միգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական աճի վրա, և դրա հետ կապված մոդելավորման հիմնախնդիրները: Հիմնավորել դետերմինանտների ընտրությունը Սոլոու-Սվենի նոր դասական մոդելի դեպքում:
- Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության աշխատանքային միգրացիայի գործընթացների տեղեկատվական ապահովման հիմնախնդիրները:
- Երկրի տնտեսական զարգացման վրա միգրացիոն գործընթացների ազդեցության գնահատման նպատակով, ուսումնասիրել և վերլուծել Սոլոու-Սվենի նոր դասական տնտեսական աճի ձևափոխված մոդելը, հաշվի առնելով միգրացիոն հոսքերը:
- Ռամսեի նոր դասական տնտեսական աճի մոդելի միջոցով գնահատել, միգրացիոն գործընթացների ազդեցությունը տնային տնտեսությունների օպտիմալ որոշումների ընդունման վրա:
- Բրաունի նոր դասական տնտեսական աճի մոդելի միջոցով վերլուծել միգրացիայի ազդեցությունը տնտեսական աճի վրա և դրա կիրառման հնարավորությունները Եվրասիական Տնտեսական Միությունում և Եվրասիական Միգրացիոն Համակարգում օրինակով:
- Կանխատեսումային մոդելների համեմատական վերլուծություն միջոցով գնահատել միգրացիոն գործընթացների ազդեցությունը տնտեսական աճի վրա

(*տնտեսական աճի և այնպեղ ներառված միգրացիոն հոսքերը բնութագրող գործոնները*):

- Հետազոտել միգրացիոն գործընթացների կանխատեսման մեթոդները, դրանց առանձնահատկությունները ու տեսակները: Վերլուծել միգրացիայի ձևափոխված գրավիտացիոն ընդլայնված մոդելը, դրա կիրառման հնարավորությունները Հայաստանի արտագաղթի հոսքերի գնահատման համար: Հիմնավորվորել այդ մոդելի ընտրության ներքո միգրացիոն մի շարք բացատրող գործոնների հավաքածուները:
- Հիմնվելով Սոլոու-Սվենի ձևափոխված նոր դասական տնտեսական աճի մոդելի վրա, որում հաշվի առնել միգրացիոն հոսքերը, մշակել տնտեսական աճի վրա միգրացիայի ազդեցությունը գնահատող էկոնոմետրիկ մոդել:

Ատենախոսության առարկան և օբյեկտը:

Ատենախոսության հետազոտության **օբյեկտն է** Հայաստանի աշխատանքային միգրացիոն հոսքերը, որոնք ընթանում են երկրի սոցիալ-տնտեսական դինամիկայի փոփոխությունների (*ցնցումների/շոկերի*) ազդեցության ներքո, միևնույն ժամանակ ազդում երկրի տնտեսական վիճակի վրա: Հետազոտության **առարկան է** Հայաստանից արտագաղթի հոսքերի պատճառները, գործոնները, միգրացիոն գործընթացների ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել միգրացիոն գործընթացների, միգրացիայի ազդեցության տնտեսական աճի վրա վերլուծության և գնահատման տարբեր հեղինակների աշխատություններ, գիտական հոդվածներ և ինտերնետային աղբյուրներ: Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության և այլ երկրներում մշակված և կիրառվող տնտեսական ծրագրերը, ուսումնասիրվող խնդիրներին առնչվող ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական գիտական աշխատանքները: Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է ինչպես տեսական, այնպես էլ գործնական ուսումնասիրությունների վրա:

Հետազոտության համար տեղեկատվական հենք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված վիճակագրական տարեգրքերը,

հրապարակումները և այլ հաշվետվություններ, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող դրամական փոխանցումների ցուցանիշները, ՀՀ ֆինանսների նախարարության և տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և արտական իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության, ինչպես նաև մի շարք միջազգային՝ Համաշխարհային բանկի, Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Միավորված Ազգերի Կազմակերպության և այլ կազմակերպությունների պաշտոնական տեղեկատվական նյութերը և հետազոտությունների արդյունքները: Օգտագործվել են այլ երկրների վիճակագրական ծառայությունների պաշտոնական էլեկտրոնային կայքերը:

Հետազոտության մեջ կիրառվել են տնտեսամաթեմատիկական մոդելներ, էկոնոմետրիկ, գրավիտացիոն, վիճակագրական մեթոդներ, գործոնային վերլուծություններ, իսկ արդյունքները ամփոփվել են մոդելային, գրաֆիկական և աղյուսակային տեսքով: Մոդելների գնահատումը, տվյալների մշակումը իրականացվել է օգտագործելով Eviews փաթեթը: Հետազոտության մեթոդաբանական հիմք է հանդիսացել միգրացիայի ձևափոխված գրավիտացիոն ընդլայնված մոդելը, միգրացիոն գործընթացների ազդեցության տնտեսական աճի վրա նոր դասական Սոլոու-Սվէնի տնտեսամաթեմատիկական մոդելը:

Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

- Դիտարկելով Եվրասիական Միգրացիոն Համակարգը Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության համատեքստում, որոշվել է դրա ազդեցությունը Հայաստանից դեպի միության երկրները ընթացող արտագաղթի վրա, նկատի ունենալով ձևավորված միգրացիոն ցանցերի առկայությունը:
- Բացահայտվել են միգրացիոն գործընթացների ազդեցության գնահատման հնարավորությունները նոր դասական տնտեսական աճի մոդելների միջոցով և դրանց կիրառման ձևերը ՀՀ-ում:

- Առաջարկվել է միգրացիաի ձևափոխված գրավիտացիոն ընդլայնված մոդելը, ներկայացվել են դրա կիրառման հնարավորությունները Հայաստանի արտագաղթի հոսքերի գնահատման համար:
- Ձևավորվել է միգրացիոն գործընթացների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա գնահատող էկոնոմետրիկ մոդելը:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, էկոնոմիկայի նախարարության, հետազոտական կառույցների կողմից՝ համապատասխան կանխատեսումային քաղաքականության մշակման, կատարելագործման և իրականացման ուղղությամբ, ինչպես նաև օգտակար լինել ատենախոսությունում առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող տնտեսագետների, ասպիրանտների և ուսանողների համար, նաև խնդրով հետաքրքրված անձանց համար:

Միգրացիաի ազդեցության տնտեսական աճի վրա ցուցանիշների կանխատեսման բնագավառում ատենախոսությունում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները մեթոդական և կիրառական նշանակություն ունեն, և դրանց կիրառության դեպքում, կարող են հիմք հանդիսանալ վստահելի և ճշգրիտ կանխատեսումների իրականացման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակվել են թվով 6 գիտական հոդվածներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության կառուցվածքը բխում է հետազոտության նպատակներից և խնդիրներից: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության 84 անուն ցանկից և

հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 159 (առանց Հավելվածի) մեքենագիր էջ:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

1.1. Հայաստանի ազգաբնակչությունը և նրա միգրացիոն հոսքերը

Ժամանակակից համաշխարհային տնտեսության բնորոշ հատկանիշներից է բնակչության միգրացիան, և, առաջին հերթին, աշխատանքային միգրացիան՝ մարդկանց շարժը, կապված բնակության վայրի և աշխատանքի փոփոխության հետ: Այն ձևավորում է նոր աշխատանքի շուկա և նոր ֆինանսական ու սոցիալական հարաբերություններ: Փորձագետները արդարացիորեն են կոչում անցյալ XX դարը «*Միգրացիայի դարաշրջան*» [1]: Իրավիճակը չի փոխվել և ներկա դարում:

Միջազգային միգրանտների թիվն աճել է՝ 1965թ. 75 մլն մարդուց 2005թ. հասնելով 190 մլն-ի (*United Nations Convention*), իսկ 2014թ. նրանց թիվն արդեն գերազանցում էր 230-240 մլն մարդը: Միաժամանակ, միջազգային միգրանտների թվում՝ 74%-ը աշխատանքային միգրանտներ են [4]:

Աշխատանքային միգրացիայի խնդիրներով զբաղվող փորձագետները նշում են աղքատ երկրներից միգրանտների հոսքի բազմակի ավելացման և «*միգրացիայի մի ամբողջ ինդուստրիայի*» առաջացման մասին, որն զբաղված է մարդկանց միջազգային փոխադրումներով և նրանց աշխատանքի տեղավորմամբ, այդ թվում ապօրինի ճանապարհով [5]: Բնակչության աճող միջազգային շարժին պետությունների արձագանքը եղավ այն, որ պակասեցվեցին մուտքի թույլտվություններն ու խստացվեց հսկողությունը սահմանին [6]: Թեև արդյունաբերապես զարգացած երկրների տնտեսությունն ունի հավելյալ աշխատուժի կարիքը, այնուամենայնիվ, շատ քաղաքական գործիչներ հակված են միգրացիան դիտարկել ավելի շուտ որպես սպառնալիք ազգային անվտանգությանը և ինքնությանը, քան անհրաժեշտ աջակցություն տնտեսական զարգացմանը:

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում բարձր որակավորում ունեցող մասնագետների և բանվորական ներուժի կորուստը տեսանելի ապագայում կարող է հանգեցնել մարդկային կապիտալի չբավարարվող պահանջարկի լուրջ հիմնախնդրի:

Ներկայում գիտնականները մշակել են միգրացիայի մի քանի հայեցակարգեր և տեսություններ, որոնցում փորձում են նկարագրել միգրացիոն գործընթացներն աշխարհում [7]. Այս տեսակետից, տնտեսագիտության կարևոր և արդիական խնդիրներից է ուսումնասիրել և գնահատել միգրացիան, որպես մարդկանց տեղաշարժի գործընթաց, որի հետևանքն է երկրում բնակչության և աշխատուժի թվաքանակի փոփոխությունը, որը տնտեսական աճի կամ դրա զսպման գործոն է հանդիսանում:

Պետք է նկատի ունենալ, որ աշխատատուժի և բնակչության միգրացիան, ոչ միայն տնտեսական, այլ նաև բարդ քաղաքական և սոցիալ-տնտեսական երևույթ է: Այն էապես ազդում է աշխատուժի կառուցվածքի վրա ինչպես այն երկրների, որտեղից դուրս են գալիս միգրանտները (**դոնոր-երկրներ**), այնպես էլ ընդունող (**ռեցիպիենտ-երկրներ**) երկրների համար: Բնակչության միգրացիոն գործընթացները մեծ մասամբ աշխատանքային ռեսուրսների հոսքեր են:

Այն ստեղծում է նոր իրավիճակ աշխատաշուկայում, բերում է բազմաթիվ երկրներում շատ փոփոխությունների (և ոչ միայն դրական) հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում: Ազատ տեղաշարժի պայմաններում միգրացիոն հոսքերն ի զորու են ազդել երկրի զարգացման մեջ առաջացող անհավասարակշռությունների վրա՝ պակաս բարեկեցիկ շրջաններից դեպի ավելի բարեկեցիկները տեղափոխվելու միջոցով: Բնակչության միգրացիան երկրի սոցիալ-տնտեսական գործընթացների հայելին է, ուստի շատ կարևոր է վերլուծել դրա ուղղությունները և դինամիկան: «Մարդիկ քվեարկում են ոտքերով», ուստի միգրացիոն գործընթացները երկրի բարեկեցության արժանահավատ աղբյուր են: Եթե նկատվում է միգրանտների արտահոսք, ապա դա պետք է բնական երկյուղներ առաջացնի իշխանության մոտ:

Միգրացիան ձևավորում է երկրի բնակչության ժողովրդագրական կառուցվածքը, սահմանում տարածաշրջանային և տեղային աշխատաշուկաների վիճակը: Սոցիալ-տնտեսական քաղաքականության հաջող իրականացման համար անհրաժեշտ է

կարողանալ կանխատեսել միգրացիոն հոսքերի մեծությունը և ուղղությունը, իսկ դրա համար հարկ է հասկանալ միգրացիայի առանձնահատկություններն ու այն բնորոշող գործոնները, ինչպես նաև գնահատել միգրացիայի հետևանքները: Դա հնարավոր չէ առանց միգրացիայի մոդելների կառուցման: Ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխներն ուսումնասիրում են միգրացիոն խնդիրներն այս դիրքերից:

Ներկայում միգրացիան ուսումնասիրում են շատ գիտություններ՝ աշխարհագրություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն, ժողովրդագրություն, վիճակագրություն, իրավունք, ազգագրություն և այլն: Այս գիտություններից յուրաքանչյուրը միգրացիան դիտարկում է իր տեսակետից:

Ատենախոսությունում միգրացիան դիտարկելու է որպես ***սոցիալ-տնտեսական գործընթաց՝ երկրի աշխարհաշուկայի, բնակչության կենսամակարդակի և սոցիալ-տնտեսական այլ ցուցանիշների հետ կապերի տեսանկյուններից***: Այս տեսանկյունից է քննարկվում Հայաստանի Հանրապետության միգրացիոն հոսքերը (*արտագաղթ*) և նրա սոցիալ-տնտեսական բնութագրերը և առանձնահատկությունները:

Ներկա պահին շատ չէ այն հետազոտությունների թիվը, որոնք ուսումնասիրում են արտագաղթի և Հայաստանի տնտեսության միջև կապը, միգրացիայի գործոնները հիմնականում սակավ են ուսումնասիրված [7]: Այստեղից էլ առաջ են գալիս խնդիրներ՝ կապված աշխատանքային ռեսուրսների կանխատեսման, սոցիալական ոլորտի, երկրի համար միգրացիայի հետևանքները չհասկանալու, կառավարման հարցերի հետ: Գրեթե բացակայում են միգրացիայի մոդելավորմանը նվիրված ուսումնասիրությունները:

Նման աշխատանքների հրատապությունն ավելի քան ակնհայտ է և թելադրվում է հանրապետությունում ստեղծված՝ արտագաղթով պայմանավորված իրավիճակով:

Հայաստանի անկախացումից հետո, XX դարի 90-ն թվականներից սկսած միգրացիան ձևավորվեց ամենացավոտ պետական հիմնախնդիրը, չնայած նրան, որ Հայաստանը մի երկիր է, որը ունի միգրացիայի երկար պատմություն:

Վերջին 5 դարերի ընթացքում Հայաստանը մշտապես եղել է զգալի միգրացիոն հոսքերի վայր: 16-17-րդ դդ. միգրացիաները հիմնականում բռնի են եղել, այսպես, 16-րդ դարավերջին օսմանցիները բռնի տեղահանել են (*իրենց մոտ են տարել*) մոտ 50-100

հազար հայ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքից: Մի փոքր ավելի ուշ՝ 17-րդ դարասկզբին, շահ Աբասն իրականացրեց ողջ բնակչության (ինչպես հայ, այնպես էլ մուսուլման) բռնի տեղահանությունը ներկայիս Հայաստանի տարածքից: Այդ ժամանակ տեղահանվեց մոտ 250-300 հազար մարդ, որոնց 20%-ը զոհվեց գաղթի ճանապարհին, մի մասն էլ ուծացվեց (*դադարեցրեց գոյությունը*) Իրանում¹:

Հաջորդ հարյուրամյակի ընթացքում արգելված էր վերադառնալ նախկին բնակության վայրեր: 18-րդ դարավերջին շահը, բազմաթիվ ցնցումների (*մանսավորապես Երևանի անկումը* 1724թ.), ինչպես նաև Իրանի հյուսիսային սահմանների պաշտպանության նպատակով Սեֆյանների կողմից որոշ քոչվոր ցեղերի վերաբնակեցումների արդյունքում Արևելյան Հայաստանի (*այն ժամանակ՝ Էրիվանի և Նախիջևանի խանություններ*) բնակչությունը հասավ մոտ 50 հազարի, որից 6 հազարը Երևանի բնակչության թիվն էր: Համաձայն Օթար Թեթվաձեի «Հայերը Վրաստանում» գրքի [9]՝ 1804-1808թթ. ընթացքում Երևանի խանությունից Թբիլիսի և մերձակա բնակավայրեր է տեղափոխվել մոտ 4000 հայ քրիստոնյա:

Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելու պահին Հայաստանի բնակչությունը մոտ 70 հազար էր, որից 30 հազարը՝ հայեր և մուսուլմաններ, 10 հազարը՝ շահի զորքն ու շահական անձնակազմը: Այդ ժամանակ էլ հայերն սկսեցին Իրանից վերադառնալ Հայաստան: Շատ իրանահայեր վերադարձան 19-րդ դարի ընթացքում՝ այդպիսով կազմավորելով մեծ միգրացիոն հոսքեր: Հայոց ցեղասպանությունը և թուրքական իշխանությունների համապատասխան քաղաքականությունը նույնպես Արևմտյան Հայաստանից դեպի ՀՀ տարածք միգրացիայի պատճառ դարձան:

Արդեն խորհրդային ժամանակաշրջանում կազմակերպվեց հայրենադարձության մի քանի ակիբ, այդ թվում 20-ական, 40-ական և 60-ական թթ., երբ Հայկական ԽՍՀ վերադարձան հայեր Ֆրանսիայից, Իրանից և այլ երկրներից: 40-ականներին գաղթածների դեմ կիրառված բռնաճնշումներն առաջ բերեցին նրանց հետադարձ հոսքը 50-ական թթ., և հայրենադարձության հաջորդ ակիբը զգալիորեն ավելի փոքր

¹ 1800-1850թթ. Արևելյան Հայաստանի և Երևանի բնակչության թեմայի վերաբերյալ տե՛ս Իրանիկա հանրագիտարանի հոդվածը, <http://www.iranica.com/newsite/articles/v8f5/v8f561.html> և Գ.Սարգսյանի «Արևելյան Հայաստանի բնակչությունը...» գրքի սեղմագիրը, <http://www.demoscope.ru/weekly/2005/0203/biblio05.php>, ինչպես նաև Iatp.am: Население Армении 1828-1999, <http://www.iatp.am/economics/migr/demo-1e.htm>

էր: Արտասահմանից հայրենադարձության վերջին ալիքից հետո արդեն Հայաստան սկսեցին տեղափոխվել հայեր ԽՍՀՄ այլ շրջաններից, գերազանցապես Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներից. այսպես, միայն 1963-1967թթ. նրանց թիվը կազմեց 48.3 հազար [10]:

1980-ականներին սկսվեց բնակչության արտահոսքը Հայկական ԽՍՀ-ից. նրանց մեջ կային թե՛ այլ երկրների սփյուռքի հետ կապ ունեցող հայեր, թե՛ սփյուռքի հետ կապ չունեցող Հայաստանի բնակիչներ :

Սկսած 1979թ. մարդահամարից՝ կարելի է դիտարկել բնակչության կազմում այն անձանց թվաքանակն ու տեսակարար կշիռը, ովքեր չեն փոխել մշտական բնակության վայրը ծնված օրվանից, և ովքեր մշտական բնակության վայրում ապրում են ոչ ծնված օրվանից, այսինքն՝ միգրանտներ են: Իսկ 1970թ. մարդահամարի տվյալներն առաջին անգամ հանգամանալիորեն արտացոլում են միգրանտների թվաքանակը: Այդ տվյալներով կարելի է դիտարկել հանրապետության միգրացիոն կապերը ԽՍՀՄ այլ հանրապետությունների հետ, ինչպես նաև ներհանրապետական միգրացիան և դրա դերը բնակչության ձևավորման գործում:

1988-1989թթ. ԽՍՀՄ սահմաններից դուրս Հայկական ԽՍՀ-ից հեռացել է ավելի քան 30 հազար մարդ: Այդ նույն ժամանակ ՌԽՖՍՀ մեկնեցին Սպիտակի երկրաշարժից տուժածները և Բաքվից ներգախթաց հայերը, ովքեր Հայաստանում էին հայտնվել Բաքվի ջարդերից և Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ բնակչության փոխանակումից հետո [11]:

Բայց ամենամեծ միգրացիոն ալիքը սկսվեց շրջափակումից և ԽՍՀՄ փլուզումից հետո: Խորհրդային Միության փլուզման և շուկայական հարաբերությունների ձևավորման սկզբից (*անցումային շրջան*), թե կանոնավոր, և, հիմնականում, անկանոն արտագաղթը շարունակում է մնալ կարևոր երևույթ, որը ազդում է երկրի բոլոր կողմերի վրա: Հայաստանը, այդ ընթացքում տեսավ մի քանի արտագաղթի հոսքեր, պայմանավորված տարբեր պատճառներով:

Հայերի զանգվածային տեղափոխությունները 20-րդ դարավերջին պայմանավորված էին նախ և առաջ 1988-1992թթ. Ադրբեջանից փախստականների հոսքով: Այնտեղ ապրող մոտ 1.5 մլն հայեր, փորձելով փրկվել կոտորածից ու ջարդերից,

տեղափոխվեցին Հայաստան, Ռուսաստան և այլ երկրներ: Փախստականների ադապտացիան Հայաստանում երկար տարիներ տևեց: Նոր կազմավորված հայկական պետությունը պատրաստ չէր լուծել նման ծավալուն խնդիր՝ տեղավորել 360 հազար փախստական Ադրբեջանից: Բացի այդ հանուն Ղարաբաղի անկախության երկիրը փաստացի պատերազմական վիճակի մեջ էր: Չնայած դրան՝ իշխանությունները փախստականների հանդեպ պետական քաղաքականություն մշակեցին՝ ստանձնելով նրանց լիակատար ինտեգրման ուղեգիծը: Համաձայն ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի վարչության (ՓՀԳՀՎ) տվյալների [12]՝ այդ ժամանակ Հայաստանում կար 264.3 հազար փախստական Ադրբեջանից: Հաջորդ տասը տարիներին նրանց մի մասը՝ մոտ 150 հազար մարդ, ընդունեց ՀՀ քաղաքացիություն, իսկ մյուս մասը հեռացավ երկրից՝ աշխատանք և ավելի բարեկեցիք կյանք փնտրելու:

Առանձնապես աղետալի իրավիճակ ստեղծվեց 90-ականների սկզբին: Երկար ժամանակ չէր հաջողվում հաշվարկել միգրացիայի չափերն 90-ականներին. տվյալներն անբավարար էին: Բավական հուսալի վիճակագրություն դարձավ երկիր մտնողների և երկրից հեռացողների (տրանսպորտի բոլոր միջոցներով) հաշվառումը հսկիչ-անցագրային կետերից: Այսպես, 1992թ. արտագաղթել է 228.6 հազար մարդ, 1993թ.՝ 141.1, 1994թ.՝ 127.8 հազար²: Երեք տարվա ընթացքում հանրապետությունը լքել է կես միլիոն մարդ, իսկ հինգ տարվա ընթացքում՝ 1991-1995թթ., Հայաստանից հեռացել է 800-900 հազար մարդ [13], ինչը կազմում էր հանրապետության բնակչության մոտ **մեկ երրորդը**: Հայաստանից հեռացողների հոսքերը հիմնականում ուղղվում էին դեպի Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա: 2001թ. մարդահամարի տվյալներով՝ երկրի բնակչության թիվը մոտ 3.2 մլն մարդ էր³: Արևմտյան Եվրոպայում հայ միգրանտները, որպես կանոն, փորձում էին հաստատվել Գերմանիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Իսպանիայում և Լեհաստանում [14]:

Շատերը հեռանում էին առանց պաշտոնական փաստաթղթեր ձևակերպելու: Սկզբում նրանք նախատեսում էին երկրից հեռանալ կարճ ժամանակով, փող վաստակել և վերադառնալ: Բայց ճնշող մեծամասնությունն այդպես էլ չվերադարձավ:

² Ժողովրդագրական տարեգրքից, Միգրացիա բաժին. http://armstat.am/file/article/demos_08_7.pdf

³ ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, 2002:

Ոչ մեծ մասը համալրեց սեզոնային միգրանտների շարքերը, ովքեր պարբերաբար մեկնում էին արտագնա աշխատանքի (*գերազանցապես Ռուսաստան, Ղազախստան, Ուկրաինա, Բելառուս, Ուզբեկստան*), իսկ հետո վերադառնում էին հայրենիք:

Հայերը հակված են եղել տեղաշարժերի՝ բարձր անձնային-ադապտիվ հատկանիշներով պայմանավորված, որոնք նրանց թույլ էին տալիս արագ և դյուրին հարմարվել նոր բնակության վայրում: ԽՍՀՄ փլուզումից, անկախության և ազատ տեղաշարժելու իրավունքի ձեռքբերումից հետո հայերը, ապրուստ ապահովելու նպատակով, ձգտում էին դեպի Ռուսաստան և այլ երկրներ, որտեղ նրանք արդեն վաղեմի գործնական շփումներ և անգամ ազգակցական կապեր ունեին տեղի հայկական սփյուռքի հետ:

Հարավային Կովկասում, գլոբալ միտումների ֆոնին, առանձնահատուկ միգրացիոն գործընթացներ են նկատվում: Հարավային Կովկասը ժամանակակիցների աչքերի առջև փոխում է իր ավանդական պատմական կերպարը: Անցած հարյուրամյակի վերջին տասնամյակի հիմնական փոփոխությունները Հայաստանի և ընդհանրապես Հարավային Կովկասի համար արմատական այն փոփոխությունները եղան, ինչպիսին են բնակչության դեպոպուլյացիան և մոնոէթնիկացումը մասշտաբային հարկադիր էմիգրացիայի պատճառով: Դեպոպուլյացիայի՝ պատմության մեջ աննախադեպ գործընթացը Հարավային Կովկասի երկրներում Խորհրդային Միության փլուզման և շուկայական տնտեսության անցման բազմաթիվ բացասական հետևանքներից մեկն էր: Մոտ երեք միլիոն մարդ լքեց Հարավային Կովկասի երկրները:


Ընդհանուր առմամբ, ժողովրդագրական իրավիճակը բնութագրող հիմնական գործոններից են բնական վերարտադրության գործընթացները և միգրացիոն հաշվեկշռը (*սալդոն*): Երկու դետերմինանտների և դրանց միտումների տեսակետից էլ Հայաստանում ներկայումս իրավիճակը վատ է: Արտագաղթը հասել է վտանգավոր աստիճանի:

Հայաստանը դարձավ աշխատուժ և որակյալ կադրեր արտահանող երկիր: Աշխատանքային ռեսուրսների արտահանումը, տնտեսապես ակտիվ բնակչության մեծ

ծավալներով արտահոսքն էապես փոխեցին արդի հայ հասարակության սոցիալ-
ժողովրդագրական կառուցվածքը:

Դեռևս 1897 թվականին Ռուսաստանի Կայսրության կողմից անցկացված
մարդահամարի համաձայն՝ Հայաստանում բնակվել է 798 հազար մարդ: 1926 թվականի
մարդահամարի արդյունքներով Խորհրդային Հայաստանի բնակչությունը կազմել է 881
հազար մարդ: Խորհրդայնացումից հետո Հայաստանի բնակչության թվաքանակը
կտրուկ աճել է՝ ավելի քան 3 անգամ: 1979-ին Հայաստանի բնակչությունը գերազանցել է
3 միլիոն մարդը, իսկ 1991-ին հասել է իր առավելագույն մակարդակին՝ **3.6 միլիոն մարդ:**

Հայաստանի մարդահամարի արդյունքները, որոնք իրականացվել են տարբեր
տարիներ, թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի բնակչության աճը զգալի էր
հենց Խորհրդային Միության կազմի մեջ: Եթե, ամբողջ ԽՍՀՄ մասշտաբով 1987
թվականին բնակչությունը համեմատ 1940 թվականի հետ աճել էր 45%, ապա
Հայաստանում՝ 2.6 անգամ (*գծապատկեր 1*): Խորհրդային Հայաստանը
առանձնանում էր բարձր ծնելիությամբ և ամենացածր մահացության մակարդակներով:
Նրա բնակչությունը ավելացել էր նաև արտասահմանյան հայրենակիցների
հայրենադարձության և հարևան երկու հանրապետություններից ներհոսքի շնորհիվ:
Եթե համաձայն 1926 մարդահամարի ԽՍՀՄ ապրող բոլոր հայերից, Հայաստանում
ապրում էր 47.7%, ապա 1979 թվականի մարդահամարի համաձայն՝ գրեթե 66%
(*գծապատկեր 1*).



Աղբյուր: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Գծապատկեր 1. Հայաստանի ազգաբնակչության թվաքանակի դինամիկան
1897 և 2016 թվականների միջև

Բնորոշ էր այն փաստը, որ չնայած նման մեծ թվով աշխատանքային ռեսուրսների մուտքի, գործազրկությունը բացառվում էր: Այսպես, եթե ԽՍՀՄ 1987 թվականին, համեմատ 1940 թվականի հետ աշխատողների (*բանվոր և ծառայող*) թվաքանակը ավելացել էր 3.5 անգամ, ապա Հայաստանում՝ 9.3 անգամ: Հայաստանը առանձնանում էր արդյունաբերության զարգացման ամենաբարձր ցուցանիշներով, քաղաքային բնակչության աճով: Ստեղծվում էին նոր արդյունաբերական կենտրոններ, և գրեթե բոլոր շրջկենտրոնները վերածվեցին քաղաքների:

Սակայն, Խորհրդային Հայաստանի կողմից ձեռք բերած բոլոր ժողովրդագրական, սոցիալտնտեսական, գիտատեխնիկական և արդյունաբերական ձեռքբերումները ամբողջությամբ կորցվեցին անկախության հենց առաջին տարիներին: Դրա արդյունքներից էր, որ քաղաքային բնակչությունը կտրուկ անկում գրանցեց: Վերջին երկու տասնամյակների համար բնութագրական է ոչ միայն քաղաքային բնակչության թվաքանակի կրճատումը, այլև ապաուրբանացման գործընթացի աճը: Քաղաքային բնակչության բաժինը, որը, 1989թ. մարդահամարի տվյալներով, հասել էր 67%-ի, կրճատվեց 63%-ի: Առավել տուժեցին աղետի գոտու քաղաքները և նոր արդյունաբերական կենտրոնները: Եթե մենք բացառենք Երևանը, որտեղ բնակչությունը մնում է 1-1.1 մլն մարդ սահմաններում, ապա այլ քաղաքներում բնակչությունը գրեթե երկու անգամ կրճատվել է:

1990-ն թվականների արտագաղթը մեծ ազդեցություն ունեցավ Հայաստանի աշխատուժի առաջարկի վրա. այն ընդգրկել էր ավելի կրթված, ավելի հմուտ աշխատողներին, լուրջ ազդեցություն ունենալով աշխատուժի մասնագիտական կառուցվածքի վրա:

Կտրուկ աճեց տիտղոսակիր ազգության բնակչության բաժինը: Եթե 50 տարում՝ 1939-1989թթ., այն ավելացել էր 10 տոկոսային կետով՝ 83-ից հասնելով 93%-ի, ապա վերջին 20 տարում՝ 21-րդ դարի առաջին տասնամյակի վերջին, այն կազմում էր արդեն 98%՝ մոտենալով ազգային հատկանիշով միատարր այնպիսի պետության ցուցանիշին, ինչպիսին Ճապոնիան է:


Ներկայում հանրապետության մշտական բնակչության թվաքանակն արդեն մի փոքր ավելի պակաս է, քան XX դարի 70-ական թվականների վերջում:

Սկսած 2000-ականների առաջին կեսից՝ արտագաղթի հետ կապված իրավիճակը Հայաստանում ժամանակավորապես փոխվեց այն առումով, որ այն զգալի չէր: Դրան նպաստել էր այն, որ Հայաստանի տնտեսությունը բավական արագ էր աճում (2000-2007թթ. ՀՆԱ աճը հաճախ գերազանցում էր 13%-ը): 2002-2007թթ. իրական աշխատավարձի ինդեքսն աճեց 147.6%-ով, այսինքն՝ 2.5 անգամ: Կենսամակարդակը մնում էր բավական ցածր, բայց Հայաստանն ***առաջանցիկ զարգացման*** երկրի տպավորություն էր թողնում, և զարգացման նման տեմպերի շարունակման դեպքում, թվում էր, կարելի կլիներ բավական արագ հաղթահարել հետ մնալը: Հենց 2007թ. Հայաստանը «ճանաչվեց» «Կովկասյան վագր»⁴ Համաշխարհային բանկի կողմից (գծապատկեր 2):

Արդյունքում՝ այդ ընթացքում ներգաղթը անգամ գերազանցել է արտագաղթը (սույն պարագայում խոսքն ավելի շուրջ պետք է վերաբերի նրանց վերադարձի միգրացիային, ովքեր հեռացել էին մինչև այդ): 2002 թվականից սկսած (մինչև 2009թ.) ավելի քան 55,000 միգրանտ է վերադարձել Հայաստան և որոշել արտերկիր չմեկնել:

Սակայն 2007 թվականից հետո արտագաղթը Հայաստանից նորից սկսեց աճել: 2008-2016թթ. նետոտո-արտագաղթի ընդհանուր ծավալը, համաձայն սահմանը հատելու թվի մասին սահմանին կատարված հաշվառման տվյալների, կազմել է մոտ 300-320 հազար մարդ: Կարելի է փաստել, որ վերջին տարիներին հանրապետության միգրացիոն կորուստները կայունացել են և կազմում են տարեկան մոտ 42-43 հազար մարդ, որը կազմում է փաստացի բնակչության 1%-1.6%-ը:

⁴ ՀԲ մասնագետները «վագր» անվանում են այն երկրները, որոնցում 10 տարվա ընթացքում նկատվում է տնտեսության երկնիշ աճ: «Վագրային տնտեսության» վկայությունն է համարվում նաև բնակչության աղքատության մակարդակի կտրուկ իջեցումը:



Գծապատկեր 2. ՀՀ միգրացիոն սալըն և գումարային սալըն, ՀՆԱ տարեկան աճը և գործազրկության մակարդակը, 2000-2013 թթ.

Աղբյուր. ՀՀ ԱՎԾ, <http://www.armstat.am/am/?nid=126&id=08010> (գործազրկության մակարդակը)

Արտագաղթի աշխուժացումը կապված էր մի քանի գործոնների հետ, որոնց թվում համաշխարհային տնտեսական ճգնաժամը կենտրոնական տեղն է զբաղեցնում: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով 7 տարում (2009-2015թթ.) Հայաստանի տնտեսության աճը կազմել է 24%, տարեկան միջինը 4%: Ֆինանսական ճգնաժամից հետո, 2009թ. Հայաստանը դեռևս չկարողացավ վերականգնել տնտեսության 2008թ. ծավալների մակարդակը (11.7 մլրդ դոլար): 2009-2015թթ. իրական աշխատավարձի ինդեքսն աճեց ընդամենը 12.6%-ով: ավելացավ գործազրկությունը՝ կազմելով 18.5%: Դա էապես անդրադարձավ հասարակության բարեկեցության վրա: Հայաստանի տնտեսության անկումն ավելի խորն էր, քան այն երկրներինը, դեպի ուր ուղղվում էին հիմնական միգրացիոն հոսքերը:

Սակայն ճգնաժամն, այնուամենայնիվ, 2012թ. հաղթահարվեց Հայաստանի տնտեսության կողմից, երկիրը, թեև համեմատաբար դանդաղ, բայց բավական կայուն աճ գրանցեց: Հայաստանում տեղի չունեցավ պետական ինստիտուտների հետընթաց, ընդհակառակը, դրանք սկսեցին ավելի արդյունավետ աշխատել: Թվում էր՝ արտագաղթը պետք է նվազի: Բայց զանգվածային արտագաղթի հետ կապված

իրավիճակը Հայաստանում շարունակում է մնալ բարդ: 2017թ. և հաջորդ տարիների համար Հայաստանից արտագաղթի նվազում չի կարելի կանխատեսել: Հիմնական պատճառն այն է, որ **արտագաղթի հիմնարար պատճառները** վերացված չեն, միգրացիային նպաստող գործոնները դեռ գործում են: Այդ գործոնները ավելի մանրամասն կներկայացվեն 1.3 կետում:

Հայաստանը հանդիսանալով ԵԱՏՄ անդամ և դոնոր-երկիր, ներառված է Եվրասիական միգրացիոն համակարգում, որը բնութագրվում է լայնածավալ միգրացիոն հոսքերով և կայուն աշխարհագրական կողմնորոշմամբ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ միգրանտների մոտ 85% և ավելին մեկնում է Ռուսաստան և ԵԱՏՄ այլ երկրներ: ՄԱԿ գնահատականով՝ Ռուսաստանը, որը հիմնական ընդունող կողմն է հետխորհրդային տարածքում, ԱՄՆ-ից հետո աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցնում ներգաղթյալների թվով:

1.2 Եվրասիական միգրացիոն համակարգը և միգրացիոն ցանցը

ԻՍՀՄ փլուզումից հետո առանձին ինքնուրույն պետությունների կազմավորումը ներպետական, միջհանրապետական մակարդակի միգրացիայի հոսքերը տեղափոխեց միջազգային մակարդակ: Միջազգային միգրացիոն հոսքերը նոր ձև ստացան հետխորհրդային տարածքում՝ ամբողջ տարածաշրջանում տնտեսական և սոցիալական փոփոխությունների կարևորագույն գործոն դառնալով: Հարկադրված, մեծ մասամբ՝ էթնիկ միգրացիաները վերացան, միգրացիոն գործընթացները սկսեցին պայմանավորվել տնտեսությամբ և իրականացվող բարեփոխումներով:

ԻՍՀՄ փլուզումից և շուկայական հարաբերությունների անցումից հետո, պայմանականորեն, առանձնացված հանրապետություններում, ըստ համակարգային ռեֆորմների իրականացման եղանակի, պետությունները կարելի է բաժանել երեք խմբի. 1) «արմատականներ» (Բալթյան պետություններ, Ղրղզստան, Ղազախստան, Ռուսաստան); 2) «պահպանողականներ» (Ուզբեկստան, Թուրքմենստան և Բելառուս); 3) «միջանկյալ խումբ» (Մոլդովա, Ուկրաինա, Տաջիկստան, Վրաստան, Հայաստան և Ադրբեջան): Պայմանականորեն, «արմատականներին» կարելի է դասել այն երկրները,

որոնք կիրառել են գերազանցապես «շուկային թերապիայի» մեթոդները: «Պահպանողականներն» օգտագործում էին շուկայական տնտեսության անցման ավելի զգուշավոր միջոցներ: «Միջանկյալ երկրներին» ավելի ընդլայնված խմբում համապատասխանաբար այն երկրներն էին, որոնք վերափոխումներն իրականացնում էին «արմատականներից» ավելի դանդաղ, բայց «պահպանողականներից» ավելի արագ:

Նման պայմանական խմբավորման միակ նպատակը դրա համադրումն է ըստ աշխատանքային միգրացիայի արդյունավետության դասակարգման հետ: «Արմատական» երկրներն աշխատանքային միգրացիայի հարաբերակցության տեսանկյունից միատեսակ չեն. Ռուսաստանը և Ղազախստանն ընդունում են միգրանտների, իսկ Ղրղզստանը միգրանտներ է տալիս արտասահմանին: Փորձագիտական հաշվարկների համաձայն՝ Ռուսաստանում աշխատանքային միգրանտների մուտքը (աշխատանքային ներգաղթ) 12 անգամ գերազանցում է ելքը (աշխատանքային արտագաղթ), իսկ Ղազախստան՝ 10 անգամ: Ղրղզստանում հակառակ հարաբերակցությունն է. այստեղ աշխատանքային միգրանտների ելքը գերակշռում է մուտքի հանդեպ: ԱՊՀ երկրների «միջանկյալ խումբը» միգրացիոն առումով ավելի միատեսակ է: Մոլդովայում և Տաջիկստանում արտագաղթողների և ներգաղթողների հարաբերակցությունը 1:40-ի և 1:600-ի է: «Պահպանողական» պետությունների մեջ կան ակներև միգրացիոն դոնորներ՝ Ուզբեկստանը և Բելառուսը, և աշխատանքային միգրացիայի տեսակետից գրեթե մեկուսացված մի երկիր՝ Թուրքմենստանը:

Որոշակիացվել են ընդունող (ռեցիպիենտ) երկրները, որոնցում սկսվել է աշխատուժի հոսքը՝ Ռուսաստան, Ուկրաինա և Ղազախստան, ինչպես նաև այն պետությունները, որտեղից ծագել են միգրանտները, դոնոր երկրները՝ Ուզբեկստանից, Տաջիկստանից, Ղրղզստանից, Ադրբեջանից, Հայաստանից, Վրաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Բելառուսից: Բացի այդ, որոշ երկրների՝ Ռուսաստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի տարածքները տարանջիկ են դարձել: Այսպիսով, կարելի է նշել բազմապլանության, հետխորհրդային տարածքի որոշ երկրներում դերերի համակցման մասին: ԽՍՀՄ

փլուզումից հետո անցած ժամանակաշրջանում ԱՊՀ-ում և ԵԱՏՄ-ում ձևավորվել են **բազմաթիվ, կայուն և բազմազան** միգրացիոն հոսքեր, որոնք ձևավորել են միասնական միգրացիոն տարածքի հիմքը՝ **Եվրասիական միգրացիոն համակարգը** (ԵՄՀ): Պայմանականորեն, Խորհրդային Միության միգրացիոն հոսքերը կարելի է դիտարկել որպես խոշոր միգրացիոն համակարգ:

Միգրացիոն համակարգերի տեսությունը կիրառում է համակարգային մոտեցում միգրացիոն հոսքերի էության և բազմազանության մեկնաբանման հանդեպ: Քանի որ կայուն միգրացիոն հոսքերի ձևավորումը ստեղծում է մի ինչ-որ միասնական տարածք (*միգրացիոն համակարգ*), որը ներառում է ելքի և մուտքի երկրները, դրա դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել համակարգն ամբողջությամբ: Միգրացիոն համակարգը հանգեցնում է կառուցվածքային ձևափոխությունների՝ միգրանտների մուտքի և ելքի պետություններում՝ վերարտադրելով միգրացիոն հոսքերի ուղղությունը և տալով այդ հոսքերին կայունություն: «*Եվրասիական միգրացիոն համակարգ*» տերմինը առանձնացնում է միգրացիոն կապերի այն համակարգային հատկանիշները, որոնք թույլ են տալիս բնութագրել հետխորհրդային Եվրասիան, որպես միասնական միգրացիոն համակարգ [15]:

ԵՄՀ առանձնահատկությունը թույլ է տալիս առանձնացնել **դրա ձևավորման և գործառնության հեղինակ գործոնները**.

1. *Պատմական գործոնները* կապված են այն բանի հետ, որ հետխորհրդային տարածքի երկրների միջև միգրացիոն հոսքերի ներկա միտումները մեծ մասամբ երկար պատմական անցյալ ունեն: Ի տարբերություն խոշոր միգրացիոն համակարգերի մեծ մասի, որոնք ձևավորվել են որպես *երկրների միջև* տնտեսական, քաղաքական, մշակութային և, վերջապես, միգրացիոն փոխգործակցության արդյունք, ներկայիս Եվրասիական միգրացիոն համակարգի կայացման պայմանները ձևավորվել են գերազանցապես մեկ երկրի՝ Ռուսական կայսրության, իսկ ավելի ուշ՝ Խորհրդային Միության շրջանակներում:

Պատմական գործոնների թվին կարելի է դասել ռուսերենի տարածվածությունը ԱՊՀ երկրների քաղաքացիների շրջանում, ինչը մեծ դեր է խաղում միգրացիայի ռուսական վեկտորի ձևավորման գործում:

2. *Տնտեսական գործոններ*: Արդի ԵՄՀ-ում միգրացիայի տնտեսական գործոնները գերիշխող են հանդիսանում: Նոր ինքնիշխան պետությունների տնտեսությունների անցումը շուկայական ձևերի ամենուրեք հեշտ տեղի չի ունենում, բայց կենսամակարդակի և տնտեսական հնարավորությունների, ինչպես նաև աշխատաշուկայի իրավիճակներում մինչ այդ գոյություն ունեցող տարբերություններն առանձին երկրների բնակչության համար ճգնաժամային տարիներին առանձնապես ակներև են դրսևորվում: Հենց դրանք են գործի դրել ԱՊՀ պետությունների միջև տնտեսական միգրացիայի մեխանիզմը: Տաջիկստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Մոլդովայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի միլիոնավոր տնային տնտեսությունների համար վաստակ ունենալն այլ երկրներում, նախևառաջ՝ Ռուսաստանում, գոյատևման ռազմավարության կարևոր գիծն են դարձել:

3. *Քաղաքական գործոնները* կարևոր, թեև երբեմն ոչ միանշանակ դեր են խաղում Եվրասիական միգրացիոն համակարգի ձևավորման մեջ: Հետխորհրդային տարածքում տարածաշրջանային միությունների գոյությունը, առաջին հերթին՝ այնպիսիք, ինչպիսին են ԱՊՀ-ն և ԵԱՏՄ-ն, կառուցակցում է ոչ միայն քաղաքական և տնտեսական փոխհարաբերությունները մասնակից երկրների միջև, այլև հանդիսանում է միասնական մոտեցումների մշակման ասպարեզ այդ երկրները միավորող արդի միգրացիոն հոսքերի պլյուսներն ու մինուսները հասկանալու և դրանց կառավարման փոխընդունելի մեխանիզմներ ձևավորելու համար:

Բնակչության տեղաշարժի անվիզա ռեժիմի պահպանումը և միասնական աշխատաշուկայի ստեղծումը ներկայում, գուցե, ամենաամուր օղակն է, որը շաղախում է հարաբերություններն ԱՊՀ երկրների միջև:

4. ԵՄՀ ձևավորման *ժողովրդագրական գործոնները* կանխորոշվում են նախևառաջ առկա ժողովրդագրական անհավասարակշռությամբ նախկին ԽՍՀՄ երկրների միջև. Ռուսաստանում և Ուկրաինայում բնակչությունը սրընթաց նվազում է և ծերանում, ինչն այժմ արդեն դրսևորվում է աշխատանքային ռեսուրսների անբավարարությամբ արտադրության շատ ոլորտներում, այն դեպքում, երբ աճում է բնակչության թվաքանակը և երիտասարդներն էլ գերակշռում են Կենտրոնական Ասիայի հանրապետություններում:

5. Հոգեբանական գործոններ. Սահմանների հարաբերական «թափանցիկությունը» հետխորհրդային պետությունների միջև և ազգակցական, հուզական, մասնագիտական ու բազմաթիվ այլ կապերի առկայությունը հատուկ հոգեբանական գործոններ են ստեղծում (*միգրացիոն ցանցեր*), որոնք դյուրինացնում են միգրացիոն շարժը Եվրասիական միգրացիոն համակարգի ներսում:

6. Սոցիալ-տնտեսական գործոնները կապված են նախ և առաջ հետխորհրդային տարածքի պետությունների ընդհանուր պատմական անցյալի հետ:

7. Աշխարհագրական գործոնները զգալի դեր են խաղում ԵՄՀ-ում: Հետխորհրդային տարածքի պետությունների աշխարհագրական մերձությունը՝ լրացված պետական սահմանների հարաբերական «թափանցիկությամբ» և միասնական տրանսպորտային ենթակառուցվածքի գոյությամբ, էապես թեթևացնում է մարդկանց տեղաշարժը երկրների միջև:

Հետևյալ **հատկանիշները** թույլ են տալիս հետխորհրդային Եվրասիան բնութագրել որպես *միասնական տնտեսական համակարգ*.

1. Կայուն միգրացիոն հոսքերի առկայությունը նախկին միութենական հանրապետությունների միջև: Այդ միգրացիոն հոսքերի կառուցվածքը ժամանակի հետ փոխվում է, դրանք ընդամենը մասամբ են արտացոլվում վիճակագրության մեջ, բայց դրանց զանգվածայնությունն անկասկած է:

2. ԵՄՀ-ի մեջ մտնող երկրների միջև գոյություն ունեն ամուր տնտեսական, մշակութային, քաղաքական կապեր, ինչը կապված է ընդհանուր պատմական անցյալի և միասնական երկրի շրջանակներում երկարատև գոյություն ունենալու հետ: Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների (ինչպիսին են ԵԱՏՄ-ն և ԱՊՀ-ն) ներկայիս գոյությունն ամրապնդում է հարաբերությունները երկրների միջև: Մասնավորապես, կատարվում են մասնակից երկրների միասնական աշխատաշուկայի ձևավորման մեխանիզմների որոնման աշխատանքներ:

3. Միգրացիոն հոսքերը հիմնականում ուղղվում են դեպի Ռուսաստան, որը հանդես է գալիս որպես ԵՄՀ կենտրոն: Դա, առաջին հերթին, կապված է այն բանի հետ, որ՝ Ռուսաստանը տնտեսապես գերազանցում է նախկին ԽՍՀՄ մյուս երկրներին տնտեսական պոտենցիալով և աշխատաշուկայի մասշտաբով: Ժողովրդագրական

առումով Ռուսաստանը նույն քանակական և կառուցվածքային փոփոխություններին է ենթարկվում, որոնք երկիրը կախվածության մեջ են դնում օտարերկրյա աշխատուժի ներգրավումից; քաղաքական առումով Ռուսաստանը շահագրգռվածություն է ցուցաբերում հետխորհրդային տարածքում ինտեգրացիայի ամրապնդման հանդեպ:

4. Կենտրոնական Ասիայի հետխորհրդային պետությունների համար միգրանտների ձգողականության նոր կենտրոն է դառնում Ղազախստանը, ինչը թույլ է տալիս խոսել ավելի խոշոր Եվրասիական համակարգի շրջանակներում *ենթադարաձառյանային միգրացիոն համակարգի* ստեղծման մասին: Մինչև նույն ժամանակ, մենք սահմանում ենք ***Կենտրոնաասիական միգրացիոն ենթահամակարգ***, որը ԵՄՀ մասն է հանդիսանում՝ Ղազախստան կենտրոնով:

5. Ընդհանուր լեզվի առկայությունը հետխորհրդային տարածքում էապես ընդլայնում է աշխատանքային միգրացիայի հնարավորությունները տարածաշրջանում:

6. Ակնհայտ է Ռուսաստանի և Ղազախստանի՝ միգրացիայով փոխադարձ հետաքրքրվածությունը՝ մի կողմից, և միգրանտներ մատակարարող երկրներինը՝ մյուս կողմից: Այդ հետաքրքրվածությունը հիմնված է ստեղծված ժողովրդագրական և տնտեսական միտումների վրա և ապահովում է անվիզա ռեժիմի պահպանումը տարածաշրջանի երկրների մեծամասնության միջև:

7. Աշխարհի միգրացիոն պատկերը փոփոխական է: Միասնական Եվրասիական միգրացիոն համակարգի շրջանակներում հետխորհրդային տարածքում միջպետական միգրացիայի ընկալման գործնական իմաստը միգրացիոն քաղաքականության ձևավորման նոր հնարավորություններն են՝ երկկողմանի և բազմակողմանի հիմունքներով: Հանձին Ղազախստանի աշխատանքային միգրանտների ձգողականության նոր կենտրոնների ի հայտ գալը վկայում է այն մասին, որ միգրացիոն հոսքերի ուղղությամբ ԵՄՀ-ն կարող է դիվերսիֆիկացվել: Այս պայմաններում ռազմավարական առումով ազգային մակարդակում փորձարկված և ստուգված միգրացիոն քաղաքականության մշակումը և այս հիմքի վրա աշխատանքային ռեսուրսներ արտահանող երկրների հետ միգրացիոն համագործակցության միջպետական մեխանիզմների ակտիվացումը ԱՊՀ և ԵԱՏՄ երկրների համար դառնում են կենսականորեն կարևոր խնդիր:

Միգրանտների բոլոր տեսակներից առանձնակի ուշադրություն հատկացնենք **ժամանակավոր աշխատանքային միգրանտներին**: Հայաստանում աշխատաուժի **սեզոնային միգրացիան** սկսվել է 1960-ն թվականներից, որի պատճառն են Հայաստանի տարբեր վարչական միավորների սոցիալ-տնտեսական զարգացման միջև տարբերությունները:

Միգրանտների հենց այս տեսակն է առավել մեծ թիվ կազմում Եվրասիական միգրացիոն համակարգի երկրներում: Ժամանակավոր աշխատանքային միգրանտներն են միգրացիոն գործընթացների կարգավորման հիմնական օբյեկտ հանդիսանում ինչպես հիմնական ընդունող երկրներում՝ Ռուսաստանում և Ղազախստանում, այնպես էլ ելքի երկրներում: Եվ դեպի միասնական աշխատաշուկա արդեն ռազմավարական ու ինստիտուցիոնալ առումով ձևավորված շարժի պայմաններում հենց աշխատուժի շարժունությունն է դառնում առանձնակի հրատապության հարց Եվրասիական միգրացիոն համակարգի բոլոր երկրների համար:

Հաճախ ընդունված է համարել, որ ժամանակավոր աշխատանքային միգրանտների վերաբերյալ կիրառելի է ընդամենը «ադապտացիա» տերմինը, որի ներքո հասկացվում է մարդու հարմարվելը կյանքի և աշխատանքի՝ իր համար նոր պայմաններին: Մեր պատկերացմամբ՝ ադապտացիան ավելի լայն՝ *ինտեգրացիա* հասկացության ձևերից մեկն է: Ադապտացիայից է սկսվում ինտեգրացիան: Նպատակահարմար ենք համարում հակադրել ադապտացիա և ինտեգրացիա հասկացությունները:

Վերջին տարիներին առավել ակնհայտ է դառնում, որ ընդունող երկրներում ժամանակավոր աշխատանքային միգրանտների ինտեգրացիային վերաբերող հարցում, միգրանտներից և ընդունող հասարակությունից բացի, կա ևս մեկ շահագրգիռ կողմ՝ միգրանտների ծագման երկիր հանդիսացող պետությունները: Աշխատանքային միգրացիան, ըստ էության, ենթադրում է միգրանտների վերադարձ ելքի երկիր, և ծագման պետությունները չեն կարող անտարբեր մնալ այն բանի հանդեպ, թե ինչպես է տեղի ունենում վերադարձած միգրանտների վերինտեգրումը: **Վերինտեգրում** ասելով հասկանում ենք վերադարձած միգրանտի կրկնակի

ներառումը ծագման երկրի հասարակությունում և տնտեսական համակարգում: Միևնույն ժամանակ, միգրանտների վերինտեգրման հաջողությունը զգալի չափով կախված է այն բանից, թե արդյոք արտասահմանում նրանց աշխատանքի փորձը հաջող է եղել, ինչպես են նրանք ինտեգրվել ընդունող հասարակությանը և միգրացիոն ինչ փորձով են վերադարձել [16]:

Աշխատանքային միգրանտների տնտեսական ինտեգրացիան ընդունող երկրում նշանակում է, նախ և առաջ, աշխատանքի լեզալ տեղավորում՝ առկա որակավորման հաշվառմամբ, և միգրանտների աշխատանքային իրավունքների ապահովում: Եթե սա չկա, տեղի է ունենում աշխատողների ապաորակավորում և, հետևաբար, դժվարություններ աշխատանք գտնելու հարցում՝ հայրենիք վերադառնալուց հետո: Ռուսաստանում հայ աշխատանքային միգրանտների դիտարկումը ցույց է տվել, որ յուրաքանչյուր չորրորդ միգրանտի կատարած աշխատանքի բնույթը չի համապատասխանել նրա կրթության մակարդակին, զբաղվածության ոլորտը միայն մասամբ է համապատասխանել նրանց նախորդ փորձին. 37%-ը զբաղված է եղել շինարարական ոլորտում, այն դեպքում, երբ մինչև միգրացիան միգրանտների մեծամասնությունն աշխատել է առողջապահության, կրթության և առևտրի ոլորտներում [17]:

Այսպիսով, կարևոր է թվում դիտարկել միգրանտների ինտեգրացիան ընդունող երկրում ոչ թե որպես երկկողմանի գործընթաց (*միգրանտներ և ընդունող հասարակություն*) և անգամ ոչ թե որպես եռակողմ գործընթաց (*միգրանտներ, ընդունող հասարակություն և ընդունող պետություն*), այլ որպես **քառակողմ գործընթաց** (*միգրանտներ, ընդունող հասարակություն, ընդունող պետություն և ծագման պետություն*): Սա գործնական նշանակություն ունի: Ծագման երկրները կարող են մասնակցել ընդունող երկրում իրենց աշխատողների ինտեգրմանն աջակցող գործընթացներին՝ պոտենցիալ միգրանտներին մեկնումից առաջ նախապատրաստելով՝ մասնագիտական ուսուցում, լեզվի ուսուցում, ծանոթացում մեկնման երկրի օրենսդրությանը:

Կարևոր է հասկանալ, որ միգրացիան չի սկսվում և չի ավարտվում սահմանը հատելու պահին: Միգրանտների ինտեգրմանն ուղղված ջանքերը ելքի երկրներում

կարող են սկսվել միգրացիային պատրաստվելու ժամանակ և շարունակվել մեկնման երկրներում: Իսկ միգրանտների ինտեգրման արդյունքները կդրսևորվեն նաև ծագման երկիր վերադառնալուց հետո: Բացի այդ, հարկ է հաշվի առնել, որ քաղաքական մակարդակում ևս ծագման երկրների առավել ակտիվ դիրքորոշումը միգրացիոն գործընթացների կառավարման հարցերում հիմնականում ուղղված է այլ պետություններում գտնվող իրենց քաղաքացիների իրավունքների ապահովմանը:

Միգրացիոն ցանցերը և դրանց ինստիտուցիոնալացման հեռանկարները ԵՄՀ-ում

Որոշակի ժամանակաընթացքում, օտարերկրյա աշխատուժի հոսքի անընդհատ ավելացման պայմաններում, ընդունող երկրներում գոյացել են աշխատանքային միգրանտների հանրույթներ և սոցիալական ցանցեր:

Սոցիալական կապերի առկայությունը հավելյալ՝ հոգեբանորեն «ձգող» գործոն դարձավ վաստակ ունենալու նպատակով երկրից հեռանալ ցանկացողների համար: Իրականում, սոցիալական կապերի գործոնն արդեն անջատվել է տնտեսական գործոններից և դարձել աշխատանքային միգրացիայի ինքնուրույն գործոն: Երկու երկրների միջև միգրացիոն հոսքի ծավալը պարտադիր չէ, որ հարաբերակցվի աշխատավարձի կամ զբաղվածության նորմերի տարբերության հետ, որովհետև դրանց ազդեցությունը միգրացիայի զարգացման կամ կրճատման վրա աստիճանաբար նվազում է պակասող ծախսերի և միգրացիայի ռիսկերի պատճառով, ինչը որոշ ժամանակ անց տեղի է ունենում ***միգրացիոն ցանցերի*** աճի հետևանքով: Պայմանավորված այն բանով, թե ինչպես է միջազգային միգրացիան դառնում ինստիտուցիոնալացված՝ ցանցերի ձևավորման և մշակման միջոցով, այն ձեռք է բերում անկախություն այն գործոններից, որոնք դրա առաջացման պատճառ են հանդիսացել:

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները հաստատում են այս փաստը, քանի որ հայ արտագաղթողների համար երկրից դուրս գալու և նշանակման վայր ընտրելու որոշման ընդունման հարցում մեծ դեր են խաղում հենց սոցիալական կապերը՝ ծանոթները կամ ազգականները, որոնք արդեն հաստատվել են որոշակի տեղում և որոնք կարող են օգնություն ցուցաբերել նորեկներին: Կապերի նման ձևերից

մեկն է այսպես կոչված **էթնիկ բիզնեսը**, որը միավորում է նույն ազգի գործարարներին և աշխատողներին, որոնք փոքր ավանդ չեն ներդնում ընդունող երկրի տնտեսությունում: Շնորհիվ միգրանտների գործարար ակտիվության ի հայտ են եկել արագ զարգացող շատ գործնական գոտիներ տարբեր տարածաշրջաններում, ԱՄՆ-ի և Ռուսաստանի տնտեսապես զարգացած շրջաններում և խոշոր քաղաքներում:

Հենց որ միգրանտների թիվը հասնում է կրիտիկական շեմի, սոցիալական կապերի ընդլայնումը նպաստում է տեղափոխման ծախսերի նվազմանը, միգրացիայի հավանականությունը բարձրանում է, սկսվում է հավելյալ շարժ, որն իր հերթին ընդլայնում է նոր կապեր: Այսպիսով, երբ միգրացիայի մեխանիզմն արդեն գործի է դրվում, սոցիալական կապերն իրենք են դառնում միգրացիայի պատճառներից մեկը, որովհետև խոստանում են նվազեցնել միգրացիոն տեղաշարժի հետ կապված ռիսկերն ու ծախսերը և բարձրացնել դրանից ստացվող օգուտը: Նման կապերը կամ ցանցերը սոցիալական կապիտալի ինքնատիպ ձև են կազմում, որի օգնությամբ մարդիկ փոքրացնում են ծախսերը և ռիսկերը միգրացիայի ժամանակ, իսկ այդ գործընթացից ակնկալվող շահույթը մեծանում է: Ցանցերը միգրանտների համար կարևոր ռեսուրս են ձևավորում:

Միգրացիոն ցանցերի ինստիտուցիոնալացման բացասական հետևանքներից մեկն այն է, որ միգրանտների վերադառնալու մտադրությունը հակադարձ համեմատական է նրանց կողմից դրամական փոխանցումներ կատարելուն: Արտերկրում առնվազն մեկ միգրանտ ունեցող ՀՀ տնային տնտեսությունների կեսից ավելին չեն կարողանում բավարարել իրենց կենսական պահանջմունքներն առանց տրանսֆերտների: Սա տնտեսական անվտանգության տեսանկյունից բավական լուրջ խնդիր է:

1.3 Միգրացիոն հոսքերի պատճառները, դրանց վրա սոցիալտնտեսական զարգացման ազդեցության առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից հաջողությամբ իրականացնելու սոցիալ-տնտեսական քաղաքականությունը պետք է կարողանալ կանխատեսել միգրացիոն հոսքերի մեծությունը և ուղղությունները, իսկ դրա համար պետք է հասկանալ միգրացիայի առանձնահատկությունները և գործոնները, ինչպես նաև գնահատել միգրացիայի հետևանքները [18-24]⁵: Միգրացիան, դա առաջին հերթին, սոցիալ-տնտեսական գործընթաց է՝ Հայաստանի աշխատանքային շուկայի, բնակչության կենսամակարդակի և այլ սոցիալ-տնտեսական ցուցանիշների հետ կապերի տեսանկյունից:

«Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2013թ.» և **«Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մոտորումներ»** տվյալներով **ընդմիջոք արտագաղթելու** դիրքորոշում ունեցող Հայաստանի քաղաքացիների շրջանում առավել տարածված են եղել **«Կոնֆեսական պատճառները»**, 2012թ.⁶ այդպիսի

⁵ Ատենախոսության այս ենթագլխում օգտագործված առանձին տվյալները և հարցումների արդյունքները, որոշ չափով, հիմնված են հետևյալ ուսումնասիրությունների վրա.

1) Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 2009 թվականին Երևանում հրապարակված «Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն»

2) ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2011 թվականին առաջարկված «ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացում»


3) Գ. Հարությունյան. «Ժողովրդագրությունը որպես կրիտիկական ոլորտ և տեխնոլոգիաներ (հայեցակարգային մոտեցումներ)», «21-ԴԱՐ», 2015, N 1

4) Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց 2011/2012թթ. Հայաստանում հմտությունների, միգրացիայի և զարգացման միջև եղած կապերի հետազոտության արդյունքները Եվրոպական կրթական հիմնադրամ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012թ. հունիս

5) Մանուկյան Ս.Ա. «Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2013», - IPSC «Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ», 2013թ., էջ 174

6) Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մոտորումներ/ Զոյա Թադևոսյան և ուրիշ.; Մասն. խմբ՝ Ա.Խ. Մարկոսյան. -Եր.: Տնտեսագետ, 2014 - 80 էջ.- («Ամբերդ» մատենաշար):

պատճառ է նշել արտագաղթի դիրքորոշում ունեցողների 82.4%-ը, իսկ 2013թ. նրանց թվաքանակն աճել է՝ հասնելով **88.1%-ի** (գծապատկեր 3).⁶



Գծապատկեր 3. Արտագաղթի դիրքորոշումների և դրանց պատճառների տարածվածությունը Հայաստանում 2012-2013թթ. [24]

Հայաստանում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման վրա այս արդյունքի վտանգավորության աստիճանն առավել ակնառու է այն առումով, որ (գծապատկեր 3)՝

- 2012թ. և 2013թ. Հայաստանի չափահաս բնակչության 50%-ը, հնարավորության դեպքում, ընդմիշտ կմեկնեն Հայաստանից դուրս բնակվելու,
- 2013թ. Հայաստանի չափահաս բնակչության 11.6%-ն այդ ուղղությամբ քայլեր էր ձեռնարկում:

Այսպիսով պարզ է տնտեսական քաղաքականության բնույթի և բովանդակության ազդեցությունը Հայաստանում ժողովրդագրական վիճակի և դրա միտումների վրա: Մենք գործ ունենք մի բարդ գլոբալ խնդրի հետ, որը պայմանավորված է աշխարհի տարբեր երկրների և ռեգիոնների ծնելիության մակարդակի և եկամուտների միջև առաջացած ճեղքվածքով:

⁶ Ատենախոսության սույն մասում հիմք ընդունված վիճակագրական ցուցանիշները ըստ տարիների արտացոլում են վերջին ուսումնասիրությունները այդ թեմայով

Հայաստանից խոշորածավալ միգրացիա առաջացրած պատճառները տարատեսակ են: Դրանց թվում են էներգետիկ և տնտեսական ճգնաժամերը, ցուրտը, սովը և 90-ական թթ. սկզբի պատերազմը, աշխատատեղերի կտրուկ նվազումը և կենսամակարդակի անկումը: Պատճառներից անհրաժեշտ է առանձնացնել տնտեսական, քաղաքական, հոգեբանական և մշակութային:

Ցավոք, պետք է առձանագրենք, որ աշխատանքի արտագաղթը Հայաստանից երբեմն դիտարկվում է որպես փրկարար փական, ինչը թույլ է տալիս մեղմելու լարվածությունը ներքին աշխատաշուկայում և ավելացնել ֆինանսական միջոցների հոսքը Սփյուռքից:

Միգրացիայի որոշման հիմնական պատճառները կապված են Հայաստանում **զբաղվածության հիմնախնդիրների** հետ, ներառյալ թե՛ աշխատատեղերի պակասը, թե՛ արժանապատիվ ապրուստ ապահովող բավարար աշխատավարձով աշխատատեղերի պակասը, թե՛ որոշակի մասնագիտությունների հատուկ աշխատատեղերի բացակայությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին տարիքի միգրանտներն առավել կարեորել են վարձատրության խնդիրը, մինչդեռ 21-30 տարեկան և 51 տարեկան ու բարձր տարիքի միգրանտների մեծամասնությունը որոշել է մեկնել՝ Հայաստանում աշխատանք գտնել չկարողանալու պատճառով:

Ըստ առանձին տարիների անգործության տոկոսը կազմել է (աղյուսակ 1).

աղյուսակ 1

Տարի	Անգործության տոկոսը (%)	Տարի	Անգործության տոկոսը (%)
2008	16.4	2012	17.3
2009	18.7	2013	16.2
2010	19.0	2014	17.6
2011	18.4	2015	18.5

Զբաղվածության ընդհանուր կառուցվածքում բարձրորակ մասնագետների բաժինը տնտեսության ինովացիոն ներուժի ինդիկատորն է: Համաշխարհային բանկի՝

33 երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ միջին հաշվով հայրենիքից հեռանում է բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիների 10%-ը [25]:

Ըստ առանձին սոցիոլոգիական հարցումների, արտագաղթողների մոտ 40%-ն ունի բարձրագույն կրթություն: Մտավոր արտագաղթը կարելի է բնորոշել որպես *ուղեղների վալանում*: Բարձրորակ մասնագետների արտահոսքը խանգարում է, խաթարում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ունակությունը, ինչը հանգեցնում է բնակչության կենսամակարդակի անկմանը:

Բնակչության միգրացիայի աճի հարցում կարևոր դեր խաղացած գործոն է աշխատավարձի քաղաքականությունն ազգային տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում և ոլորտներում, որը, շուկայում առկա գների համատեքստում, համեմատաբար ցածր է: Իսկապես, եթե դիտարկելու լինենք միջին ամսական հաշվարկված աշխատավարձը ճյուղերի կտրվածքով, ապա կտեսնենք, որ այն հանրապետությունում կազմում է ԱՄՆ 379 դոլար (2016թ. նոյեմբերի դրությամբ), ինչը չափազանց ցածր է նորմալ բարեկեցության ապահովման և բնակչության սննդամթերքի պահանջարկը բավարարելու համար: Սա վկայում է այն մասին, որ զարգացման ընթացիկ փուլում անհրաժեշտ է ընդունել շտապ միջոցներ՝ ուղղված ազգային տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող բնակչությանն արժանի աշխատավարձով ապահովելուն: Այս առիթով ռուսաստանցի տնտեսագետներ Ե. Գոնտմախերը և Տ. Մալեևան միանգամայն արդարացիորեն նշում են հետևյալը. «Արժանի» հասկացությունը նույնպես պարզաբանում է պահանջում: Մեր կարծիքով՝ այն սահմանվում է երկու գործոնի համադրությամբ. աշխատանքի նվազագույն վարձատրությունը պետք է ապահովի գոնե միայնակ աշխատողի «նվազագույն սպառողական բյուջեն» (մոտավորապես երկու անգամ ավելի «աշխատունակ մարդու կենսաապահովման նվազագույնից»), իսկ աշխատանքի միջին վարձատրությունը երկրում չպետք է ցածր լինի աշխատողի և նրա ընտանիքի երկու անդամի ընդհանուր նվազագույն սպառողական բյուջեից, այսինքն՝ իր աշխատավարձով աշխատողը կարող է համեստ, բայց արժանապատիվ պահել ընտանիքը՝ չաշխատող կնոջ և երեխայի հետ միասին» [26]: Անցումային տնտեսության պայմաններում աշխատողների հիմնական խթանը՝

աշխատավարձը, ժողովրդական տնտեսության ճյուղերի մեծամասնությունում և ոլորտներում, որպես աշխատանքի ներգրավվելու խթան, կորցրել է իմաստը:

Մեկնելու պատճառներից են նաև Հայաստանում զարգացման հեռանկարների բացակայությունը, բիզնեսով զբաղվելու խոչընդոտները, անցանկալի բարոյահոգեբանական մթնոլորտը և անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակը: Արդյունքում, գործարար ձիրքով օժտված անձինք նախընտրում են բիզնեսով զբաղվել այլ երկրներում, որի հետևանքով ոչ միայն տեղի է ունենում կապիտալի արտահոսք, այլ նաև կառավարման ու կազմակերպական ունակությունների «փախուստ»: Բացի դրանից, մասնագետները ձգտում են ոչ միայն դեպի կապիտալը, այլ տեղաշարժվում են կապիտալով: Սա նույնպես հաստատում է, որ Հայաստանն ունի խնդիրներ կապված գրավիչ, արդյունավետ բիզնես միջավայրի ձևավորման հետ:

Այլ հանգամանքներից նշենք՝ «խոսքի գնալու» ավանդույթը: Որոշ գյուղերում, որոնցից բազմաթիվ տղամարդիկ տարիներ շարունակ մեկնում են արտերկիր, աշխատանքային միգրացիան վերածվել է ընտանիքների կենսապահովման ավանդական միջոցի:

Աշխատանքային միգրացիայի հաջորդ շարժառիթը (մեծ տարածում չունի), երբ երիտասարդ տղաները ցանկանում են մեկնել հայրենի գյուղից և ապրել մշակութային և սոցիալական ավելի աշխույժ կյանք ունեցող միջավայրում (ինչպիսին քաղաքն է): Հայաստանից մեկնելու և արտերկրում աշխատելու որոշումը պայմանավորող հաջորդ գործոնը ներդրումներ կատարելու կամ լրացուցիչ ծախսեր կրելու անհրաժեշտությունն է (կրթության ծախսերը; հարսանիքի ծախսերը; բնակարանի (տան) ձեռքբերումը կամ վերանորոգումը; սեփական բիզնես սկսելու ծախսերը և այլն):

Հայաստանից արտագաղթի հիմնական պատճառներն տոկոսային հարաբերությունով ունենք հետևյալ նկարագիրը: Ինչպես արդեն նշել ենք, արտագաղթողների մեկնման նպատակների մեջ շեշտակիորեն առանձնանում է աշխատանքի որոնումը՝ 76.8%, ինչը նշանակում է, որ հետազոտված էմիգրանտների ամբողջ համակցությունում հենց այդքանն էլ աշխատանքային միգրանտներ են: Մշտական բնակության հաստատումը նշվել է մեկնածների 48.6%-ի համար: Փոքր մաս չեն կազմում նշված երկու նպատակն էլ կարևորող միգրանտները՝ 30.2%: Ընտանիքին

վերամիավորվելու հանգամանքը բնորոշ է էմիգրացվածների 7.9%-ին, իսկ այլ նպատակներ հետապնդել են մեկնածուների ընդամենը 3.9%-ը: [27]

Ինչպես նշվում է «Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մոտրումներ» հետազոտությունում, «*ուշագրավ փաստը, հասարակական վստահության, Հայաստանի զարգացման հեռանկարի, կամ, որ նույնն է, ապագայի հանդեպ հավատի հողմահարման՝ առավել քան տրագնապահարույց երևույթն է*»: Երևի թե միայն այս կերպ է հնարավոր մեկնաբանել Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայության՝ արտագաղթածին այդ գործոնի եռապատկումը 2008–2013 թթ. ընթացքում, իսկ էմիգրանտների թվաքանակի՝ քառապատկումը: Կրկնակի է աճել նաև սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտի ազդեցությունը, որը 2013 թ. նշվել են ամեն տասներորդ էմիգրանտի հաշվով: Ասվածից ստացվում է, որ *հինգ կամ տասը տարի առաջ հեռանկարների և նույնիսկ իրողությունների գնահատման առումով մարդիկ ավելի լավատես էին, քան ներկայումս*:

Նույն աշխատանքում բերվում են այն փաստերն, որ այլ պատճառների շարքում 2008–2013 թթ. էմիգրացվածները կարևորել են նախկինում իր բաժնով աչքի չընկնող այնպիսի երևույթ, ինչպիսին *անարդարությունն է*: Հիրավի՝ Հայաստանից մեկնած **ամեն չորրորդի** համար որպես էմիգրացման պատճառ նշվել է հենց անարդարությունը:

Ամփոփ տեսքով ներկայացնելով տարբեր տնտեսական, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, կարելի անել որոշ եզրակացություններ արտագաղթի գործընթացների վերաբերյալ:

ՀՀ-ից բնակչության զանգվածային արտագաղթը իր բնույթով հարկադրական է և պետականորեն չի կարգավորվում կամ շատ թույլ է կարգավորվում: Տագնապահարույց է այն, որ հանրապետության առկա բնակչության էմիգրացիոն ներուժը ոչ միայն սպառված չէ, այլ, ամենայն հավանականությամբ, ունի աճի միտում: Սակայն, մյուս կողմից էլ, պարզ է, որ էմիգրացիոն ներուժը անվերջ աճել չի կարող, այն տեղի են ունենում մինչև որոշակի կրիտիկական աստիճանի հասնելը: Այսինքն՝ դա այն իրավիճակն է, երբ արտագաղթը տնտեսական առումով դառնում է ոչ շահավետ: [23]

1980–1990-ական թվականների սահմանագլխին Հայաստանում տեղի ունեցած արտակարգ իրադարձությունները, քաղաքական և սոցիալտնտեսական արմատական փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողել ժողովրդագրական գործընթացների, այդ թվում՝ միգրացիայի վրա: Հասարակական կարծիքը սկզբունքորեն վերագնահատել է էմիգրացիոն վարքագծի նորմերը: Հայրենիքից հեռանալու երևույթն ընկալվում է որպես ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտից, անարդարությունից, ինչպես նաև մոտակա հեռանկարում անհատի ինքնաիրացման հնարավորության ընդլայնման հույսի բացակայությունից ձերբազատվելու միակ հասանելի միջոցը: [27]

Բնակչության արտաքին միգրացիոն ակտիվությունը մյուսների հետ մեկտեղ, ուժեղացնում է հասարակության բևեռումը՝ դուրս մղելով միջին խավը:

Հայաստանը հայտնվել է այն երկրների շարքում, որոնք արտահանում են աշխատանքային ռեսուրսներ, որակյալ մասնագետներ, ինտելեկտուալ աշխատողներ: Ոչ մեծ երկրի համար մասնագետներ պատրաստելու վրա միջոցներ ծախսելը, իսկ հետո նրանց տարերայնորեն արտասահման արտահանելը բավական կործանարար է: «Ուղեղների արտահոսքի» պատճառով Հայաստանը կորցնում է երկրի մտավոր և հոգևոր հարստությունը, որն ստեղծվել է երկար տասնամյակների ընթացքում և համարվում է դժվար վերականգնվող ռեսուրս: Միգրացիոն գործընթացներն ազդում են երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա: Տեղի է ունենում սեռատարիքային կառուցվածքի ձևափոխում ի հաշիվ նրա կազմից առավել առողջ, երիտասարդ, մասնագիտորեն պատրաստված քաղաքացիների նվազման:

Ակադեմիկոս Վ. Ե. Խոջաբեկյանը ժամանակին նշում էր, որ 1986-1990թթ. տնտեսապես ակտիվ տարիքի բնակչության (25-50 տարեկան) թիվը կազմում էր միջինը 1 մլն մարդ: Բայց արդեն 1996-2005թթ. այն կազմում էր 1,350 մլն մարդ [27]: Այլ կերպ ասած՝ ավելացել է այն անձանց թիվը, ովքեր աշխատանքային տարիք են մտել և նոր աշխատատեղերի կարիք ունեն:

Կարելի է նշել, որ էմիգրացիան մինչ օրս ՀՀ բնակչության համար գոյատևման և ինքնապահպանման կարևորագույն գործոններից մեկն է: Աշխատանքային միգրացիայի մեխանիզմը թույլ է տվել հարյուր հազարավոր հայերի աշխատանք գտնել

արտասահմանում և դրանով իսկ զսպել է երկրում գործազրկության աննախադեպ աճը: Փաստորեն, տեղի է ունեցել աշխատանքային ռեսուրսների տարերային վերաբաշխում աշխատանքի ավելցուկ ունեցող Հայաստանից, որը միաժամանակ նաև խոր տնտեսական ճգնաժամի մեջ էր, դեպի նախկին Խորհրդային Միության այլ տարածաշրջաններ, որոնցում զգացվել է աշխատանքային ռեսուրսների պահանջ: Թեև միգրանտները նպաստում են ժողովրդի տնտեսական գոյատևմանը և իրենց ընտանիքների անդամներին ամեն տարի մի քանի միլիոն դոլար են ուղարկում, նրանց բացակայությունը, սակայն, զգալի վնաս է հասցնում հանրապետության տնտեսությանը: Երկիրը զրկվում է գործարարներից, և դանդաղում է միջին դասի ձևավորումը:

Ակնհայտ է, որ, կանխորոշելով բնակչության թվաքանակի սրընթաց նվազումը, Հայաստանից ներկայիս արտագաղթը վերաճել է ժողովրդագրական բոլոր փոփոխականների վրա ազդող էական գործոնի, և բացասական ներդրում են ունեցել վերջիններիս շարժի մեջ: Առհասարակ, աշխատանքային (*բնույթով ժամանակավոր*) միգրանտների կեսից ավելին, առաջին անգամ մեկնելուց մոտ 5–6 տարի անց, արտերկրում իրենց կարգավիճակը վերափոխում են մշտականի:

Այսօր երկրում տեղի են ունենում նոր միգրացիոն գործընթացներ, որոնց կարգավորմանը պետությունը շատ թույլ է փորձում ինչ-որ մասնակցություն ունենալ:

աղյուսակ 2

Էմիգրանտների բաշխումը ըստ մեկնելու դրդապատճառների

1998–2013 թթ. համար, տոկոս [23]

Դրդապատճառներ	1998թ.	2008թ.	2013թ.
Աշխատատեղերի բացակայությունը	41.9	66.3	56.9
Մասնագիտական աշխատանքի բացակայությունը	7.8	5.3	16.5
Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայությունը	7.4	12.0	50.7
Ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները	4.3	1.9	18.3

Բավարար կենսամակարդակ ապահովելու համար անհրաժեշտ միջոցները վաստակելու անհնարինություն	23.2	53.7	39.3
Սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	8.7	4.1	10.5
Անարդարությունը	6.7	10.3	25.8
Ընդամենը	100%	100%	100%

Փաստորեն, Հայաստանում, հիմնականում, միգրացիայի գործոններն (*աղյուսակ 2*) անմիջականորեն կապված են իրականացվող շուկայական բարեփոխումների արդյունքների հետ: Ի տարբերություն զարգացած երկրների, Հայաստանում շուկայական բարեփոխումների իրականացման տարիներին են հազարավոր մարդիկ դարձել հարկադրյալ միգրանտներ: Հենց ազգային տնտեսության առանձնահատկությունն է հայրենական միգրացիան դարձնում ինքնատիպ, այլ երկրների պայմաններից տարբերվող:

Համաձայն շուկայական տեսական հայեցակետերի՝ մասնավոր սեկտորը և դրա աճը պետք է բարձրացնեն աշխատանքի արտադրողականության մակարդակը և այդ հիմքի վրա, արտադրահզորությունների բեռնվածության ավելացման միջոցով ընդլայնեն տնտեսության իրական հատվածի բազան: Սակայն այդ էֆեկտին հասնել չհաջողվեց, ավելի շուտ՝ հակառակը տեղի ունեցավ: Արդյունքում՝ նախկինում արդյունաբերության ճյուղերում աշխատող բնակչությունն օբյեկտիվ պատճառներով համալրեց ազատված աշխատողների և աշխատանքային միգրանտների բանակը: Այս վիճակի մյուս՝ առավել բացասական ազդեցությունն է այն, որ տեղի ունեցավ արդյունաբերական անձնակազմի դեգրադացիա, արժեքավոր ինժեներական կադրերի և ինդուստրիալ տեխնոլոգիաների օգտագործման ոլորտի հմտությունների կորուստ: Ցավոք, այս միտումը դեռևս շարունակվում է և դրանով իսկ արդի հայ հասարակության հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում.

Այս ամենը վկայում է, որ աշխատանքային միգրացիայի հիմնախնդիրների մեղմման գործում մեծ նշանակություն է ստանում **աշխատատեղերի սպեղծումը**,

երկրի արտադրական ներուժի աճը, ընդ որում՝ պետության բոլոր ջանքերը պետք է ուղղվեն ընդլայնված վերարտադրության ապահովմանը ողջ երկրի մասշտաբով:

Միգրացիոն գործընթացների վրա ազդող գործոն դարձավ չկշռադատված տնտեսական քաղաքականությունը՝ ուղղված *տնտեսության բացությանը*: Բաց տնտեսական քաղաքականությունը և գլոբալիզացիայի աճն ինքնիշխանության տարիներին ավելի շատ բացասական, քան թե դրական դեր խաղացին բնակչության զբաղվածության պահպանման առումով: Սա կարելի է հիմնավորել նրանով, որ հայրենական ապրանքարտադրողի անմրցունակության, ցածր գործարար ակտիվության պայմաններում ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերի լճացումը տնտեսությունը վերածում էր օտարերկրյա արտադրողների համար մեծ «բազարի», որտեղ տեղի սպառողների հիմնական չափանիշը, ցածր վճարունակության պատճառով, ցածր գինն էր: Դրա հետևանքով հայրենական շուկա հորդեցին հիմնականում անորակ ապրանքներ ցածր գներով, և արդյունքում օտարերկրյա արտադրողները շահած դուրս եկան: Այստեղից էլ՝ հայրենական տնտեսության ակնհայտ կախվածության մեծացումը օտարերկրյա շուկայի կոնյունկտուրայից, գործազրկության և բնակչության միգրացիայի նախադրյալների աճը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև միգրանտների սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքը, որը ներառում է հայ հասարակության տարբեր սոցիալական շերտերի մարդկանց: Նրանք հիմնականում 18-55 տարեկան մարդիկ են: Մեծ մասը աշխատունակ տարիքի տղամարդիկ են: Նրանց կրթական մակարդակը բավական բարձր է. նրանք, որպես կանոն, որակյալ աշխատողներ են՝ միջնակարգ և պրոֆեսսոնալ-տեխնիկական կրթությամբ: Բայց կան նաև ոչ քիչ թվով մարդիկ բարձրագույն կրթությամբ (30–35%) [23]: Եթե 1991-1994թթ. տղամարդիկ մենակ էին հեռանում և փորձում էին տեղավորվել արտասահմանում, ապա հետագայում նրանք սկսեցին տանել իրենց ընտանիքի անդամներին և հեռանալ ընտանիքներով:

Միգրացիայի նպատակի ուսումնասիրությունը՝ ըստ մեկնման վայրի: Այսպես, աշխատանքային միգրանտների 79,3%-ը մեկնել է Ռուսաստան: Այս տեսանկյունից հատկանշական է նաև, որ դեպի Ռուսաստան էմիգրացվածների կազմում աշխատանքային միգրացիան ունի շատ բարձր բաժին՝ 88,8%, մինչդեռ Եվրոպա և ԱՄՆ

մեկնածների մեջ այն չի գերազանցում 50%-ը: Եվրոպական երկրներ և Ամերիկա էմիգրացվածների համախմբում աշխատանքի որոնման նպատակին զգալիորեն գերազանցում է մշտական բնակության նպատակով մեկնածների բաժինը: Վերջինս նշված երկրներում համապատասխանաբար՝ 67.6% և 81.0%:

Վերն բերված արդյունքները խիստ մտահոգիչ են, հատկապես այն առումով, որ որպես Հայաստանի զարգացման կարևոր, առաջնային ուղիներից մեկը, մարդկային ռեսուրսների լայնածավալ ներգրավումն է, այդ թվում նաև՝ «մեծ վերադարձի» կազմակերպման ճանապարհով: Բայց, վաղաժամ է նման հույս փայփայելը, քանի դեռ Հայաստանում շարունակվում է արտագաղթը, և չեն հաղթահարվում այն ծնող պատճառները:

Միգրացիայի դետերմինանտները Հայաստանում. միկրոտնտեսական մոդելումը և արտագաղթի պրոբիտ-գնահատականը

Այս բաժնում կփորձենք վերլուծել Հայաստանից արտագաղթի դետերմինանտները:

Այդ նպատակով մենք կկիրառենք այն մոդելների վիճակագրական վերլուծությունը, որոնցում բացատրող փոփոխականն ունի սոսկ հնարավոր մեծությունների վերջնական քանակություն: Այդ մոդելները գնահատելիս առաջին պլան է մղվում առավելագույն ճշմարտանմանության մեթոդը: Կիրառենք բացատրող փոփոխականի երկու մեծությամբ բինար ընտրության մոդելը՝ որպես **պրոբիտ-մոդել** (*probit-model*) [29]-[31]:

Վերլուծության համար օգտագործվել են ՀՀ Ազգային վիճակագրական վարչության տվյալները: Մեր մոդելն ունի **բինար պատասխան/կախյալ** փոփոխական, *emig*: Կան հինգ անկախ փոփոխականներ.

$$emig = \alpha + \beta_1 \cdot fam_incom + \beta_2 \cdot age + \beta_3 \cdot educ_year + \\ + \beta_4 \cdot unemp + \beta_5 \cdot w_diff + \varepsilon,$$

(1)

որտեղ *emig* — կախյալ դիխոտոմ փոփոխականն է, ցույց է տալիս միգրացիայի մասին որոշումը (*հավասար է «1»-ի միգրանտների համար և «0»-ի ոչ միգրանտների համար*); *fam_incom* — ընտանեկան եկամուտ; *age* - տարիք (*անընդմեջ փոփոխական*); *educ_year* -

կրթություն; *unemp* - գործազրկություն; *w_diff* – եկամուտները և տարբերությունը կենսամակարդակում ընդունող և ուղարկող երկրների միջև (*աշխատավարձի տարբերություն*, $w_{emig} - w_{non_emig}$): Մասնավորապես, ստանդարտ աշխատավարձի գնահատման համար կարող է կառուցվել հավասարում Զ. Միներսի աշխատավարձի ֆունկցիայի տեսքով՝ հսկիչ փոփոխականներով, օգտագործելով այն անձանց տվյալները, ովքեր աշխատում են արտասահմանում և երկրի ներսում [32]:

(1) մոդելում մենք օգտագործել ենք **պրոբիտ-ռեգրեսիայի մեթոդը**, քանի որ մեր *emig* կախյալ փոփոխականը **բինար** է: Սովորաբար մոդելի գնահատականը դուրս է բերվում մասնագիտացված ծրագրային փաթեթների միջոցով, օրինակ՝ *Statistica*, *EViews*, *SPSS* և այլն: Մոդելի գնահատման արդյունքներն ըստ ընտրված տվյալների (*դիտարկումների*) ստացվել են *EViews* փաթեթի օգտագործմամբ:

Աղյուսակ 3-ը *ցույց է տալիս գնահատման արդյունքները պրոբիտ-ռեգրեսիայի մեթոդով*: Եթե ընդունող և ուղարկող երկրների միջև աշխատավարձի տարբերությունն ավելանում է՝ միգրացիայի հավանականությունը բարձրանում է: Կրթությունը, գործազրկությունն ունեն դրական նշան: Սա նշանակում է, որ այս փոփոխականների մեծությունների ավելացումը հանգեցնում է միգրացիայի հավանականության բարձրացման: Բնակչության մեկ շնչին ընկնող ընտանեկան եկամուտը և տարիքն ունեն բացասական հարաբերակցություն, և եթե այս փոփոխականների մեծություններն ավելանում են, նվազում է միգրացիայի հավանականությունը:

Eviews Probit մոդելում BINARY մեթոդի հավասարության պատուհանում ընտրության միջոցով կարելի է կառուցել Binary choice (...), իսկ Excel-ում կախյալությունը կարող է հաշվարկված լինել NORMDIST(z;0;1;1) ներկառուցված ֆունկցիայի օգնությամբ: Պրոբիտ մոդելն առաջարկում է հավանականության փոքր-ինչ ավելի կոր աճ, քան մյուս բինար մեթոդները (*logit-մոդել*, *gompit-մոդել*):

աղյուսակ 3.

Արտագաղթի հավանականության դետերմինանտների գնահատականը

Probit

LR chi2 (5)=18012.61


Prob>chi2=0

Log-likelihood=-82137.241

Pseudo R2=0.0991

emig	Coef.	Std. Err.	z	P>z	[95% Conf. Interval]	Interval]
w_diff	0.0899	0.00029	29.07	0.00	8.37E-02	9.55E-02
fam_incom	-0.0372	0.00481	-35.01	0.00	-1.80E-02	-1.61E-03
age	-0.0376	0.0005	-72.98	0.00	-0.0386	-0.0366
educ_year	0.0469	0.0013	34.81	0.00	0.0443	0.0495
unemp	1.5820	0.1434	11.03	0.00	1.3009	1.8631
_cons	-2.9615	0.0367	-84.11	0.00	-3.1620	-3.0181

Ավելի լավ պատկերացում ունենալու համար ամփոփել ենք արդյունքները բոլոր փոփոխականների համար՝ գրաֆիկների օգնությամբ: Այստեղ, հաշվի են առնված նախորդ ենթագլուխներում նշված միտումները և դրանց համապատասխանող պրոբիտ-մեթոդով ստացված արդյունքները, ինչպես նաև, Եվրասիական Զարգացման Բանկի⁷ կողմից իրականացված անալիտիկ հետազոտությունները, կապված ԵԱՏՄ և ԱՊՀ առանձին պետությունների վերաբերյալ ստացված և ներկայացված արդյունքները:




Գծապատկեր 4. Աշխատավարձի բարձրացման ազդեցությունը արտագաղթի հավանականության վրա




Գծապատկեր 5. Արտագաղթի վերադարձի ընտանեկան եկամուտի ավելացման ազդեցությունը արտագաղթի հավանականության վրա


⁷ <http://eabr.org/r/research/centre/projectsCII/>



Գծապատկեր 6. Տարիքի ավելացման ազդեցությունը արտագաղթի հավանականության վրա



Գծապատկեր 7. Կրթության մակարդակի ազդեցությունը արտագաղթի հավանականության վրա



Գծապատկեր 8. Գործազրկության ազդեցությունը արտագաղթի հավանականության վրա

Գծապատկեր 4-ում ցույց է տրված աշխատավարձի տարբերության մեծացման ազդեցությունը արտագաղթի հնարավորության վրա, այն դեպքում, երբ մյուս անկախ փոփոխականները մնում են անփոփոխ: Ինչպես երևում է նկար 4-ից, արտագաղթի հավանականությունը մեծանում է աշխատավարձի տարբերության մեծացման հետ: Գծապատկեր 5-ում ցույց է տրված կապը բնակչության մեկ շնչին ընկնող ընտանեկան եկամուտների և միգրացիայի հավանականության միջև: Գոյություն ունի գծային, բայց բացասական կախվածություն երկու փոփոխականների միջև, իսկ դա նշանակում է, որ ընտանեկան եկամտի ցանկացած ավելացման դեպքում միգրացիայի հավանականությունն անշեղոդերն նվազում է նույնական մեծությամբ: Տարիքը բացասական ազդեցություն է գործում արտագաղթի վրա՝ գծապատկեր 6: Կորի շեղումը գծային չէ, քանի որ արտագաղթի հավանականությունը նվազում է տարիքի ցուցանիշների աճի հետ: Տարիներով չափվող կրթության մակարդակի բարձրացումը հանգեցնում է արտագաղթի հավանականության մեծացման: Գծի կորը գծապատկեր

7-ում կայուն չէ ուսուցման շրջանում: Դա նշանակում է, որ կրթության ավելի բարձր մակարդակում բարձրացումն ստեղծում է արտագաղթի ավելի շատ հնարավորություններ, քան կրթության ավելի ցածր մակարդակում բարձրացման նույն ծավալը: Գործազրկության ազդեցությունը միգրացիայի հավանականության վրա ունի դրական գծային կապ, գծապատկեր 8:

Միգրացիոն գործընթացների վրա սոցիալաֆուկսական զարգացման ազդեցության առանձնահատկությունները

2001-2007թթ. միջազգային տնտեսության արագ աճի ժամանակ տեղի է ունեցել արտասահմանից (*հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից*) դեպի Հայաստան ֆինանսական միջոցների ներհոսքի նշանակալի աճ: Այդ ֆինանսական հոսքերն ուղղվել են հիմնականում սպառման ոլորտ, մասամբ՝ շինարարության ոլորտ, և արդյունքում, շինարարության ծավալների աճի հետևանքով այդ տարիներին Հայաստանի ՀՆԱ տարեկան աճը բարձր է եղել 10%-ից: Տնտեսական աճի այդ տեմպերն անմիջապես իր ազդեցությունն են ունեցել գործազրկության մակարդակի վրա, որը 2001-2007թթ. ընթացքում նվազել է մոտ 10%-ով՝ 38.4%-ից մինչև 28.7%: Սակայն, մի բան պարզ է, որ 2001-2007թթ. համաշխարհային տնտեսական աճի հետևանքով ՀՀ տնտեսության զարգացման առաջացած հնարավորությունը Հայաստանում խիստ անարդյունավետ է օգտագործվել: Լուրջ քայլեր չեն իրականացվել տնտեսության կառուցվածքի լավացման ուղղությամբ:

Նման տնտեսական զարգացումները անմիջականորեն ազդելով նրա աճի վրա, իր հերթին իրանց ուղղակի ազդեցությունն են թողել միգրացիոն գործընթացների վրա, մասնավորապես, այդ տարիներին, նվազել է Հայաստանից արտագաղթը: 2004-2006 թվականներին ընթացքում Հայաստան ժամանածների և մեկնածների սալդոն ***նույնիսկ դարձել է դրական***, այսինքն՝ արտագաղթը փոխարինվել է թեկուզ փոքր, սակայն ներգաղթով: Հետևաբար, արտագաղթի նվազեցման տեսակետից տնտեսության զարգացումն, նոր աշխատատեղերի ստեղծումը, արժանապատիվ վարձատրությունը ունի հանգուցային նշանակություն: Միաժամանակ, անհրաժեշտ է մեղմել հասարակության խիստ շերտավորումը, վերացնել անարդարությունը,

կաշառակերությունը, ստեղծելով իրավական և բարոյահոգեբանական սոցիալական հասարակություն:

Ակնհայտ է, որ ներկա սոցիալտնտեսական իրավիճակում, որ ձևավորվել է Հայաստանում, առավել կարևոր նշանակություն են ստանում այն զարգացման ծրագրերը. որոնց ՀՀ կառավարությունը⁸ նախատեսում է իրականացնել: Հարց նրանում է, թե որքանով է դա հաջողվում: Անշուշտ, դրանց արդյունավետ կառավարումը բացառիկ դրական ազդեցություն կարող է ունենալ Հայաստանի ազգաբնակչության բարոյահոգեբանական վիճակի, նրա կենսամակարդակի վրա, դրանով իսկ նպաստի **ներգաղթին**:

Դիտարկենք որոշ ծրագրեր: Գտնում ենք, որ առաջնային կարևոր է «Արդյունաբերության պետական աջակցություն ծրագիր»-ը⁹, որի հիմնական փաստաթուղթն է **«Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության Ռազմավարությունը»**: Ըստ այդմ, ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել էր ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում, որը միտված է լինելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով: Ընդհանուր առմամբ նախատեսվում էր հետևյալ ոլորտային ռազմավարությունը՝ «Կոշիկի արտադրություն», «Տեքստիլ և տրիկոտաժ», «Ադամանդագործություն», «Ոսկեգործություն», «Ժամագործություն», «Կոնյակագործություն», «Գինեգործություն» և «Դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ»:

Ավելին ՀՀ կառավարությունը հայտարարել է գիտալիքահենք տնտեսություն կառուցելու իր երկարաժամկետ ռազմավարական նպատակի վերաբերյալ: Հիմք ընդունելով դա՝ արդյունաբերական քաղաքականության ուղղորդող տեսլականը կլինի Հայաստանը դարձնել բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է:

⁸ <http://www.mineconomy.am/>

⁹ ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշման Հավելված 1 «Արդյունաբերության պետական աջակցություն ծրագիր»

Հաջորդ ծրագիրը, որի վրա ուզում ենք դարձնել ուշադրությունը, դա «**ՓՄՁ զարգացման ծրագիր**»-ն է, համաձայն որի «Հայաստանում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ հաղորդելով տնտեսությանը նորարարական ուղղվածություն և ճկունություն»: Ինչպես նշվում է Էկոնոմիկայի նախարարության կայքում «ՓՄՁ ոլորտն իր առանձնահատկություններով և զարգացման հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա և ապահովում է զգալի սոցիալ-տնտեսական արդյունք, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացում»: Պետք է նշել, որ ՀՀ գործադիր մարմինների կողմից ընդունվել են բազմաթիվ փաստաթղթեր, ուղղված նպաստելու ՓՄՁ-ների գործունեությունը:

Այլ ծրագրերից կարելի է առանձնացնել.

- Ազատ տնտեսական գոտիներ.
- Զբոսաշրջության զարգացման ծրագիր.
- Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ծրագիր.
- Գործարար միջավայրի բարելավման ծրագիր:


Չնայած, վերն նշված և ՀՀ Կառավարության կողմից ընդունված այլ զարգացման ծրագրերի, Հայաստանում միգրացիա (*Հայաստանից հեռանալու տեսակետից*) հիմնախնդիրը մնում է առանձնակի ակտուալ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ **դրանց ազդեցությունը ՀՀ սոցիալտնտեսական վիճակի լավացման վրա մինիմալ է:** Սոցիալական ոլորտի և զբաղվածության ցուցանիշները, որոնք ուղղակի կապված են Հայաստանից միգրացիոն հոսքերի հետ, մնում են մտահոգիչ, և ունեն վատթարացման միտում: Բերենք որոշ տվյալներ (գծապատկեր 9, գծապատկեր 10, աղյուսակ 4, աղյուսակ 5) (*հիմք, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը*, 2016. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ԱՎԾ)) 2014-2016թթ. համար.

աղյուսակ 4

ԱՊՀ պետություններ	Միջին աշխատավարձ (ԱՄՆ դոլար)	Թոշակ (ԱՄՆ դոլար)	Գործազրկության մակարդակը տնտեսաապես ակտիվ
-------------------	---------------------------------	----------------------	---

			բնակչությանը (%) (2013)
Բելառուս	573	232.1	6.1 (2009թ.)
Ղազախստան	714	217.1	5.0- (2015թ.)
Ղրղզստան	236	131.7	8.4
Ռուսաստան	940	306.7	5.8 (2015թ.)
Տաջիկստան	148	47.8	2.6 (2012թ.)
Ուկրաինա	409 (144 նոր փոխարժեքով)	186.1 (38 նոր փոխարժեքով)	7.0
Հայաստան	369	71.8	18.5 (2016թ.)
Վրաստան	503	94	16.7 (2013թ.)
Ադրբեջան	539	217.3	5.0
Ուզբեկստան	353	150.2	4.9
Մոլդովա	299	78.2	5.1
Թուրքմենստան	288 (2012թ.)	74	3.5 (2012թ.)

Զբաղվածությունը և գործազրկությունն ըստ եռամսյակների, 2015-2016թթ.
(%-ով նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ)



Գծապատկեր 9. Զբաղվածությունը և գործազրկությունը (ըստ եռամսյակների)


աղյուսակ 5

Աշխատանքային ռեսուրսների կազմն ըստ եռամսյակների, 2016թ.

հազ. մարդ

	Ընդամենը			Տղամարդ			Կին		
	I	II	III	I	II	III	I	II	III

Աշխատանքային ոեսություններ	2067.1	2019.1	1951.3	944.3	899.4	873.5	1122.8	1119.7	1077.9
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1223.0	1231.3	1234.1	642.2	652.0	635.1	580.8	579.3	599.0
Զբաղվածներ	1000.7	1004.7	1010.4	518.8	547.6	517.7	481.9	457.1	492.6
Գործազուրկներ	222.3	226.6	223.8	123.5	104.4	117.4	98.8	122.2	106.3
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	844.1	787.8	717.2	302.1	247.4	238.3	542.0	540.4	478.9



Գծապատկեր 10. Աշխատուժի առաջարկը, պահանջարկը և աշխատանքով ապահովվածները, դեկտեմբեր

Սոցիալորեն տեսական զարգացման հեռանկարները

Ի շնորհիվ կայուն տնտեսական զարգացման, 2004 և 2008 թվականների ժամանակաշրջանում ավելի քան 350 հազար մարդ կարողացան դուրս գալ աղքատությունից: Աղքատների տեսակարար կշիռը նվազեց 34.6%-ից 2004 թ. մինչև 23.5%-ը 2008 թ.: Ծայրահեղ աղքատությունը նվազեց ավելի արագ, 6.4%-ից 2004 թ. մինչև 3.1%-ը 2008 թ.: Ինչ վերաբերում է եկամուտների անհավասարության¹⁰, որը չափվում է Զինիի գործակցով, այն նվազել է փոքր չափով՝ 0.395 2004 թ. մինչև 0.389 2008 թ.:

¹⁰ 1990 թվականների սկզբից Հայաստանում ձևավորվել և պահպանվում է մինչ այսօր եկամտային անհավասարությամբ ամենաբարձր մակարդակը, որը գրանցվել է անցումային երկրներում՝ նմանատիպ մեկ շնչի եկամուտով:

Սակայն, տնտեսական ճգնաժամը խիստ բացասական ազդեց Հայաստանի տնտեսական աճի և աղքատության մակարդակի վրա: Աղքատության մակարդակը 2015 թվականին կազմեց մոտ 30%: Ըստ «Սոցիալական պատկերը Հայաստանում և աղքատությունը» զեկույցի, որը պատրաստել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, աղքատների քանակը կազմել է մոտ 967 հազ. մարդ: 2015 թվականին հանրապետության մոտավորապես ամեն երրորդ բնակիչը աղքատ էր: Նրանցից 10.4%-ը համարվում էին շատ աղքատ (402 հազ. մարդ), իսկ 2.0% (82 հազ. մարդ) ծայրահեղ աղքատ: Այդ ամենը բերում է բազմաթիվ բացասական երևույթների: Նշենք դրանցից միայն մեկը:

Տնային տնտեսությունների եկամուտների անհավասար բաշխումը և, համապատասխանաբար, կրթության վրա մասնավոր ծախսերի անհավասար հնարավորությունները վտանգեցին կրթության համընդհանուր հասանելիության ավանդույթը, կրթության որակը: Որակյալ կրթության հասանելիության տարբերությունները հարուստների և աղքատների, գյուղական և քաղաքային վայրերի միջև զգալի են (գծապատկեր 11):

Նման բարդ սոցիալտնտեսական վիճակը բերում է նրան որ միգրացիան Հայաստանից չի նվազում, և դրա հետ կապված հեռանկարները մնում են **անորոշ**: Դա սոցիալտնտեսական զարգացման հեռանկարների անորոշությունն է:

Այսպես, միջազգային կազմակերպությունների կանխատեսմամբ, Հայաստանի տնտեսական աճը 2017 թվականին կկազմի մոտ 2.5-3%, չբացառելով, փոքր բացասական կամ դրական դինամիկա: ԱՄՀ կանխատեսումը պայմանավորված է Ռուսաստանի տնտեսության սպասվող աճի դանդաղեցմամբ, օտարերկրյա դրամական փոխանցումների կրճատմամբ: Մեկ այլ խոչընդոտող գործոն է ազգային պարտքի բեռի աճը:

Հայաստանում ձևավորված միգրացիոն ծավալները առաջ են քաշում այնպիսի հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ինչպիսին է **արտագաղթի ներուժը (պոպուլենցիալը)**: Այս կամ այն երկրի բնակչության միգրացիոն ներուժը պարզելու համար միայն այդ երկրի բնակչության միգրացիոն շարժունության ձեռք բերված մակարդակը հաշվառելը բավական չէ: Անհրաժեշտ է միաժամանակ հաշվառել նաև

այդ բնակչության հեռանկարային միգրացիոն շարժունությունը, որը հնարավոր է այս կամ այն երկրի բնակչության *պոպուլացիալ միգրացիոն* մոտեցումների իրագործման համար իդեալական պայմաններում: Ծագումնաբանորեն **«միգրացիոն պոպուլացիալ/ներուժ»** տերմինը նշանակում է վերաբնակեցումների ծածուկ հնարավորություններ, հզորություն, ուժ: *«Միգրացիոն ներուժ»* հասկացության լայն մեկնությունն այն դիտարկում է որպես հնարավորությունների, միջոցների, պաշարի աղբյուր, որոնք կարող են գործողության մեջ դրվել և օգտագործվել բնակչության վայրի փոփոխության խնդրի լուծման համար՝ մեկ առանձին մարդու, հասարակության, պետության՝ վերաբնակեցումների բնագավառում որոշակի նպատակի, հնարավորությունների հասնելու համար:

Այժմ ավելի մանրամասն կանգ առնենք ուղարկող երկրի և ընդունող երկրի համար *միգրացիայի հետևանքների* վրա: Աղյուսակ 6-ում, որը կազմվել է [23], [35], [36] աշխատությունների հիման վրա, ներկայացված են միգրացիայի դրական և բացասական հետևանքները դոնոր երկրի և ընդունող երկրի համար.

աղյուսակ 6


Ուղարկող երկիր (<i>դոնոր երկիր</i>)		Ընդունող երկիր (<i>ռեցիպիենտ երկիր</i>)	
<i>Դրական հետևանքներ</i>	<i>Բացասական հետևանքներ</i>	<i>Դրական հետևանքներ</i>	<i>Բացասական հետևանքներ</i>
Լարվածության նվազում աշխատաշուկայում	Որակյալ աշխատողներին կորցնելու հնարավորություն, նրանց պատրաստման վրա ծախսված միջոցները չեն վերադարձվում («ուղեղների արտահոսք»)	Տնտեսությունում զբաղված աշխատանքային ռեսուրսների ավելացում, արտադրության ծավալների, ընդհանուր եկամուտների և պահանջարկի աճ	Իրավիճակի սրում աշխատաշուկայում

Գործազրկության մակարդակի նվազում, ինչից բխում է բեռնվածությունը բյուջեի վրա ի հաշիվ գործազրկության համար տրվող նպաստների քանակի նվազման	Երկրին անհրաժեշտ աշխատունակ քաղաքացիներին կորցնելու հնարավորություն	Ծախսերի խնայողություն աշխատողների պատրաստման վրա: Բացի այդ, օտարերկրյա աշխատողները կարող են առաջինն ազատվել ճգնաժամի և այդտեղից ծագող գործազրկության պարագայում	Աշխատանքի գինն ընկնում է, ինչը կարող է առաջ բերել տեղի բնակչության դժգոհությունը
Բնակչության եկամուտների աճ ի հաշիվ միգրանտների դրամական փոխանցումների (տրանսֆերտներ)	Գնաճի հնարավորություն զգալի արտաքին տրանսֆերտների պարագայում	Ժամանակավոր միգրացիայի դեպքում թոշակների և այլ սոցիալական վճարների խնայողություն	Ազգամիջյան և կրոնական կոնֆլիկտների առաջացում
Որակյալ աշխատողների վերադարձի հնարավորություն, որոնք աշխատանքի փորձ և/կամ կրթություն են ստացել		Արտադրանքի մրցունակության աճ ի հաշիվ աշխատանքի ավելի ցածր արժեքի	Խնդիրներ՝ կապված անլեգալ ներգաղթի առաջացման հետ
Արտագաղթողները հաճախ անձնական ներդրումներ են կատարում հայրենական տնտեսությունում (անշարժ գույք, արժեթղթեր և այլն գնելով հայրենիքում)		Ժողովրդագրական խնդիրների լուծման հնարավորություն (հատկապես ընտանիքով միգրացիայի դեպքում)	

Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավիճակի բարելավման առաջնահերթ քայլերը կարող են լինել՝

1. Միգրացիոն քաղաքականության կողմնորոշիչների հստակեցում և դրանց հետևողական արտացոլում ընդունվող օրենքների, ծրագրերի, որոշումների մեջ: Դրա համար միգրացիոն քաղաքականությունը պետք է դուրս բերվի պասսիվ տիրույթից, միգրացիոն գործընթացներին առնչվող երևույթների սոսկ գնահատողի դերից հրաժարվել և դառնալ միգրացիոն գործընթացները կարգավորող: Միգրացիոն քաղաքականությունը պետք է դառնա ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման կողմնորոշիչը: [23]

2. Տնտեսության ժամանակակից մրցակցային առավելությունները, դրա արդիականացման հնարավորությունները որոշվում են երկրում կուտակված մտավոր ներուժով, այսինքն այն ռեսուրսներով որոնք շարունակում են մնալ մեր երկրի մրցակցային առավելությունները բնութագրող հիմնական գործոնը: Հայաստանը կարող է, գոնե տարածաշրջանում, մրցակցել բարձրորակ աշխատուժի, հատկապես ինժեներային կադրերի մրցակցային առավելություններով:



Գծապատկեր 11. Միգրացիայի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների փոխկապակցվածությունը


3. Երկրի ժողովրդագրական զարգացման հիմնախնդիրները դյուրին չեն, ուստի այս ոլորտում սոցիալական և տնտեսական ամեն մի որոշում խորը հիմնավորման կարիք ունի: Ինչպես ողջ քաղաքակիրթ աշխարհում, Հայաստանում ևս ժողովրդագրական գործընթացների կարգավորումը պետք է լինի պետության և հասարակության կարևորագույն խնդիրներից մեկը: Ուստի ժամանակն է մշակել նոր, արդի պայմաններին համապատասխանող ժողովրդագրական քաղաքականություն:

Միգրացիաի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների փոխկապակցվածությունը ներկայացնենք գծապատկերի տեսքով:

1.4 Տրանսֆերտների դինամիկան և օգտագործման կառուցվածքը

Աշխատանքային միգրացիայի ուղղակի հետևանքներից են դրամական փոխանցումներն արտերկրից, որոնք կարևոր սոցիալական և տնտեսական նշանակություն ունեն Հայաստանի համար: Մասնավոր դրամական փոխանցումները արտերկրից կարևոր են նաև աղքատության կրճատման համար:

Համաշխարհային բանկի վերջին *"Միգրացիա և դրամական փոխանցումներ"* ակնարկում (2016 թվական) [35]-[36] նշվում է, որ դրամական փոխանցումների հոսքերը դարձել են զարգացող երկրների համար արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Ըստ նրա, Հայաստանը մտնում է առավել կախված արտաքին մասնավոր դրամական փոխանցումներից տասնյակ երկրների ցանկը: 2014 թվականի արդյունքներով Հայաստան ուղարկվող մասնավոր դրամական փոխանցումների ծավալը կազմել է ՀՆԱ-ի 17.9%, որը դնում հանրապետությունը 10-րդ տեղում աշխարհում նման հոսքերի կախվածությունից (*գծապատկեր 12*):



Գծապատկեր 12. Առավել կախված փոխանցումներից պետություններ (ըստ Migration and Remittances Factbook, 2016)

ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն՝ Հայաստան ուղարկված տրանսֆերտների ծավալը 2017թ. կաճի 4-5%-ով: Տնտեսական աճի միտումներն աշխարհում ակներև են, և դրա տեմպերի արագացումն սպասվում է Հայաստանի գործընկեր երկրներում՝ Ռուսաստան, ԱՄՆ, ԵՄ, Չինաստան և զարգացող շուկաներ ունեցող պետություններ, ինչը բարենպաստ իրավիճակ է ստեղծում տնտեսական խնդիրների լուծման համար: Ընդ որում՝ ԿԲ կանխատեսումների համաձայն, Ռուսաստանից Հայաստան ուղարկվելիք տրանսֆերտների աճի տեմպերը 2017թ. կարագանան, և ռուբլին փոխանցումներում կշարունակի գերակշռել տրանսֆերտների ավելի քան 70%-ը բաժին կընկնի Ռուսաստանից կատարվողներին: 2016 թվականը ռուսաստանյան տնտեսության համար կայունացման ժամանակաշրջան էր, և լուրջ վայրկյաններ չեն նկատվել: Սա հուսադրող է, և դրական միտումների շարունակման պարագայում ակնկալիքները նույնպես դրական կլինեն, ինչը կանդրադառնա տրանսֆերտների ծավալի վրա: Կան նաև այլ դրական գործոններ, մասնավորապես, եթե նավթի գներն արագ կորելացվեն, ապա դա նույնպես կանդրադառնա Ռուսաստանում գտնվող և դրամական փոխանցումներ կատարող հայ աշխատանքային միգրանտների բարեկեցության վրա:

Հայաստանի բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակներով 2016թ. հունվար-հոկտեմբերին հանրապետություն է եկել

ավելի քան \$1,197.7 մլն դրամական միջոց, ինչը 10.4%-ով պակաս է 2015թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2016թ. հունվար-հոկտեմբերին Հայաստանից արտասահման փոխանցումների ծավալը կազմել է մոտ \$641.1 մլն անցած տարվա հունվար-հոկտեմբերի \$598.1 մլն-ի դիմաց (7.2% աճ): Մուտքերի զուտ հոսքը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է մոտ \$556.5 մլն 2015թ. հունվար-հոկտեմբերի մոտ \$738 մլն-ի դիմաց:

Հայաստան փոխանցված դրամական միջոցների ճնշող մասը բաժին է ընկնում Ռուսաստանին՝ հանրապետության մասնավոր տրանսֆերտների ընդհանուր ծավալի մոտ 60.8%-ը: Ռուսաստանից հանրապետություն ուղարկված դրամական փոխանցումները հունվար-հոկտեմբերին կազմել են մոտ \$727.7 մլն (13.6%-ի անկում), իսկ հանրապետությունից ՌԴ ուղարկվել է \$280.5 մլն (30% աճ):

Սակայն, ինչպես իր հաշվետվություններում մատնանշում է Համաշխարհային բանկը, միգրանտների դրամական փոխանցումների մասին ներկայացվող տվյալները բնավ լիովին չեն արտացոլում հայրենիքում միգրանտների ընտանիքների ստացած փաստական գումարները: Այս տվյալները հիմնվում են գլխավորապես այն տեղեկատվության վրա, որն ստացվում է կենտրոնական բանկերից, որոնք, որպես կանոն, հաշվի են առնում միայն այն դրամական փոխանցումները, որոնք միգրանտները կատարում են առևտրային բանկերի օգնությամբ: Դրանք չեն ներառում այն փոխանցումները, որոնք կատարվում են ոչ բանկային կազմակերպությունների, օրինակ՝ փոստային ծառայությունների կողմից: Բացի այդ, շատ դեպքերում միգրանտները ստիպված են փնտրել դրամը փոխանցելու այլընտրանքային, այդ թվում՝ անլեգալ կամ կիսալեգալ եղանակներ: Փողի զգալի մասը (*օրենսդրորեն սահմանված սահմանափակումների, փոխանցումների բարձր արժեքի, բանկային սեկտորի թերզարգացածության և այլ գործոնների պատճառներով*) միգրանտները հայրենիք են փոխանցում ոչ պաշտոնական խողովակներով, այդ թվում առձեռն՝ «ձեռքից ձեռք» տարբերակով: Համաշխարհային բանկի փորձագետները, հենվելով Գելափի ինստիտուտի սոցիոլոգիական հարցումների տվյալների վրա, կարծում են, որ ԱՊՀ շատ երկրներ ոչ պաշտոնական խողովակներով ստանում են միգրանտների փոխանցած միջոցների մոտ մեկ քառորդը: Այսպիսով, միգրանտների կատարած դրամական

փոխանցումների իրական չափը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում, ներառյալ պաշտոնական և ոչ պաշտոնական խողովակներով փոխանցվող՝ չգրանցվող մուտքերը, զգալիորեն գերազանցում է պաշտոնապես հրապարակվող գումարի մեծությունը:

Վերջին ժամանակներս լայն տարածում է ստացել այն տեսակետը, որի համաձայն՝ միգրանտներից ստացվող դրամական փոխանցումները թույլ են տալիս զարգացող պետություններին լուծել աղքատության խնդիրը, նպաստում են տնտեսությունում և մարդկային կապիտալում ներդրումների ավելացմանը, առողջապահության և կրթության համակարգերի զարգացմանը:

Անշուշտ, դրամական փոխանցումներն աջակցություն են ցուցաբերում միգրանտների՝ հայրենիքում մնացած ընտանիքներին՝ նպաստելով աղքատության և դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների շրջանում անհավասարության նվազմանը: Ի հավելումն այս երկու ներգործությունների՝ դրամական փոխանցումները նաև ընդլայնում են տնային տնտեսությունների բարեկեցությունը և բժշկական սպասարկումներ ստանալու հնարավորությունը:

Դրամական փոխանցումների չափերը զգալիորեն քիչ են ենթակա միգրանտների ելքի երկրներում ստեղծվող քաղաքական իրավիճակի և տնտեսական կոնյունկտուրայի ազդեցությանը: Ավելին, միգրանտները մեծ պատրաստակամություն են ցուցաբերում օգնելու իրենց ընտանիքներին հայրենիքում քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման դեպքերում: Միևնույն ժամանակ, աղքատության խնդրի լուծման, բնակչության ավելի լայն շերտերի համար կրթության մատչելիության ապահովման, առողջապահության համակարգի զարգացման և մարդկանց առողջական վիճակի բարելավման համար նշյալ փոխանցումների նշանակության, ներդրումների աճի և ապրանքների ու ծառայությունների արտադրության ծավալի ընդլայնման վրա ազդեցության հարցն այնքան էլ միանշանակ չէ:

Միգրանտներից ստացվող դրամական փոխանցումները կարող են նպաստել սոցիալական շերտատման մեծացմանը, բայց չեն հանգեցնում աղքատության վերացմանը:

Միգրանտներից փոխանցումներ ստացող ընտանիքներում այդ փոխանցումների զգալի մասը հատկացվում է պարտքերի մարմանը՝ կապված միգրացիայի նախաձեռնման հետ: Ընդ որում՝ պարտքը վճարելուց հետո մնացած միջոցները հիմնականում ծախսվում են սննդամթերքի, հագուստի և առաջին անհրաժեշտության այլ առարկաների ձեռքբերման վրա: Այս հանգամանքն էապես նվազեցնում է միգրանտների դրամական փոխանցումների նշանակությունը որպես գործոն, որն ի զորու է մեծացնել ներդրումները մարդկային կապիտալում, ընդլայնել զարգացող պետությունների բնակչության ավելի լայն շերտերի՝ կրթություն ստանալու հնարավորությունները: Անգամ այն դեպքերում, երբ միգրացիայի նախաձեռնման ժամանակ գերակա մոտիվը ծնողների ավելի շատ միջոցներ ձեռք բերելու ձգտումն է՝ երեխաների կրթություն ստանալու հնարավորությունն ապահովելու նպատակով, գործնականում միգրանտների ընտանիքների ստացած փոխանցումների լոկ ոչ մեծ մասը կարող է ծախսվել այդ նպատակի համար: Լավագույն դեպքում, ինչպես ցույց են տալիս մի շարք զարգացող երկրներում իրականացված հետազոտությունները, դրամական փոխանցումները նպաստում են այն բանին, որ միգրանտների երեխաներն ավելի քիչ են ենթակա լինում դպրոցներից դուրս մնալուն և ստանում են միջնակարգ կրթություն: Բայց դրամական փոխանցումների ազդեցությունը միգրանտների երեխաների՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության վրա գրեթե չնչին է: Ընդ որում՝ ստացվող փոխանցումները միշտ չէ, որ կարող են փոխհատուցել բարոյահոգեբանական և այլ վնասները, որոնց ենթարկվում են միգրանտների՝ հայրենիքում մնացած երեխաներն ու նրանց ընտանիքները: Արդյունքում՝ պարզվում է, որ այն ընտանիքներում, որոնցում մեկ կամ երկու ծնողն էլ գնում են այլ երկիր աշխատելու, միգրանտների երեխաների ոչ միայն բարձրագույն, այլև միջնակարգ կրթություն ստանալու հավանականությունը կարող է նվազել: Բացի այդ, անգամ այն դեպքերում, երբ դրամական փոխանցումներն օգտագործվում են կրթությունը վճարելու համար, խնդիր է մնում ստացվող կրթության որակը, որը չի կարող լուծվել ի հաշիվ միգրանտներից ստացվող դրամական փոխանցումների:

Միանշանակ և, որպես կանոն, էական չէ նաև դրամական փոխանցումների նշանակությունը տնտեսությունում ներդրումների աճի համար:

Ուսումնասիրությունները [18]-[24] ցույց են տալիս, որ Հայաստան մուտք գործող տրանսֆերտների հիմնական մասն օգտագործվում է ընթացիկ սպառողական ծախսերի վրա: Տրանսֆերտների օգտագործման մյուս ուղղություններն են բուժման ծախսերը, պարտքերի և վարկերի մարումը, ուսման վարձի վճարումը կամ շինարարական (*նորոգման*) աշխատանքների իրականացումը: Տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների կազմում շատ ցածր են ներդրումներ և խնայողություններ կատարողները: Դրամական փոխանցումները չեն խթանում գործարար ակտիվությունը, կրթական մակարդակը և ծառայությունների օգտագործումը:

Փաստորեն արտերկրում առնվազն մեկ միգրանտ ունեցող ՀՀ տնային տնտեսությունների կեսից ավելին չի կարողանում բավարարել կենսական պահանջմունքներն առանց տրանսֆերտների, ինչը, կարծում ենք, Հայաստանի տնտեսական անվտանգության տեսանկյունից բավական լուրջ խնդիր է:

Միգրացիայի հարատևումը վերջին տարիներին վերաճել է ընտանեկան էմիգրացիայի և հանգեցրել էմիգրանտի և հայրենիքում մնացած հարազատների կապի թուլացմանը: Կապի թուլացումը ընտանիքի բոլոր անդամների էմիգրացիայի հետևանքով հայրենիքի հետ առնչության նվազումն է կամ դրա բացակայությունը: Այսինքն՝ ընտանիքից յուրաքանչյուր հաջորդ էմիգրացվածը նվազեցնում է ընտանեկան միգրացիայի օգտակարության էֆեկտը՝ ընտանիքի անդամներից հայրենիք ուղղված դրամական միջոցների ծավալը: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին մոտ 10 տոկոսային կետով նվազել է արտերկրում միգրանտ-անդամներից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների բաժինը:

Աշխատուժի, որպես արտադրության կարևորագույն գործոնի միգրացիայի հիմնախնդիրը մշտապես գտնվել և գտնվում է տնտեսագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Աշխատուժի միգրացիան հասարակության զարգացմանը զուգահեռ ենթարկվում է որակական և քանակական փոփոխությունների, ծագում են նոր պատճառներ, գործոններ և պայմաններ, որոնք էլ պայմանավորում են այդ փոփոխությունները: Անկախ նրանից, որ աշխատուժի միգրացիայի հիմնախնդիրները

բազմակողմանիորեն քննարկվում են թե՛ միջազգային և վերապետական կառուցների, թե՛ պետական օրենսդիր և իրավասու մարմինների և կազմակերպությունների կողմից, դրանք գտնվում են նաև գիտական շրջանակների և փորձագետների ամենօրյա ուսումնասիրության տիրույթում, այնուամենայնիվ դեռևս մնում են բազմաթիվ չլուծված հարցեր, որոնք պահանջում են լրջագույն մոտեցումներ՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

1.5 ՀՀ աշխատանքային միգրացիայի գործընթացների ուսումնասիրման և կանխատեսման տեղեկատվական ապահովման հիմնախնդիրները

Արտաքին, ինչպես նաև, ներքին աշխատանքային միգրացիայի գործընթացների կարգավորումը, կատարելապես հանդիսանում է պետական հիմնարկների հիմնական իրավասություններից մեկը, քանի որ այդ գործընթացները ազդում են զբաղվածության, եկամտի, ազգաբնակչության կյանքի և ամբողջ հասարակության սոցիալական բարեկեցության մակարդակի վրա: Սակայն կառուցել ռազմավարությունը և մարտավարությունը, որպեսզի ազդել աշխատանքային միգրացիոն գործընթացների վրա, հաշվարկել և կանխատեսել նրանց զարգացումը երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև մշակել և իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ, որպեսզի նվազեցնել արտագաղթող Հայաստանի բնակչության նման ձևի զբաղվածության ինքնաբուխ զարգացման բացասական հետևանքները, անհնար է առանց հուսալի եւ համապատասխան վիճակագրական տեղեկատվության: Աշխատուժի արտաքին էմիգրացիան այն ծավալներով, որի վկան ենք դարձել վերջին 25 տարիներին, առայժմ վատ է ենթարկվում վիճակագրական չափման: Խնդիրը կայանում է նրանում, որ Հայաստանում բացակայում է աշխատանքային արտագաղթողների շարժի վերաբերյալ¹¹ վիճակագրական մոնիտորինգ իրականացնելու իրավական պահանջը:

¹¹ 2010թ. նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության կառավարության «Ռուսաստանի Դաշնությունում սոցիալ-տնտեսական խնդիրների և բնակչության մահացությունից, հիվանդություններից և հաշմվելուց առաջացող տնտեսական կորուստների մոնիթորինգի դաշնային վիճակագրական դիտարկումների համակարգի կազմակերպման մասին» № 946 որոշմամբ նախատեսված է ընտրանքային վիճակագրական դիտարկում անցկացնել միգրանտների աշխատանքի հետազոտման համար:

Ատենախոսության այս մասում, մենք կուսումնասիրենք միգրացիայի տվյալների հավաքագրման ձևերին:

Աշխատանքային միգրացիա – սա բնակչության ժամանակավոր տեղաշարժն է այլ տարածաշրջանում կամ երկրում աշխատանքի նպատակով՝ պարբերական վերադարձերով սովորական կամ մշտական բնակության վայր՝ անկախ սահմանը հատելու և աշխատանքի տեղավորվելու ձևից, ժամանակից և աշխատանքի պարբերականությունից [60]:

Անշուշտ, Հայաստանում իրականացվող ցանկացած հետազոտություն չպետք է կտրված լինի այն երկրների հարուստ գործելակերպից և փորձից, որոնք արդեն իրականացնում են տարատեսակ ընտրանքային հետազոտություններ: Նրանց նպատակն է բավական հավաստի, ամբողջական և ակտուալ տեղեկատվություն ստանալ աշխատանքային միգրացիայի գոյություն ունեցող վիճակի մասին, որի վրա կարելի է հենվել աշխատաշուկայի և միգրացիայի ոլորտի ուղղությամբ վարվող քաղաքականության մեջ: Արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծ մասամբ վիճակագրական դիտարկման ենթարկվում է արտաքին աշխատանքային միգրացիան [61]:

Գոյություն ունեն արտաքին աշխատանքային միգրացիայի մասին տվյալների աղբյուրների մի քանի տեսակներ: ՄՄԿ-ի, ԵԱՀԿ-ի և ԱՄԿ-ի¹² առաջարկած՝ ծագման և նշանակման երկրներում աշխատանքային միգրացիայի ոլորտում արդյունավետ քաղաքականության մշակման վերաբերյալ հրահանգում [62] նշված են հետևյալները.

- ընտանեկան միավորների հետազոտություն (*մարդաստանար կամ աշխատուժի հետազոտություններ*);
- վարչական հաշվառում (*բնակչության հաշվառման համակարգ կամ արտասահմանցիների գրանցում*);
- այլ վարչական աղբյուրներ (*կեցության թույլտվություն, աշխատանքի թույլտվություն կամ ապաստան տրամադրելու խնդրանք*);
- հսկիչ անցակետերից ստացված տվյալներ;
- սահմանին հավաքված տվյալներ (*մուտքի և ելքի վիզաների տեսակներ*):

¹² ՄՄԿ – Միգրացիայի միջազգային կազմակերպություն, ԵԱՀԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն, ԱՄԿ – Աշխատանքի միջազգային կազմակերպություն.

Արտասահմանյան երկրներում միգրանտների թվաքանակի չափման համար օգտագործվում են տվյալների տարբեր աղբյուրներ, այդ թվում բնակչության մարդահամարները և բնակչության ռեգիստրները, վիզային և սահմանին հսկողության տվյալները, ինչպես նաև տնային տնտեսությունների և ուղևորների որոշ հետազոտություններ: Հարկ է ընդգծել, որ ընտրանքային հետազոտությունները լայնորեն կիրառվում են ինչպես դոնոր երկրների, այնպես էլ ռեցիպիենտ երկրների կողմից: Նման դիտարկումների հիմնական ձևերի շարքին կարելի է դասել.

- աշխատուժի հետազոտությունը – *LFS*¹³ (*ԵՄ երկրներ, Ֆիլիպիններ, Կանադա և այլն*);
- ուղևորահոսքի հետազոտություն – *IPS* (*Մեծ Բրիտանիա, Մեքսիկա և այլն*);
- բնակչության ընթացիկ հետազոտություններ (*այդ թվում՝ ժողովրդագրական*) – *CPS* (*ԱՄՆ, Մեքսիկա և այլն*);
- տնային տնտեսությունների ինտեգրված հետազոտություն – *IHS* (*Բուլղարիա, Մեծ Բրիտանիա*);
- մասնագիտական պատրաստության և որակավորման հետազոտություն – *FQP* (*Ֆրանսիա, Մեքսիկա և այլն*);
- լոնգիթյուդ հետազոտություններ – *LSI* (*Կանադա, Մեծ Բրիտանիա*);
- ընտանիքների եկամուտների և ծախսերի հետազոտություն (*տնային տնտեսությունների բյուջեների*) – *FIES* (*Ֆիլիպիններ, Լեհաստան և այլն*);
- կենսամակարդակի հետազոտություն – *LSMS* (*Հայաստան, Տաջիկստան, Ադրբեջան և այլն*);

Հետաքրքիր է **ընդունող երկրների** փորձը, որոնք ընտրանքային հետազոտությունն օգտագործում են պետության տարածքում, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում արտասահմանյան քաղաքացիների թվաքանակի վիճակագրական գնահատման համար:

Հայաստանում, որը **դոնոր երկիր** է հանդիսանում, արտագաղթողների մասին տվյալները հավաքվում են շատ ավելի հազվադեպ, և վիճակագրական դիտարկումը

¹³ LFS – Labour Force Survey, IPS – International Passenger Survey, CPS – Current Population Survey, IHS – Integrated Household Survey, FQP – The Formation Qualification Professionnelle Survey, LSI – Longitudinal Survey of Immigrants, FIES – Family Income and Expenditures Survey, LSMS – Living Standards Measurement Study.

վատ է կազմակերպված: Հայաստանի տարածքում գործող վիճակագրական դիտարկման մեթոդները լուրջ բացթողումներ ունեն, ինչի արդյունքում տեղի է ունենում աշխատանքային միգրանտների զգալի թերահաշվարկ: Հայաստանին բնորոշ թերահաշվարկի ծավալները թույլ չեն տալիս ստանալ աշխատանքային արտագաղթի գործընթացի անգամ ընդհանուր բնութագրերը: Դա վերաբերում է ոչ միայն գործընթացի մասշտաբների մասին տվյալներին, այլև միգրանտների որակական հատկանիշների մասին մանրամասնեցված տվյալներին, տեղի է ունենում նաև նույն մարդկանց կրկնակի հաշվարկ: Կան երկրում տնային տնտեսությունների հետազոտությունների ընդամենը մի քանի օրինակներ, որոնք ընդգրկում են մի քանի հարյուր միգրանտներից կամ տնային տնտեսություններից (որոնց կազմում կան միգրանտներ) փոքր-ինչ ավելի:

Աշխատանքային արտագաղթի գնահատումը դոնոր երկրների մեծ մասն իրականացնում է ընտրանքային հետազոտությունների հիման վրա: Ընդ որում՝ միգրանտների վիճակագրական հաշվառման օբյեկտիվ վերլուծությունը ցույց է տալիս, որ ակնհայտ թերահաշվարկներ կան ամենուրեք, և դրանք հատուկ են աշխատանքային միգրացիայի մասին տվյալների բոլոր աղբյուրներին:

Հայաստանի Ազգային վիճակագրական վարչությունը, մասնակցելով միգրացիայի ձևավորման գործընթացին, ինքնուրույն կատարում է մարդահամար և հետազոտությունների մեծ մասը, ինչպես նաև մշակում է տվյալներ, որոնք ստանում է տարբեր վարչական աղբյուրներից: Յուրաքանչյուր աղբյուր արտացոլում է աշխատանքային միգրացիայի գործընթացի առանձին կողմերը և տալիս է աշխատանքային միգրանտների քանակական և որոշ որակական բնութագրումները:

Աշխատանքային միգրանտների մասին տեղեկատվության աղբյուրները

Մարդահամարները ընդունված է համարել տվյալների ամենակարևոր աղբյուրները միգրանտների կազմի մասին: Դրանց մի մասը համարվում է ավելի կարևոր, և միջազգային հանձնարարականները դրանք վերագրում են այսպես կոչված «առանցքայինների» կարգին (*core topics*): Կան նաև միգրացիայի այլ հատկանիշներ, որոնք վերագրում են հավելյալների կարգին (*non-core topics*) [62]: Դրանց օգնությամբ ստանում են միգրանտների մասին ավելի մանրամասն տեղեկություններ:

Չնայած մարդահամարի ակնհայտ արժանիքներին՝ այն էական օբյեկտիվ թերություն ունի. միջմարդահամարային միջակայքերը, որպես կանոն, տասնամյակներ են կազմում: Նման երկարատև ժամանակաշրջանը միգրացիայի՝ ժողովրդագրական գործընթացներից *«ամենազգայունի»* չափման համար անընդունելի է: Պակասող տեղեկատվությունը լրացնելուն, մարդահամարի թերությունները շտկելուն մասամբ օգնում են մասնագիտացված ընտրանքային հետազոտությունները:

Ընտրանքային հետազոտությունները մարդահամարներից ավելի ճկուն գործիք են այնպիսի տվյալների հավաքման համար, որոնք չեն կարող ստացվել այլ ճանապարհով: Հետազոտությունների ընթացքում կարելի է հավաքել միջազգային և ներքին աշխատանքային միգրացիայի խոր վերլուծությանը, նրա դետերմինանտների և անգամ հետևանքների ուսումնասիրությանն անհրաժեշտ տեղեկատվությունը ինչպես միգրանտների, այնպես էլ ծագման երկրում մնացած նրանց տնային տնտեսությունների համար [63]-[64]:

Ընդունված է առանձնացնել ընտրանքային հետազոտությունների երկու հիմնական տեսակ՝ ուղղված միգրացիայի ուսումնասիրմանը: Նախ՝ դրանք մասնագիտացված հետազոտություններն են՝ նվիրված հենց միգրացիայի ավելի խոր ուսումնասիրմանը, և երկրորդ՝ ընդհանուր պրոֆիլի հետազոտություններ (*ամենադարբեր թեմաներով*), որոնցում ներառված են մի քանի *«միգրացիոն»* հարցեր:

Ինչպես նշում է միջազգային միգրացիայի վիճակագրության ոլորտի խոշոր մասնագետ, պրոֆեսոր Ռիչարդ Բիլսբորոուն, մարդահամարները, բնակչության ընթացիկ հաշվարկը, վարչական վիճակագրությունը չեն կարող մանրամասն տեղեկատվություն տալ աշխատանքային միգրանտների, դրամական փոխանցումների և տնային տնտեսությունների մակարդակով դրանց օգտագործման մասին, քանի որ նման տեղեկատվությունը կարող է ստացվել միայն հենց տնային տնտեսությունների հարցման միջոցով [65]:

Այն հարցերի պատասխանները, որոնք անհրաժեշտ է հետազոտել բնակչության միգրացիաները վերլուծելիս, թույլ են տալիս ուսումնասիրել ***միգրացիայի դետերմինանտները***: Այդ տվյալները կարելի է ստանալ միայն տնային տնտեսությունների հետազոտության միջոցով, քանի որ կարևոր են այն պատճառները,

որոնք որոշվում են հենց միգրանտների (*կամ միգրանտի ընտանիքի անդամներից որևէ մեկի*) կողմից: Միգրացիայի դետերմինանտների վերլուծությունը պահանջում է տվյալներ՝ ա. ինչպես միգրանտների, այնպես էլ ոչ միգրանտների մասին, բ. միգրացիայի շրջանի/տևողության մասին: Այս հարցի պատասխանը նույնպես կարող է ստացվել միայն տնային տնտեսությունների հետազոտությամբ:

Հայաստանում աշխատանքային միգրացիայի մասին վիճակագրական տեղեկատվության շրջանակն ընդլայնելու համար անհրաժեշտ է զարգացնել վիճակագրական դիտարկման առկա ձևերն ու մեթոդները, ինչպես նաև լրացնել դրանք նորերի կազմակերպմամբ, որոնք թույլ կտան աշխատանքային միգրացիայի մասին ավելի ամբողջական, հավաստի և ակտուալ վիճակագրական տվյալներ ստանալ՝ միգրացիոն քաղաքականության մշակման և իրագործման համար:

Կապված այն բանի հետ, որ Հայաստանը պատկանում է զգալի արտագաղթ ունեցող պետությունների թվին, իսկ տվյալների հավաքման առկա համակարգերը համարժեք պատկերացում չեն տալիս մեկնումների մասին, առաջարկվում է մարդահամարների և բնակչության հետազոտությունների ծրագրում ներառել հարցերի հատուկ խումբ՝ այսպես կոչված ***էմիգրացիոն մոդուլ*** (*արտագաղթի գնահատման հարցերով*): Նման մոտեցում կիրառում են զգալի արտագաղթ (երկարաժամկետ և կարճաժամկետ) ունեցող պետությունները:

Նպատակահարմար է կազմակերպել տնային տնտեսությունների առանձին մասնագիտացված ընտրանքային հետազոտություն՝ ուսումնասիրելու և գնահատելու համար աշխատաշուկայում լայնորեն տարածված այնպիսի երևույթը, ինչպիսին է ***ճոճանակային աշխատանքային միգրացիան***:

Մշակելով տնային տնտեսությունների հետազոտության ընթացակարգի հայեցակարգային հարցերը, մեթոդաբանական և կազմակերպչական մոտեցումները՝ միգրանտների աշխատանքի մասին վիճակագրական տեղեկատվություն ստանալու համար, չպետք է մոռանալ, որ չափազանց մեծ է նաև ***վարչական վիճակագրության*** նշանակությունը: Տարօրինակ է, բայց փաստ, որ հենց վարչական վիճակագրությունն է, կապված միգրացիայի երևույթի հետ, ներկայում տեղեկատվությունը ամենաանհավաստի և ոչ լիարժեք աղբյուրը:

Այսպիսով, անհրաժեշտ է կատարելագործել աշխատանքային արտագաղթի մասին տեղեկատվության ստանալու ողջ շղինանոցը, ներառյալ մարդահամարները, տնային տնտեսությունների մասնագիտացված հետազոտությունները, որոնց անդամ են հանդիսանում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միգրանտները, վարչական վիճակագրությունը՝ այս ոլորտում արտասահմանյան երկրների փորձի հաշվառմամբ:

ԳԼՈՒԽ 2

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

2.1. Միգրացիան ներկայացումը նոր դասական տնտեսագիտական աճի տեսության տնտեսամաթեմատիկական մոդելներում

Հայաստանում, տարբեր տարիներ, իրականացված սոցիալական հետազոտությունները ցույց տվեցին, որ ընդմիջտ արտագաղթելու դիրքորոշում ունեցող Հայաստանի քաղաքացիների շրջանում առավել տարածված են «*յնտեսական պարճառները*», և տարեց տարի այն աճում է: Մեկնելու կարևոր պատճառներից են նաև՝ Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը:

Դրա անմիջական ապացույցն է այն փաստը, որ 2001-2007թթ. միջազգային տնտեսության արագ աճի պարագայում, ինչը իր հերթին բերեց Հայաստանի ՀՆԱ տարեկան աճին, գերազանցելով 10%-ը, և արդյունքում, 2004-2006 թվականներին ընթացքում Հայաստան ժամանածների և մեկնածների սալդոն նույնիսկ դարձել էր դրական: Հետևաբար, արտագաղթի նվազեցման տեսակետից՝ տնտեսության զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, արժանապատիվ վարձատրությունը և մրցակցային գործարար միջավայրի ձևավորումը ունեն հանգուցային նշանակություն:

Հիմնվելով Հավիեր Սալա-ի-Մարտին (*Xavier Sala-i-Martin*) և Ռոբերտ Բարրո (*Robert Barro*), ինչպես նաև Օլիվյեր Բլաբչարդի (*O. Blabchard*), Ֆիլիպ Վեյլի (*F. Weil*) և Ջոան Բրաունի (*Juan Braun*) աշխատանքների վրա, ***միգրացիան ներառվելու է տնտեսական աճի մոդելներում և վերլուծվելու է համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակին և նրա ազգաբնակչության արտագաղթին: Հանդիսանալով ԵԱՏՄ անդամ, և գտնվելով ԵՄՀ համակարգում, Հայաստանի տնտեսությունը իր վրա է կրում կայուն աշխարհագրական կողմնորոշում ունեցող միգրացիոն հոսքերի ազդեցությունը: Մեր խնդիրն է,***

տնտեսամաթեմատիկական մոդելների միջոցով, Հայաստանի օրինակով, արտահայտել տնտեսական զարգացումների ազդեցությունը և տնտեսական աճի թրենդը միգրացիոն գործընթացի վրա, ինչպես նաև հակառակը: Հայաստանում դիտարկվող բարձր միգրացիոն հոսքերի պայմաններում՝ նման ուսումնասիրությունները կարևոր և արդիական են:

Ըստ Հավիեր Սալա-ի-Մարտինի և Ռոբերտ Բարոի վերլուծության տրամաբանության, որպեսզի միգրացիան ներառվի տնտեսական աճի մոդելներում, անհրաժեշտ է փորձել ընդգրկել ազգաբնակչության և աշխատուժի քանակը էնդոգեն փոփոխականների մեջ: Այս նպատակով, միգրացիան դիտարկվում է որպես երկրում ստեղծված սոցիալտնտեսական իրավիճակի արդյունք: Այդ մոտեցման շրջանակներում բնակչության և աշխատուժի քանակը կարող է փոփոխվել, կախված ծնելիության և մահացության չափից:

Միգրացիայի սահմանելիս, այն դիտվում է որպես մարդկանց տեղափոխման գործընթաց, որի արդյունքում երկրում փոփոխվում է ազգաբնակչության և աշխատուժի քանակը:

Միգրացիան տարբերվում է բնակչության իրական աճից: Առաջինը, միգրացիայի դեպքում, ընդունող երկրում գրանցվող բնակչության աճը նշանակում է համապատասխանաբար, որ մյուս երկրում բնակչությունը նվազում է: Այդ պատճառով, անհրաժեշտ է դիտարկել **ներգաղթը (immigration)** և **արտագաղթը (emigratia)**, որպես նույն գործընթացի տարբեր կողմեր:

Եվ երկրորդը, միգրանտները գալիս են, ինչպես նաև հեռանում են երկրից (օրինակ, Հայաստանից) արդեն կուտակված մարդկային կապիտալով: Քանի որ միգրացիան ներառում է մարդկային կապիտալի տեղափոխումը, ապա աշխատուժի շարժունությունը նշանակում է նաև այդ կապիտալի որոշ շարժունություն:

Որոշ առումներով, միգրացիոն գործընթացը կամ աշխատուժի շարժունությունը, համանման է կապիտալի շարժունությանը: Տարբերությունը կայանում է նրանում, որ, եթե կապիտալը հոսում է ցածր չափաքանակի (*նորմա*) եկամտաբերությամբ երկիրներից դեպի բարձր չափաքանակի եկամտաբերությամբ երկիրներ, ապա աշխատուժը տեղափոխվում է ցածր աշխատավարձով և ավելի պակաս բարենպաստ

ապրուստի պայմաններով երկիրներից (*օրինակ, Հայաստանը*) դեպի բարձր աշխատավարձով ու առավել բարենպաստ ապրուստի պայմաններով երկիրներ: Ըստ նոր դասական տնտեսագիտական տեսության, կապիտալի շարժունությունը նպաստում է երկիրների **մոտեցմանը/մոտարկմանը** (*converge, կոնվերգենցիա*), և ընթանալով որպես տարբերությունների հարթեցման գործընթաց, բերում է նրանց կայուն վիճակին. նմանատիպ, ինչպես գտնում են Հավիեր Սալա-ի-Մարտինին և Ռոբերտ Բարրուն, աշխատուժի շարժունականությունը բերում է նույն արդյունքի:

Հարկ ենք գտնում կատարել նոր դասական տնտեսագիտական տեսության վերաբերյալ որոշ դիտարկումներ: Ռոյ Հարրոդը (*Roy Harrod*) [66] և Էվսեյ Դոմարը [*Evsey Domar*] [67] ցույց տվեցին, երկարաժամկետ հատվածի համար, էքսպոնենցիալ աճի հնարավորությունը, հիմնված՝ կապիտալի կուտակման և արտադրողականության փոփոխությունների վրա: Այն հինք դարձավ տնտեսական աճի նոր դասական տնտեսագիտության տեսության համար, որը ձևավորվեց 1950 թվականներին, ի շնորհիվ, առաջին հերթին, Ռ. Սոլոուի (*R. Solow*) [41] և Տ. Սվենի (*T. Swan*) [42] հետազոտություններին: Այնտեղ, կարևոր ուշադրությունը դարձվում է կապիտալի կուտակման և արտադրության երկու հիմնական գործոնների՝ աշխատանքի և կապիտալի կապի միջև, ու իրենց հարաբերությանը արտադրողականության էկզոգեն փոփոխության՝ տեխնոլոգիական առաջընթացին: Լրացված 1960-ականներին դինամիկ օպտիմալացման մոդելներով (*Ռամսեյ խնդրի հետ միասին (Ramsey)*), նոր դասական մոդելը ձեռք բերեց անհրաժեշտ ամբողջականություն և կատարելություն, որը թույլ տվեց նրան մինչ այսօր մնալ տնտեսական աճի տեսության հիմքը:

Տնտեսական աճի նոր դասական (*նեոդասական*) տեսության կարկառուն դեմքերից են G.Borts, R.Barro, Ch.Jones, H.Zibert, G.Menkyu, D.Romer, K.Sala-i-Martin, T.Svan, R.Solou, A.Weil, R.Holl. Նրանց տեսություններում (*մոդելներում*) տնտեսական աճը բացատրվում է՝ նվազող և մշտական ծավալի արդյունք ունեցող արտադրական ֆունկցիայի հիմնական կանոններով, ռեգիոնների մոտեցմամբ կամ կոնվերգենցիայով, միջտարածաշրջանային առևտրով և արտադրության գործոնների շարժունությամբ, ազատ մրցակցության պայմաններով, հավասարակշռությամբ:

Այս տեսությունների շարունակաբար զարգացումները, որոնք հաշվի էին առել XX դարի 80-ական թվականների կեսերից, տարբեր երկրներում գրանցված էական փոփոխությունները տնտեսական աճի բնույթներում՝ առաջացնելով նոր երևույթներ նրանց գործընթացներում, բերեցին, այսպես կոչված, **«նոր ալիք» («նոր հոսանքներ»)** էնդոգեն տնտեսական աճի տեսական մոդելներին: Այն հեղափոխություն իրականացրեց տնտեսական աճի տեսական հայացքներում:

Հիմնականում այս մոդելների շրջանակներում և դրսևորվեց առաջադրված Ռոբերտ Բարրոի կողմից **պայմանական (կամ հարաբերական) կոնվերգենցիայի վարկածը**, որը ծագել է որպես պատասխան տնտեսագիտությունում ձևավորված կենտրոնական հարցերից մեկի նկատմամբ՝ տարբեր երկրների երկարաժամկետ հատվածում զարգացման մակարդակների մոտեցման վերաբերյալ: Իրականացված հետազոտությունների արդյունքում, նա կարողացավ ստանալ տնտեսական աճի տեսության կենտրոնական հարցի վերաբերյալ պատասխանը, կապված երկարաժամկետ հեռանկարում տարբեր երկրների զարգացման մոտարկման մակարդակների հետ:

Սակայն, էմպիրիկ հետազոտությունների զարգացման հետ միասին, հիմնական տեսության առջև առաջացան հարցեր, որոնց չտրվեց պատասխան: Եվ ամենակարևորը, բացատրություն էր պահանջում նոր դասական տեսության կայուն զարգացման աճի հիմնական **«շարժիչը»**՝ տեխնիկական առաջընթացը: Տեխնիկական փոփոխությունների էկզոգեն բնույթը, իր ծագման օրվանից, կառուցված մոդելի խնդրահարույցն է:

Այս հիմնախնդրի լուծման իրական հնարավորությունը կարող է ստանալ վերն նշված **«նոր ալիք» («նոր հոսանքներ»)** էնդոգեն տնտեսական աճի տեսական մոդելների շրջանակներում: Խոսքը վերաբերվում է տնտեսական աճի տեսություններին, որոնք շեշտադրվում են մշտական աճի **ներքին աղբյուրների** որոնման վրա և զուգակցում մշտական աճի առաջացման հնարավորությունը մոդելի **վարքագծային պարամետրների** հետ:

Մոդելները, մշակող տնտեսական աճի տեսությունը այդ դրույթներից, կոչվում են **«էնդոգեն աճի տեսություն»**, ի տարբերություն անցյալի՝ **«էկզոգեն»**: Առաջին

շրջանում դրանք Պոլ Ռոմերի (P. Romer) [68]-[69], Ռոբերտ Լուկասի (R. Lucas) [70]-[71], Սերջիո Ռեբելոյի (S. Rebelo) [72] հիմնական աշխատանքներն են: Նրանց կողմից մշակված մոդելները բացատրում են աճի աղբյուրները, օգտագործելով պրակտիկայում և մարդկային կապիտալի վրա ուսուցման արդյունքներով առաջացող արտաքին ազդեցությունը, դրանով իսկ հիմնավորելով սահմանային արտադրողականության նվազման բացակայությունը:

«Նոր ալիքի» երկրորդ շարքի մոդելները նպատաուղված էին բացատրելու տեխնոլոգիական առաջընթացի ծագումը և մանրակրկիտ մշակելու նորարարությունների առաջացման և իրացման կառուցվածքը: Այս մոդելները առանձնացնում են արտադրական նորարարությունը որպես հատուկ արտադրական ոլորտ՝ դիտարկելով այդ արտադրության շահագործման մանրամասնությունները, ֆինանսավորման աղբյուրները և այլն: Էնդոգեն աճի այս մոդելները ստացան «Հետազոտություն&Մշակումներ» («Research&Development» / *НИОКР*) անվանումը (*R&D կամ գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական մշակումներ (ԳՀՓԿՄ)*): Այդ ուղղությանը վերաբերող առավել կարևոր և հիմնարար համարվեցին Պոլ Ռոմերի, Ագիոն և Հովիտի (Aghion, Xowitt) [73], Գրոսմանը և Հելպմանի (Grossman, Helpman) [74] մոդելները, որոնք դիտվեցին տնտեսական աճի նորարարության տեսության հիմքը: Հետագա մշակումները հիմնվում էին վերը նշված մոդելների վրա, և տեսության զարգացումը ընթացավ տարբեր ուղղություններով:

Նշված տնտեսական աճի էնդոգեն մոդելները իրանց շարունակական զարգացումը կարող են ստանալ, եթե նրանցում ներառվեն նաև միգրացիոն հոսքերը: Այն կարելի դիտարկել, որպես Հավիեր Սալա-ի-Մարտինի և Ռոբերտ Բարոի կողմից առաջարկված տնտեսական աճի մոդելների տրամաբանական լավացումը, հիմնված էապես նոր արտադրական ֆունկցիայի հիմքի վրա, որի դեպքում դիտարկվելու է էնդոգեն բնույթ կրող տեխնիկական (*տեխնոլոգիական*) փոփոխության ազդեցությունը միգրացիոն գործընթացի վրա: Դա իրենից ներկայացնում է առանձին հիմնահարց:

Հետևելով Հավիեր Սալա-ի-Մարտինի և Ռոբերտ Բարոի ուսումնասիրության մեթոդաբանությանը, նպատակ ունենալով ներառել միգրացիոն հոսքերը տնտեսական աճի մեջ, նպատակահարմար է միգրացիայի վերլուծությունը սկսել նոր դասական

տնտեսագիտական տեսության հիմնաքարերից՝ տնտեսական աճի **Սոլոու-Սվէնի մոդելից**, որի դասական տարբերակը ուսումնասիրում է փակ տնտեսությունը՝ էկզոգեն տրված կուտակման հաստատուն չափաքանակով (*նորմայով*):

Սոլոու-Սվէնի մոդելի ընդարձակումը, որտեղ ներառված է միգրացիան, նշանակում է, որ տնտեսությունը մասնակի բաց է, այսինքն, ենթադրվում է, որ աշխատուժը և մարդկային կապիտալը շարժուն են: Այս մոդելի համար, կանխադրվում է միայն միգրացիաի ֆունկցիան: Դա նշանակում է, որ չնայած վերլուծության ընթացքում ընդունվում է տնտեսական աճի հակառակ ազդեցությունը աշխատավարձի և միգրացիաի գործակցի վրա, բայց դիտարկվող միգրանտների հիմնական օպտիմալացման խնդիրը այն հաշվի չի առնում:

Մեր հաջորդ ուսումնասիրման առարկան է **մոդիֆիկացվաց Ռամսեի մոդելն**՝ Սոլոու-Սվէնի մոդելի համար միգրացիայով: Մոդիֆիկացվաց Ռամսեի մոդելում նորույթ է հանդիսանում՝ միգրացիաի ու կուտակման չափաքանակի ընտրության միջև փոխներգործությունը:

Եվ, մեր կողմից, նախատեսվող մյուս, երրորդ մոտեցումը, կհանդիսանա այդ երկու մոդելների տրամաբանական շարունակությունը՝ **Քրաունի մոդելը**, որտեղ թույլ է տրվում կապիտալի շարժունությունը, իսկ միգրացիաի գործակիցը որոշվում է տնային տնտեսությունների վարքի օպտիմալացման խնդրից: Այս դեպքում, մենք կարող ենք վերլուծել, թե ինչպես ծախսերի և օգուտների փոփոխությունները, որոնք առաջանում են միգրացիայի պատճառով, ազդում են միգրացիայի դինամիկ հետագծերի և տնտեսական աճի վրա:

Չնայած նրան, որ հիմնականում դիտարկվում է ազգաբնակչության միգրացիան՝ տնտեսագիտության նոր դասական տեսության շրջանակներում, հիմնվելով, ազգաբնակչության և աշխատուժի քանակի վրա, այնուհանդերձ գոյություն ունեն ևս մի շարք այլ, միգրացիաի ուսումնասիրության վերաբերյալ, տեսական մոտեցումներ: S. S. Russell իր աշխատանքում (*Russel*) [75] բերում է հինգ հիմնական միջազգային միգրացիաի տեսությունները. դրանք են.

- **Նոր դասական տնտեսագիտական տեսություն. մակրոմոտեցում:** Ըստ այդ մոտեցման, ազգաբնակչության միգրացիաի հիմնական պատճառը՝ արտագաղթի

և ներգաղթի ռեգիոններում ձևավորված աշխատանքի հանդեպ պահանջարկի և առաջարկի աշխարհագրական տարբերություններն են: Համապատասխանաբար, աշխատանքի շուկայի ցուցանիշների տարբերությունները բերում են բնակչության շարժունությանը:

- **Նոր դասական տնտեսագիտական տեսություն. միկրոմոտեցում:** Այս մոտեցումը կենտրոնանում է ռացիոնալ տնտեսական գործակալների վրա, որոնք միգրացիայի մասին ընդունում են որոշում, հիմնվելով սպասվող օգուտների և միգրացիայի ծախսերի համեմատության վրա: Անհատը որոշում է փոխել բնակության վայրը, եթե սպասվող օգուտները ավելի է մեծ են, քան միգրացիայի ծախսերը:
- **Միգրացիայի նոր տնտեսական տեսություն:** Այս տեսությունը դիտարկում է միգրացիայի որպես տնային տնտեսությունների ռազմավարություն: Ընտանիքը դիվերսիֆիկացնում է եկամուտների աղբյուրները, նվազագույնի հասցնելով ռիսկերը: Նման մոտեցումը, ի տարբերություն նոր դասական մակրոտեսության, ենթադրում է, որ աշխատավարձերի միջոցառման տարբերությունները միգրացիայի համար անհրաժեշտ պայման չէ: Կառավարությունը կարող է ազդել միգրացիայի վրա, դրա համար իրականացնելով սոցիալական քաղաքականության մեջ տարբեր միջոցառումներ, որոնք կարող են ազդել եկամուտների բաշխման վրա, և հետևաբար, գաղթել ցանկություն ունենալու վրա:
- **Աշխատանքի շուկայի երկակի տեսությունը:** Համաձայն այդ տեսության, որոշ ռեգիոններում կարող է առաջանալ պահանջարկ ցածր որակավորումով աշխատողների նկատմամբ, ինչը նպաստում է միգրացիային: Այդ դեպքում, միգրացիայի առաջանում է երբ գոյություն ունի աշխատանքի պահանջարկ: Սակայն, նաև պահանջվում է, որ նկատելի լինեն տարբերությունները ցածր որակավորում ունեցող աշխատողների միջև:

2.2. Միգրացիան Սոլրու-Սվէնի մոդելում: Բետա- ու սիգմա կոնվերգենցիաի, դիվերգենցիաի պայմանները

Մոդելը միգրացիայով. Հավիեր Սալա-ի-Մարտինին և Ռոբերտ Բարոուն [46], [76]-[78] իրենց ուսումնասիրությունը սկսում են Սոլրու-Սվէնի մոդելից՝ փակ տնտեսության համար, որտեղ նրանք նախատեսում են ներառել միգրացիան: Նրանք ենթադրում են, որ բնակչությունը շարժուն է, իսկ տնտեսությունը փակ՝ արտասահմանյան ապրանքների և ակտիվների համար: Նման մոտեցումը անհրաժեշտ է (*քանի որ ենթադրվում է, որ մարդիկ ավելի շարժուն են քան կապիտալը*), բայց դա թույլ է տալիս նրանց գալ որոշակի եզրահանգումների, կապված միգրացիաի ազդեցությանը տնտեսական աճի վրա: Հետագայում, Հավիեր Սալա-ի-Մարտինին և Ռոբերտ Բարոուն, իրանց կողմից առաջարկված մոդելում ներառում են նաև կապիտալի շարժունությունը:

Նախ, նրանք սահմանում են $M(t)$ որպես միգրանտների հոսք դեպի երկիր կամ երկրից դուրս, այսինքն, նա կարող է լինել կամ դրական, կամ բացասական, իսկ $k(t)$ -ով նշանակում են կապիտալի քանակը, որը իր հետ բերում է յուրաքանչյուր միգրանտ ընդունող երկիր: **Հայաստանի դեպքում**, $M(t)$ ունի բացասական նշան, իսկ $k(t)$ նշանակում է այն կապիտալը, որը դուրս է բերվում երկրից: Ինչ վերաբերվում է կապիտալին, ապա այն չի կարող ինքնուրույն տեղափոխվել, հետևաբար, կապիտալի քանակը, որը յուրաքանչյուր միգրանտ բերում է իր հետ, որոշում է կապիտալի շարժունության մակարդակը:

Ընդհանուր առմամբ ընդունվում է, որ միգրանտները չեն տեղափոխում իրենց հետ ֆիզիկական կապիտալ (*շինություններ, մեքենաներ*), սակայն, տիրապետում են բավականաչափ մարդկային կապիտալով: Պարզության համար, չի տարբերակվում կապիտալը ըստ ձևերի, և համապատասխանաբար, դիտարկվում է ամբողջական $\tilde{S}$ կապիտալը, որը ներառում է իր մեջ և ֆիզիկական և մարդկային կապիտալը՝ որը

տեղափոխում է միգրանտը: **Հայաստանի դեպքում**, $\tilde{S}$ դա այն ամբողջական կապիտալն է, որը դուրս է բերվում երկրից:

Ընդունվում է նաև այն ենթադրությունը, որ միգրանտները չեն կարող ստանալ ֆինանսական շահույթ աղբյուրից, որը գտնվում է իրանց հայրենիքում: Մարդիկ, որոնք փոխում են բնակության վայրը, թողնում կամ սպառում են ամբողջ կապիտալը, որը նրանք չեն կարող տանել իրենց հետ: Այս պահով, չեն դիտարկվում նաև հնարավորությունները արտագաղթողների կողմից գումարների փոխանցումը հարազատներին, որոնք մնացել են միգրանտի հայրենիքում:

Այսպիսին են Հ. Սալա-ի-Մարտինի և Ռ. Բարրոուի կողմից առաջարկվող մոդելի վերաբերյալ ընդունվող սահմանափակումները:

Այդ հեղինակները, որպեսզի ստանան իրանց կողմից առաջարկված տնտեսական աճի նոր մոդելը, սկսում են նրանից, որ նոր ձևով են սահմանում են, երկրի ներսում, ազգաբնակչության և աշխատուժի $L(t)$ աճի արագությունը (*տեմպ*), որը հավասար է ծնելիության և մահաժողովրդի տարբերությանը, և գումարած նոր, լրացուցիչ զուտ միգրացիայի գործակցը.

$$\frac{\dot{L}}{L} = n + \frac{M}{L} = n + S,$$

որտեղ $S \equiv \frac{M}{L}$ - **զուտ միգրացիայի գործակիցն է**, n - էկզոգեն տրված ազգաբնակչության և աշխատուժի աճի տեմպը: **Հայաստանի դեպքում**, սույն բանաձևում S ունի բացասական նշան, քանի որ $M(t)$ բացասական է:

Համաձայն արտադրական ֆունկցիայի հիմնական մոդելին, ֆիզիկական կապիտալի զուտ աճը՝ մեկ միավոր ժամանակի համար, հավասար է համախառն ներդրումներին հանած մաշվածություն: Ձևափոխելով այդ սահմանումը, Հ. Սալա-ի-Մարտինին և Ռ. Բարրուն ներկայացնում են հիմնական կապիտալի փոփոխությունը, երկրի ներսում, հետևյալ տեսքով.

$$\dot{K} = s \cdot F(K, L) - \delta \cdot K + \tilde{S} \cdot M,$$

որտեղ s խնայողության համախառն հաստատուն չափաքանակն է (*նորմա*); $F(K, L)$ Կոր-Դուգլասի ֆունկցիան; δ - հիմնական կապիտալի մաշվածության դրույքաչափը: Այս հավասարումը, **Հայաստանի դեպքում** ունի հետևյալ տեսքը.

$$\dot{K} = s \cdot F(K, L) - \delta \cdot K - \tilde{S} \cdot M :$$

Այս տարբերակում, չի բացառվում, որ կապիտալի փոփոխությունը՝ $\dot{K}$, կարող է ունենալ բացասական նշան, այսինքն, գրանցվում է կապիտալի նվազում այն երկրում, որտեղից հեռանում են միգրանտները: Բայց դա հնարավոր է միայն մի պարագայում, եթե $\tilde{S}$ իր մեջ ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ մարդկային կապիտալը:

Այսպիսով, ի տարբերություն Կոր-Դուգլասի ֆունկցիայի միջոցով կապիտալի դասական (*բազային*) ներկայացման, Հ. Սալա-ի-Մարտինին և Ռ. Բարրուն վերջինում դիտարկում են ամբողջական կապիտալի մասն կազմող $\tilde{S} \cdot M$ նոր գործակիցը, որը ազդում է կապիտալի փոփոխության վրա՝ $\dot{K}$, և բերված է եղել ներգաղթյալի (*իմիգրանտ*) կամ տարվել է (*հանվել է*) երկրից գաղթականի (*էմիգրանտի*) կողմից. ինչպես վերն արդեն նշել են, այդ վերջին տարբերակը համապատասխանում է **Հայաստանում** ձևավորված իրականությանը:

Անենք հետևյալ դիտողությունը. Սալա-ի-Մարտինին և Ռ. Բարրուն [76] որպես $k(t)$ կապիտալի գործակից դիտարկում են հետևյալ սահմանմամբ պարամետրը.

$$\hat{k} \equiv \frac{k}{T(n)} = \frac{K}{[L \cdot T(n)]},$$

$L \cdot T(n) \equiv \hat{L}$ անվանում են **աշխատանքի արդյունավետ ծավալը**՝ L աշխատանքի ֆիզիկական ծավալը բազմապատկած նրա արդյունավետության վրա՝ $T(t)$: Ըստ նրանց, $\hat{k}$ ներկայացնում է իրանից կապիտալի ծավալը մեկ միավոր արդյունավետ աշխատանքի նկատմամբ, որը մենք, հետագայում, նշանակում ենք $k(t)$:

Սալա-ի-Մարտին և Բարրուն, շարունակելով իրենց հետազոտության տրամաբանությունը, և հիմնվելով Սոլոու-Սվենի տնտեսական աճի հիմնարար դիֆերենցիալ մոդելի վրա՝ $\dot{k} = s \cdot f(k) - (n + \delta) \cdot k$, դուրս են բերում **ձևափոխված Սոլոու-Սվենի տնտեսական աճի հիմնարար դիֆերենցիալ մոդելը, որի մեջ ներառված են միգրացիոն հոսքերը**: Այդ դեպքում ստացվում է **կապիտալի աճի**

արագությունը (տեմպը) k ՝ մեկ արդյունավետ աշխատակցի համար, որը ունի հետևյալ տեսքն.

$$\frac{\dot{k}}{k} = \frac{s \cdot f(k)}{k} - (x + n + \delta) - \aleph \cdot \left(1 - \frac{\mathfrak{Z}}{k}\right), \quad (2)$$

որտեղ.

- $\mathfrak{Z} \equiv \tilde{\mathfrak{Z}}e^{-xt}$ կապիտալի քանակը մեկ “արդյունավետ ներգաղթյալի” համար, այսինքն՝ իմիգրանտների (նույն է՝ էմիգրանտների) քանակը ավելանում է e^{xt} էկզոգեն տեխնոլոգիական գործոնի հետ միասին (էկզոգեն տեխնոլոգիական առաջընթացի x չափաքանակը (նորման) նույն է երկրի ներսում և արտասահմանում);
- $\aleph \cdot (1 - (\mathfrak{Z}/k))$ – միգրացիայի նոր գործակիցը;
- $(x + n + \delta)$ - մաշվածության արդյունավետ դրույքաչափն Սոլոու-Սվենի դասական մոդելում առանց միգրացիայի, այսինքն, դա կապիտալի դուրսգրման k չափաքանակն է, երբ արդյունավետ աշխատանքը աճում է $x + n$ դրույքաչափով և տրված է հիմնական կապիտալի մաշվածության δ դրույքաչափը:

Մոդելի դասական տեսքն կստանանք, եթե $\aleph = 0$ կամ $\mathfrak{Z} = k$:¹⁴

Ստացված (2) հավասարման վերաբերյալ կատարենք որոշ պարզաբանումներ: Քանի որ միգրանտները իրանց հետ տանում են փոքր քանակի ֆիզիկական կապիտալ (իջքան հնարավոր է), ապա $\mathfrak{Z} < k$:¹⁵ Այստեղ կա մեկ բացառություն, երբ մարդկային կապիտալը, որը հասանելի է մեկ միգրանտին, էականորեն ավելի մեծ է, քան որը հասանելի է երկրի ներսում մեկ աշխատողին, ինչը Հայաստանի դեպքում այն արդիական չէ: $\mathfrak{Z} < k$ պայմանի դեպքում՝ անդրադառնալով (2) հավասարմանը, գրանցվում է, որ եթե $\aleph > 0$, ապա պետք է համեմատել կապիտալի հոսքը, որը բերվում է ներգաղթյալների կողմից, ընդունող երկրի ազգաբնակչության քանակի հետ: Իսկ եթե $\aleph < 0$, ապա անհրաժեշտ է համեմատել գաղթողների քանակը՝ լքվող երկրի

¹⁴ $\frac{\dot{k}}{k} = (n + \delta) \cdot \left[\left(\frac{k}{k^*} \right)^{\alpha-1} - 1 \right]$ - կապիտալի աճի տեմպը Սոլոու-Սվենի մոդելում, որտեղ k^* - ստացիոնար

վիճակն է; α - Կոբա-Դուգլասի հաստատունը

¹⁵ Այստեղ կա մեկ բացառություն, երբ մարդկային կապիտալը, որը հասանելի է մեկ միգրանտին, էականորեն ավելի մեծ է, քան որը հասանելի է երկրի ներսում մեկ աշխատողին, ինչը Հայաստանի դեպքում այն արդիական չէ:

ազգաբնակչության քանակի հետ: Պահպանելով նույն ենթադրությունը, $\mathfrak{V} < k$, միգրացիաի $\mathfrak{N} \cdot (1 - (\mathfrak{V}/k))$ գործակիցը գումարվում է մաշվածության արդյունավետ դրույքաչափին եթե $\mathfrak{N} > 0$, և հանվում է, եթե $\mathfrak{N} < 0$:

Հնարավոր տարբերակներից է, երբ միգրանտները ժամանում են առանց կապիտալի, այսինքն՝ $\mathfrak{V} = 0$, ապա (2) արտահայտությունում միգրացիաի $\mathfrak{N}$ գործակիցը գումարվում է n բնակչության բնական աճի տեմպին: Գոյություն ունեն ավելի բարդ տարբերակներ, երբ n դիտարկվում է որպես ծնելիության գործակից:

Որոշակի պարզություն է մտցվում, երբ դիտելով զուտ միգրացիաի գործակցը, ընդունվում, որ $\mathfrak{N} > 0$, ինչը նշանակում է, որ $\mathfrak{V}$ դա կապիտալի քանակն է՝ մեկ արդյունավետ աշխատակցի համար, որը բերվել է միգրանտի կողմից իր հայրենիքից: Այդ քանակը կապված է ընդհանուր կապիտալի քանակի հետ՝ մեկ արդյունավետ աշխատակցի համար ներգաղթյալի հայրենիքում: Միգրանտի հայրենիքում, տվյալ $\mathfrak{V}$ կապիտալի գործակցի մեծության դեպքում, $\mathfrak{V}/k$ հարաբերությունը կնվազի՝ երբ աճի k -ի (կապիտալի քանակը, որը դուրս է հանում իր հայրենիքից միգրանտը) մեծությունը միգրանտին ընդունող երկրում: Ենթադրվում է նաև, որ եթե տիպիկ արտասահմանյան տնտեսությունը մոտ է կայուն վիճակին, ապա $\mathfrak{V}$ կարելի է համարել հաստատուն ըստ ժամանակի:

Փաստորեն, սրանով ավարտվում է Սալա-ի-Մարտին և Բարրուն կողմից՝ ձևափոխված Սոլոու-Սվենի տնտեսական աճի հիմնարար դիֆերենցիալ մոդելի կառուցումը, որի մեջ ներառված են միգրացիոն հոսքերը:

Ակնհայտ է, որ առանձին պարզաբանումները, կապված ձևափոխված Սոլոու-Սվենի մոդելի վերաբերյալ, առնչվում են նրա փոփոխականների հետ, որոնք կարող են ընդունել կամ բացասական կամ դրական արժեքներ, հաշվի առնելով ուսումնասիրվող երկրի առանձնահատկությունները, որտեղ կարող է առձանագրվել ազգաբնակչության կամ արտագաղթը, կամ ներգաղթը:

Այսպես, **Հայաստանի** համար, միգրացիաի նոր գործակիցում՝ $\mathfrak{N} \cdot (1 - (\mathfrak{V}/k))$, պարամետրերը տեղադրվում են այն նշանով (+ կամ -), որոնք համապատասխանում են Հայաստանի իրավիճակին, և որի վերաբերյալ արդեն վերն արել էինք որոշակի

դատողություններ: Եվս մեկ անգամ շեշտադրենք այն դրույթը, որ Հայաստանի համար, *էմիգրանտների քանակը համեմատվում է երկիրը թողնող բնակչության քանակի հետ*, և միգրացիայի գործակիցը գումարվում է մաշվածության արդյունավետ դրույքաչափին: Նման ենթադրությունները, թույլ են տալիս, հիմնվելով Հ. Սալա-ի-Մարտին և Ռ. Բարրոն տնտեսական աճի միգրացիով մոդելի վրա, կառուցել համապատասխան տնտեսամաթեմատիկական մոդել, որը հնարավորություն կտա գնահատել միգրացիոն գործընթացների ազդեցությունը տնտեսական աճի վրա, կոնկրետ դեպքում, Հայաստանի վրա:

Ավելի արդիական է մեր համար, երբ $\aleph < 0$, որի դեպքում, $\aleph$ կներկայացնի իրանից յուրաքանչյուր արտագաղթյալի համար կապիտալը մեկ արդյունավետ աշխատակցի համար, որը հանվել է իր հայրենիքից, կոնկրետ պահով, Հայաստանից: $\aleph < 0$ դեպքի համար ենթադրվում է, որ գաղթը և ներգաղթը չեն ընդհանում միաժամանակ, այդ պատճառով ընդհանուր և զուտ միգրացիան համընկնում են: Ընդհանուր դեպքում, մարդկային կապիտալի և այլ գործոնների *անմիապարրությունը* բերում է նրան, որ ընդհանուր միգրացիան գերազանցում է զուտ միգրացիային: Մեր պահով՝ $\aleph/k$ հարաբերությունը պրակտիկորեն կայուն է, այսինքն, այն չի փոխվելու k աճի հետ: Սակայն, նման ենթադրությունը, արվում է մոդելի պարզության համար: Իրականում, հաշվի առնելով, որ Հայաստանի միգրացիան հիմնականում ուղղված է դեպի Ռուսաստան, ապա այդ “*տիպիկ արտասահմանյան տնտեսությունը*” դա Ռուսաստանի տնտեսությունն է, որը, հայտնի պատճառներով, չի կարելի համարել, որ գտնվում է կայուն վիճակում: Այսինքն, ավելի բարդ դատողությունները և խորը ուսումնասիրությունները, պահանջում են, որ $\aleph$ ընդունվի ոչ հաստատուն:

Միգրացիայի ֆունկցիա. Հիմնվելով Հ. Սալա-ի-Մարտինի և Ռ. Բարրոի աշխատանքի [46], [76]-[78] վրա, դիտարկվում է մոդել, որտեղ ձևափոխված Սոլոու-Սվենի տնտեսական աճի մոդելի միգրացիայի գործակիցը՝ $\aleph \cdot (1 - (\aleph/k))$, դրական կախված է, երկրի ներսում, ընթացիկ աշխատավարձի դրույքաչափից՝ համեմատած այլ պետություններում ձևավորված աշխատավարձից: Ակնհայտ է, որ այլ երկրներում, տվյալ պարամետրների դեպքում, k (*կապիտալի քանակը, որը իր հետ տեղափոխում է յուրաքանչյուր միգրանտ*) ավելի բարձր մակարդակը կնպաստի աշխատավարձի աճին

այդ, ընդունող, երկրի ներսում և, համապատասխանաբար, միգրացիաի $\aleph$ գործակցի աճին: Այսինքն, գոյություն ունի *դրական հարաբերակցություն* $\aleph$ և k միջև:

Միաժամանակ, այս ենթադրությունների շրջանակներում, կապիտալի շարժունության բացակայության դեպքում, k ավելի բարձր մակարդակը հանգեցնում է երկրի ներսում կապիտալի եկամտաբերության նվազման, այդ թվում, մարդկային կապիտալի շահութաբերության՝ որ միգրանտները բերել են իրանց հետ: Այսպիսով ընդունվում է այն իրողությունը, որ բարձր աշխատավարձի (*որպես գործոններից մեկը*) ազդեցությունը կլինի ամենաուժեղը: Վերլուծությունը, որը նրանք իրականացրել են ներառում է իր մեջ $\aleph(k)$ միգրացիոն ֆունկցիաի շարժի դիտարկումը:

Հ. Սալա-ի-Մարտինին և Ռ. Բարրուն գտնում են, որ, նույն ժամանակ, այլ երկրներում, պայմանները, որոնք ազդում են աշխատավարձի վրա՝ մեկ միավոր արդյունավետ աշխատանքի համար, չեն փոփոխվում, երբ փոխվում է k : Ինչ վերաբերվում է կենցաղային պայմաններին (*ներկայացված են տնային տնտեսությունների օգտակարության ֆունկցիայում*) երկրի ներսում և այլ պետություններում, ապա նրանք անփոփոխ են: Միաժամանակ, նրանք ընդունում են այն իրողությունը, որ կապված ծախսերի և օգուտի փոփոխության հետ՝ արտագաղթողները տեղափոխվում են այլ բնակավայր: *Օրինակ*, աշխատավարձի իջեցումը կամ կենսապայմանների վատթարացումը դարձնում է միգրացիան ավելի գրավիչ: Եթե միգրանտների քանակի ավելացման ժամանակ ծախսերը արագ մեծանում են, ապա k փոփոխությունը էականորեն չի ազդում միգրացիաի վրա:

Նման ենթադրություններից և սահմանափակումներից հետո, Հ. Սալա-ի-Մարտինին և Ռ. Բարրուն, որոշակի ձևափոխելով, առանձին են սահմանում (2) հավասարման աջ մասում գտնվող գործակիցը, որը պատասխանատու է միգրացիաի համար.

$$\xi(k) \equiv \aleph(k) \cdot \left(1 - \frac{\aleph}{k}\right) \equiv \aleph(k) - \aleph(k) \cdot \frac{\aleph}{k} \quad (3),$$

ստանում են, իրանց կողմից առաջարկվող կարևոր հավասարում, որը նրանք անվանում են *կոնվերգենցիաի արագության հավասարում*: Այսինքն, k աճի տեմպը ներկայացվում է հետևյալ ձևի.

$$\begin{aligned} \frac{\dot{k}}{k} &= \frac{s \cdot f(k)}{k} - [x + n + \delta + \xi(k)] = \\ &= \frac{s \cdot f(k)}{k} - [x + n + \delta] - \xi(k) \end{aligned} \quad (4)$$

Օգտագործելով այս երկու հավասարումները, կարելի է նշել, որ, առաջինը, $\xi(k)$ պարամետրը մաշվածության արդյունավետ չափաքանակում՝ $x + n + \delta + \xi(k)$, ունի 1 գործակից և, երկրորդը, զուտ միգրացիաի գործակիցը $\xi(k)$, որպես, $\xi(k)$ մաս (3) հավասարումից, գումարվում է արդյունավետ աշխատանքի աճի տեմպին, և հետևաբար, $x + n$ -ին:


Եվս մի եզրակացություն ստացված (2) հավասարումից, $-\xi(k) \cdot (\mathfrak{Z}/k)$ արտահայտությունը ներկայացնում է իրենից միգրանտների մարդկային կապիտալի բացասական ազդեցությունը հիմնական կապիտալի աճի տեմպի վրա երկրի ներսում, որտեղից նրանք դուրս են եկել: Այդ մարդկային կապիտալի արտահոսքը հանվում է մաշվածության արդյունավետ չափաքանակից: Այս պարզաբանումը, տարածելով **Հայաստանի օրինակով**, թույլ է տալիս գնահատել այն բացասական ազդեցությունը, որը ունի մեր երկրի՝ մարդկային և հիմնական կապիտալի վրա, ազգաբնակչության արտահոսքը:

Քանի որ $\mathfrak{Z}$ կարելի է դիտարկել անկախ k , ապա հնարավոր է ցույց տալ որ $\xi'(k) > 0$ անկախ նրանից՝ $\xi(k)$ միգրացիաի գործակիցը դրական է թե բացասական: Այստեղից էլ հետևում է, որ իչքան մեծ է k , այդքան մեծ է մաշվածության արդյունավետ չափաքանակի $x + n + \delta + \xi(k)$ արժեքը (4) արտահայտությունում:

Հայաստանի դեպքում, ստացված միգրացիոն մոդելը, որտեղ միգրացիաի գործակիցը դրական կախված է, երկրի ներսում, ընթացիկ աշխատավարձի դրույքաչափից, մեր համար ունի կարևոր նշանակություն, քանի որ, ինչպես վերն նշվել է, հենց աշխատավարձի (*եկամուրների*) մեծությունն է էական ազդում արտագաղթի մակարդակի վրա:

Կայուն վիճակը կամ հավասարակշիռ (հաշվեկշիռ) աճը (β -մոդել/կոնվերգենցիա). Գծապատկեր 13 բերված է աճի մոդելի տիպիկ գրաֆիկը:

Սոլոու-Սվէնի միգրացիայով աճի մոդելում զուտ միգրացիաի և ընդունող երկրում ձևավորված աշխատավարձի մակարդակի միջև դրական հարաբերակցությունը ենթադրում է, որ բնակչության աճի տեմպը ներկայացնում է իրանից ֆունկցիա, որը դրական կախված է k : Հետևաբար, Սոլոու-Սվէնի մոդելում մաշվածության արդյունավետ չափաքանակի (*նորման*) ֆունկցիաի գրաֆիկը ունի դրական թեքություն: Կայուն վիճակը որոշվում է կուտակման ֆունկցիաի $s \cdot f(k)/k$ և արդյունավետ մաշվածության $x + n + \delta + \xi(k)$ գրաֆիկների հատման ընդհանուր կետով k^* : k ցանկացած արժեքի համար, նրա աճի տեմպը կորոշվի այդ կորերի միջև ուղղահայաց հեռավորությունից:



Գծապատկեր 13. Սոլոու-Սվէնի աճի մոդելը

$s \cdot f(k)/k$ կորը, ինչպես միշտ, ունի բացասական թեքություն՝ պայմանավորված կապիտալի միջին արտադրանքի նվազումով: Քանի որ դիտարկվում է Սոլոու-Սվէնի մոդելը միգրացիայով, ապա այդ մոդելի դասական տարբերակում $x + n + \delta$ հորիզոնական գիծը փոխարինվում է աճող $x + n + \delta + \xi(k)$ կորով: Երբ մոդելում

միգրացիան բացակայում է, ապա 1-ին նկարում $\tilde{k}$ մեծությունը՝ կապիտալի քանակն է մեկ արդյունավետ աշխատողի համար:

Եթե $\tilde{k} = k$, ապա $s(k) = 0$ և $\xi(k) = 0$, ինչը հետևում է (3) արտահայտությունից: Հետևաբար, արդյունավետ մաշվածության ֆունկցիաի մեծությունը, $\tilde{k}$ դեպքում, հավասար է $x + n + \delta$: Եթե $k > \tilde{k}$, ապա $s(k) > 0$ և արդյունավետ մաշվածության ֆունկցիաի գրաֆիկը ընկած է $x + n + \delta$ վերև: Եվ հակառակը, եթե $k < \tilde{k}$, ապա արդյունավետ մաշվածության ֆունկցիաի գրաֆիկը ընկած է $x + n + \delta$ ներքև, ինչը համահունչ է այն դեպքին, երբ մոդելավորվում է միգրացիաի ազդեցությունը **Հայաստանի** տնտեսական աճի վրա::

Ինչպես վերը նշեցինք, կայուն վիճակը համապատասխանում է $s \cdot f(k)/k$ և $x + n + \delta + \xi(k)$ ֆունկցիաների հատման ընդհանուր կետին k^* : Սա այն կետն է, որտեղ հավասարակշիռ աճը սահմանվում է որպես իրավիճակ, որի ժամանակ արդյունավետ աշխատակցի ֆոնդահագեցվածությունը ունի հավասարակշիռ արժեք:

Ինչպես նշում են Սալա-ի-Մարտինին և Բարրուն, երբ տնտեսությունը միգրանտների համար ռեցիպիենտ է (*ընդունող*) և գտնվում է կայուն վիճակում, այդ դեպքում $k^* > \tilde{k}$, $s^* > 0$: Այսինքն տնտեսությունը մնում է կայուն վիճակում որպես երկիր, շարունակ ընդունող միգրանտներին: Այլ տարբերակը, երբ երկրից հեռանում են, օրինակ **Հայաստանի դեպքում**, ներկայացվում է հետևյալ տեսքով՝ $k^* < \tilde{k}$, $s^* < 0$: Սա ևս այն տարբերակն է, երբ տնտեսությունը մնում է կայուն վիճակում: Սակայն, իրոք, այստեղ առաջանում են բազմաթիվ այլ հարցեր, առաջին հերթին կապված արտագաղթող երկրի զարգացման վերաբերյալ: Չշեղվելով ընդհանուր մոտեցումից, ևս մեկ անգամ արձանագրվում է, որ պետության կայուն վիճակը որոշվում է կուտակման ֆունկցիաի և արդյունավետ մաշվածության ընդհանուր կետով k^* :

1-ի նկարի օգնությամբ կարելի է գնահատել տարբեր պարամետրերի փոփոխության ազդեցությունը կայուն վիճակի վրա: Այսպես, s -ի աճը կամ արտադրական ֆունկցիաի կայուն լավացումը տեղաշարժում է $s \cdot f(k)/k$ վերև, և

բերում է k^* և $\aleph^*$ աճին: Այսպիսով, $\aleph^*$ հավասարակշիռ արժեքը աճում է, քանի որ կորի տեղաշարժը նշանակում է, կայուն վիճակում, աշխատավարձերի բարձրացում՝ մեկ միավորի արդյունավետ աշխատանքի համար, և, հետևաբար, ավելի գրավիչ է դարձնում օտարերկրացիների համար երկրի տնտեսությունը:

Եթե վատթարանում են այլ տնտեսությունների պայմանները, ապա միգրացիոն ֆունկցիայի $\aleph$ փոփոխությունների արդյունքում արդյունավետ մաշվածության կորը $x+n+\delta+\xi(k)$ շարժվում է վերև (*տես $\xi(k)$ արտահայտությունը (3) բանաձևում*):

Հետևաբար k^* նվազում է, իսկ $\aleph^*$ աճում: Այսպիսով, արտագաղթողների կողմից աշխատուժի առաջարկի ավելացումը նվազեցնում է կայուն վիճակում գտնվող ընդունող երկրում կապիտալի օգտագործման ինտենսիվությունը: Այն տեղի է ունենում, քանի որ իմիգրանտները, սովորաբար, գալիս են փոքր կապիտալով:

Անցման դինամիկան և մոտեցումը (σ -կոնվերգենցիա). Հ. Սալա-ի-Մարտինին և Ռ. Բարրուն շարունակելով իրենց հետազոտությունը, կոնվերգենցիաի արագության գնահատման համար, որը ներկայացվում է (4) հավասարումով, ինչպես նախկինում, ենթադրվում է, որ արտադրությունը սահմանվում է Կոբ-Դուգլասի ֆունկցիայով. $f(k) = Ak^\alpha$: Նաև, $\xi(k)$ ֆունկցիան ձևափոխվում է լոգնորմալ ձևին.

$$\xi(k) \equiv \aleph(k) \cdot \left(1 - \frac{\aleph}{k}\right) \approx b \cdot \log \frac{k}{k_{world}}, \quad (5)$$

որտեղ $b \geq 0$, իսկ k_{world} ներկայացնում է իրանից կապիտալի ինտենսիվ օգտագործումը այլ տնտեսություններում:

Մինչ վերլուծությունը շարունակենք, հարկ եմ համարում նշել, որ դիտարկվում են կոնվերգենցիաի երկու կոնցեպցիաներ, որոնք առաջարկվել և ուսումնասիրվել են Սալա-ի-Մարտինի և Բարրուի կողմից: Նախ **σ -կոնվերգենցիան**՝ նշանակում է, որ ուսումնասիրվող երկիրների զարգացման ինդիկատորների դիսպերսիան ձգտում է նվազման, և երկրորդը, **β -կոնվերգենցիան**՝ որը նշանակում է, որ նվազ զարգացած երկիրները (*տարածքները*) ունեն տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր, քան ավելի զարգացած տարածքները: Արդյունքում, երկարաժամկետ հեռանկարում, տեղի է

ունենում տարածքների տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցում: Այդ երկու կոնցեպցիաները փոխադարձ կապված են, բայց համարժեք չեն:

(5) արտահայտությունից հետևում է, որ $\xi(k) = 0$, եթե երկրի ներսում կապիտալի օգտագործման ինտենսիվությունը համընկնում է դրա օգտագործման ինտենսիվության հետ ամբողջ աշխարհում, քանի որ այդ դեպքում բացակայում են միգրացիաի խթանները, այն ենթադրությամբ, որ հաշվի չառնվեն առօրյա կյանքի պայմանների տարբերությունները և արտադրական ֆունկցիաի տեսքը (δL): k_{world} դիտարկվում է որպես հաստատուն մեծություն, այսինքն, ենթադրվում է, որ բոլոր մյուս պետությունները գտնվում են կայուն վճակում:

Ըստ Սալա-ի-Մարտինի և Բարրոի, կոնվերգենցիաի վերլուծության գործում առանցքային տարր է հանդիսանում (5) արտահայտության ***b պարամետրի չափը***: Այդ պարամետրը գնահատելու համար, նրանք նշված արտահայտության համար գտնում են դիֆերենցիալը ըստ $\log(k)$ փոփոխականի, որի արդյունքում ստանում են հետևյալ գնահատականը.

$$b = \frac{\partial \xi(k)}{\partial \log k} = \left(1 - \frac{\mathfrak{T}}{k}\right) \cdot \frac{\partial \mathfrak{S}(k)}{\partial \log k}, \quad (6)$$

Երբ $\mathfrak{S} < 0$, և որպեսզի ստացվի այդ արտահայտությունը, պետք է ընդունել, որ հարաբերակցության $\mathfrak{T}/k$ արժեքը հաստատուն է: Երբ $\mathfrak{S} > 0$, և եթե $\mathfrak{T}$ չի փոփոխվում, (6) արտահայտության աջ մասում ի հայտ է գալիս լրացուցիչ անդամ $\mathfrak{S} \cdot \mathfrak{T}/k$, և այդ ժամանակ հարաբերակցությունը համարվում է մոտավորապես և կատարվում է, երբ $\mathfrak{S}$ հարաբերորեն փոքր է:

Այս արտահայտությունը ցույց է տալիս, որ եթե $\mathfrak{T} < k$ (քանի որ միգրանտները իրանց հետք տանում են փոքր քանակի ֆիզիկական կապիտալ) ապա b դրական կախված է միգրացիաի գործակցի զգայունությունից $\log(k)$ նկատմամբ (կամ այլ խոսքերով, միգրացիաի զգայունությունը երկրի ներսում՝ մեկ շնչի հաշվով եկամուտների տարբերության նկատմամբ): Նախկինում նշվել էր, որ եթե միգրացիաի ծախսերը կտրուկ աճում են երբ մեծանում է միգրանտների թիվը, ապա b գործակիցը փոքր է: Այն իրավիճակի համար, երբ բնակչության տեղի փոփոխության պատճառով

ծախսերը աճում են շատ արագ՝ զուտ միգրացիայի գործակիցն $\mathfrak{S}$ աճի հետ պատճառով, b արժեքը կլինի մոտ 0, և դրա հետևանքով $\xi(k)$ ևս կլինի 0 հատվածում, և մաշվածության արդյունավետ չափաքանակը (3) մոտավորապես հավասար կլինի $x+n+\delta$:

$\log(k)$ հանդեպ միգրացիայի զգայունությունը բերում է նրան, որ b գործակիցը փոքրանում է՝ քանի աճում է $\mathfrak{S}/k$: Իսկ երբ $\mathfrak{S}=k$, ապա $b=0$ և մաշվածության արդյունավետ չափաքանակը ևս հավասար է $x+n+\delta$:

Եթե (4) դիֆերենցիալ հավասարման համար գտնվում է լոգարիթմը և այն գծայնացվում է կայուն վիճակի կետի շրջանակում, ապա **կոնվերգենցիայի արագությունը դեպի կայուն վիճակ** արտահայտվում է հետևյալ կերպ.

$$\beta = (1-\alpha) \cdot (x+n+\delta) + b + b \cdot (1-\alpha) \cdot \log \frac{k}{k_{world}} : \quad (7)$$

Այս արտահայտությունը բերվում է այն արժեքին, որը ստացվել է Սոլոու-Սվենի մոդելից, երբ $b=0$:

Եթե դիտարկվի տիպիկ տնտեսությունը, որի համար $k^* = k_{world}$, և ենթադրվի, որ $b>0$, ապա (7) արտահայտությունից հետևում է, որ միգրացիայի հնարավոր պոտենցիալը, համեմատ Սոլոու-Սվենի մոդելի, մեծացնում է կոնվերգենցիայի β գործակցի ազդեցությունը b մեծության չափով:

b մեծությունը որոշելու համար նշենք մի շարք աշխատանքներ, Xavier Sala-i-Martin, Robert Barro, Hatton and Williamson (1994): Մասնավորապես, Hatton, Williamson [79] աշխատանքում առկա այն եզրակացությունը, որ **միգրացիայի հակվածությունը դանդաղեցնում է պեպությունների կոնվերգենցիայի արագությունը, որպեսզի կան արտագաղթողներ**: Ակնհայտ է, որ նման եզրակացությունը Հայաստանի դեպքում ունի սկզբունքային նշանակություն:

Սակայն, պետք է նշել, որ առանձին հեղինակների կողմից քննադատվում է [46] **բերա-մուրեցման** վերլուծությունը (*որպես անվերապահ, այնպես էլ պայմանական*), որը օգտագործվում է նպատակ ունենալով բացահայտելու տարածքային անհավասարության դինամիկայի միտումները ըստ եկամուտների: Իրանց կարծիքով

բետա-մոտեցման հայեցակարգը օգտագործվում է ոչ իր նշանակումի: Բետա-մոտեցման վերլուծության օգնությամբ փորձում են ստանալ պատասխան այն հարցին, որը, սկզբունքորեն, այս մեթոդը չի կարող պատասխանել: Բետա-մոտեցման էմպիրիկ վերլուծությունը թույլ է տալիս միայն պարզել, տիրապետում են տնտեսությունների վարքը որոշ հատկություններով, որոնք ծագում նոր դասական աճի տեսության այս կամ այն մոդիֆիկացիայից, և ոչ ավելին:

2.3. Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացները և տնային տնտեսությունների օպտիմալ որոշումները

Ինչպես վերն նշված է, նպատակ ունենալով Սոլոու-Սվենի մոդելի միջոցով կապ հաստատել միգրացիայի և տնտեսական աճի միջև՝ միգրացիայի վերլուծությունը դիտարկվում է նոր դասական տնտեսագիտական տեսության կողմից առաջարկված տնտեսական աճի Սոլոու-Սվենի մոդելի օգնությամբ, որի դասական տարբերակը ուսումնասիրում է փակ տնտեսությունը՝ էկզոգեն տրված կուտակման հաստատուն չափաքանակով (*նորմալով*): Սոլոու-Սվենի մոդելի ընդարձակումը, որտեղ ներառված է միգրացիան, նշանակում է, որ տնտեսությունը մասնակի բաց է, այսինքն, ենթադրվում է, որ աշխատուժը և մարդկային կապիտալը շարժունակ են: Այս մոդելի համար, կանխադրվում է միգրացիայի ֆունկցիան:

Այստեղ Սոլոու-Սվենի մոդելից անցում է կատարվում ***Ռամսեի մոդելին***, որում ***օպտիմալացվում է տնային տնտեսության վարքը***: Այս վերլուծությունը ենթադրում է, որ ներկայացուցչական տնային տնտեսությունը ընտրում է սպառման օպտիմալ հետագիծը, հաշվի չառնելով արտագաղթողների բարեկեցությունը: Այսինքն, ընդունող երկրի ռեզիդենտները մտահոգված չեն միգրանտներով, հետևաբար, դա, արդեն վերաբերվում է այդ երկրի բնակչության տարբեր խմբերի միջև կապերին, ինչը ազդում է բնակչության կուտակման վրա և հետևաբար տնտեսության աճի տեմպի վրա:

Սակայն պետք է խոստովանել, որ շարադրված միգրացիայի և տնտեսական աճի տեսության տարբերակը ունի երկու թերություններ: Խոսքը վերաբերվում է նրան, որ

առաջինը, միգրացիաի հոսքերը որոշվում էին հիմնվելով կանխադրվող միգրացիաի ֆունկցիաից, այլ ոչ թե տնային տնտեսությունների տեղափոխման հետ կապված օպտիմալության խնդրի լուծումից: Երկրորդը, կապիտալի միակ ենթադրվող շարժունակությունը դա մարդկային կապիտալի միգրացիան է:

Նման հիմնախնդրի լուծման համար, դիտարկում ենք Հարվարդի համալսարանի դոկտորանտ Ջոան Բրաունի [80] կողմից իր թեզում առաջարկված մի շարք մոդելները, որում թույլատրվում է **կապիտալի շարժունակությունը**, իսկ **միգրացիաի գործակիցը որոշվում է տնային տնտեսության վարքագծի օպտիմալացման խնդրից**: Դա թույլ է տալիս վերլուծել, թե ինչպես **միգրացիաի պատճառով առաջացող ծախսերի և եկամուտների փոփոխությունները, ազդում են տնտեսական աճի և միգրացիաի դինամիկ հեղադրության վրա**:

Առանցքային գործոնը, որը պարզեցնում է մոդելների վերլուծությունը, հանդիսանում է համաշխարհային վարկային կատարյալ շուկայի առկայությունը, որտեղ ենթադրվում է նույն տոկոսադրույքը բոլոր պետությունների ռեզիդենտների համար: Այդ դեպքում, լուծումը հարաբերաբար միգրացիաին կախված կլինի *բացառապես երկիրների միջև աշխատավարձի դրույքաչափի հեղադրության փոփոխությունից կամ ապրուստի պայմանների փոփոխությունից*:

Նման ենթադրությունները, թույլ են տալիս դիտարկվող մոդելը (*Բրաունի մոդել*) տարածել զուտ ԵԱՏՄ և ԵՄՀ գոտու վրա: Այստեղ, պետք է նկատի ունենալ այն իրողությունը, որ Հայաստանից միգրացիոն հոսքերը հիմնականում կապված են Ռուսաստանի Դաշնության հետ, և համաշխարհային տոկոսադրույքի դիտարկումը կարելի է սահմանափակվել ԵԱԷՍ և ԵՄՀ շրջանակներով:

Ինչ վերաբերվում է Բրաունի մոդելին, ապա այստեղ արվում են մի շարք այլընտրանքային ենթադրություններ ֆիզիկական կապիտալի շարժունակության վերաբերյալ: Մոդելներից մեկում, ֆիզիկական կապիտալը բնութագրվում է կատարյալ շարժունակությամբ, իսկ մյուս մոդելում, հիմնական կապիտալի փոփոխությունը հանգեցնում է ծախսերի ճշգրտման: Ֆիզիկական կապիտալի կատարյալ շարժունակության դեպքում առաջանում են որոշակի անիրական իրավիճակներ, կապված աշխատուժի և կապիտալի տեղափոխման հետ: Որպեսզի խուսափել նման

արդյունքից, յուրաքանչյուր տնտեսության համար արվում է ենթադրություն՝ նվազող արդյունքի ծավալի վերաբերյալ:

Միգրացիան Ռամսեի մոդելում.

Ինչպես հայտնի է տեսությունից, **Ռամսեի մոդելի** պայմանները օգտագործվում են տնային տնտեսությունների վարքի օպտիմալացման համար, դրանով իսկ ընդարձակելով Սոլոու-Սվենի մոդելը և ներառելով փոփոխականների կազմում կուտակման չափաքանակը: Սույնով ներկայացվում է մոդիֆիկացվաց Ռամսեի մոդելը, որը հիմնված է Սոլոու-Սվենի մոդելի վրա միգրացիայով: Այստեղ դիտարկվող Ռամսեի մոդելի տարբերակը (*կառուցվածքը*) համապատասխանում է Օլիվեր Բլաքչարդի կոմից կառուցված մոդելին, որը ընդարձակվել և ձևափոխվել է Ֆիլիպ Վեյլը: Մոդիֆիկացվաց Ռամսեի մոդելում, նորույթ է հանդիսանում՝ *միգրացիաի ու կուտակման չափաքանակի ընդհանրության միջև փոխներգործությունը*: Նման փոխներգործությունը վերաբերվում է կուտակման չափաքանակի վարքին, և հետևաբար, կոնվերգենցիաի (*մոտեցման*) արագությանը, ինչպես նաև կուտակման չափաքանակի և կայուն վիճակի որոշ այլ բնութագրերին:

Ռամսեի մոդելը, հաշվի առնելով միգրացիան. Ռամսեի մոդելը Ֆորմալ ենթադրում է տնային տնտեսությունների վարքի հետազոտություն՝ սահմանափակ պլավորման հորիզոնով (*ի թիվս այլ ենթադրությունների, Բլաքչարդի մոդելի համար, յուրաքանչյուր ընտանիքի մեծությունը աճում է մշտական էկզոգեն տրված աճի ու տեմպով*):

Ընդունենք, որ միգրանտները ժամանում են երկիր $\lambda(t)$ արագությամբ, և յուրաքանչյուր միգրանտ բերում է իր հետ $\lambda(t)$ կապիտալ, որը, ամենայն հավանականությամբ, ներկայացված է մարդկային կապիտալով (*ենթադրում ենք, որ միգրանտները չեն կարող ստանալ ֆինանսական եկամուտ արտասահմանից*): Կարևոր ենթադրություններից է, որ իրենց սպառումը չի ընդգրկվում ռեցիպիենտ երկրի բնակիչների օգտակարության ֆունկցիոյում, այսինքն, ներգաղթյալների մասին ոչ ոք մտահոգված չի:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ նմանատիպ վերլուծությունը կարող է կատարվել էմիգրանտների (*արտագաղթյալների*) համար է երբ $\lambda(t) < 0$, եթե

երկրի (*կոնկրետ, Հայաստան*) բնակիչներին չեն հետաքրքրում մարդիկ, որոնք հեռանում են երկրից: Օրինակ, եթե հայրենիքից արտագաղթողներն են ամբողջ ընտանիքները, ապա բնական է ենթադրել, որ երկրում մնացած ընտանիքները չեն հոգա նրանց համար: Խնդիրը ավելի է բարդանում, երբ ընտանիքի անդամները գաղթում են այլ երկրներ, և, այնտեղից ուղարկում են դրամական փոխանցումներ հարազատներին, կամ, ընդհակառակը, ստանում են նրանցից ֆինանսական աջակցություն: Մոդելի շարադրման ընթացքում, մենք անդրադառնալու ենք այս տարբերակին, որը համապատասխանում է Հայաստանից արտագաղթողների վերաբերյալ ուսումնասիրություններին:

Թող $L(t)$ ՝ երկրի (*ռեցիպիենտ-երկիր կամ դոնոր-երկիր*) ամբողջ բնակչության թվաքանակն է t ժամանակում, որը սահմանվում է հետևյալ ձևի.

$$L(t) = L(0) \cdot e^{nt} \cdot \exp \left\{ \int_0^t \aleph(v) dv \right\}, \quad (8)$$

որտեղ $L(0)$ երկրի տեղական բնակչության թվաքանակը զրոյական ժամանակում, որը նորմալացնելուց հետո $L(0) = 1$:

Տնային տնտեսության տիպը, որը նշանակվում է j , $j \geq 0$, տրվում է հաշվի առնելով ժամանակը, որը անցել է ընտանիքը երկիր ժամանելու (*Հայաստանից հեռանալուց ժամանակը հաշվի չի առնվում*) օրվանից; բնիկ բնակչության համար $j = 0$:

Օպտիմիզացիաի պայմանը և ամփոփ (ագրեգացիա) արդյունքը.
Յուրաքանչյուր j տիպի տնային տնտեսությունները առավելագույնի են հասցնում օգտակարության ֆունկցիան, որը նաև կախված է t ժամանակից.

$$U(j, t) = \int_t^\infty \log[c(j, v)] \cdot e^{-(\rho-n)(v-t)} dv, \quad (9)$$

որտեղ $c(j, v)$ դա v ժամանակում j տիպի տնային տնտեսությունների սպառումն է մեկ հոգու համար: Օգտվենք օգտակարության լոգարիֆմիկ ֆունկցիայից, որպեսզի ավելի պարզ (*առանց բարդությունների*) ներկայացվի տարբեր տիպի միգրանտների ընդհանրացումը (*ագրեգացումը*):

Հիմնվելով Օլիվեր Բլաքսարդի և Ֆիլիպ Վեյլի հետազոտությունների վրա, կարելի է ընդունել հետևյալ հանգամանքը, որ մեկ շնչի հաշվով սպառման աճի հավասարումը ունի հետևյալ տեսքն.

$$\frac{\dot{c}}{c} = r(t) - \rho - \aleph(t) \cdot (\rho - n) \cdot \frac{k(t) - \mathfrak{Z}(t)}{c(t)}, \quad (10)$$

որտեղ ρ արդյունավետ զեղչման (*դիսկոնտ*) դրույքաչափն է, $c(t) \equiv C(t) / L(t)$:

Այս հարաբերակցությունը ստացվում է Ռամսեի տնտեսական աճի մոդելից՝ օգտակարության լոգարիթմիկ ֆունկցիայով, եթե $\aleph(t) = 0$ կամ $\mathfrak{Z}(t) = k(t)$: Եթե $\aleph(t) > 0$ և $\mathfrak{Z}(t) < k(t)$, ապա միգրանտների հոսքը կփոքրացնի մեկ շնչի հաշվով միջին սպառումը (10) արտահայտության աջ մասում գտնվող վերջին հանելի արժեքով: Այդ դեպքում, միգրանտների $\aleph(t)$ մեծ հոսքը ազդում է նույն ձևի, ինչ ρ ավելացումը:

Հայաստանի տարբերակի համար $\aleph(t) < 0$ փաստացի ստացվում է հակառակ նկարագիրը: Տեսականորեն պետք է գրանցվի մեկ շնչի հաշվով միջին սպառումի աճ: Սակայն, իրականում, Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ նման աճ չի գրանցվում:

Մոդելի կայուն վիճակը և նրա դինամիկան. Ինչպես նշում են Օլիվեր Բլաքսարդը և Ֆիլիպ Վեյլը, մոդելի դինամիկ փոփոխությունը դեպի կայուն վիճակ կարող է նկարագրվել դիֆերենցիալ հավասարումներով՝ k և c համար: Մեկ արդյունավետ աշխատակցի համար կապիտալի աճի արագության k տեմպի հավասարումը (*նմանադիպ Սոլոու-Սվենի մոդելում* (8)), ունի հետևյալ տեսքը.

$$\frac{\dot{k}}{k} = \frac{f(k)}{k} - \frac{c}{k} - (x + n + \delta) - \aleph \cdot \left(1 - \frac{\mathfrak{Z}}{k}\right). \quad (11)$$


c աճի տեմպի արտահայտությունը ստացվում է (10) հավասարումից.

$$\frac{\dot{c}}{c} = f'(k) - (x + \rho + \delta) - \aleph \cdot (\rho - n) \cdot \frac{\mathfrak{Z} - k}{c}. \quad (12)$$

Այնուհետև, օգտվենք միգրացիաի հավասարումից ((5) *հավասարումը*, որը *կնշանակենք* (5)*).

$$\xi(k) \equiv \mathcal{N}(k) \cdot \left(1 - \frac{\mathcal{S}}{k}\right) \approx b \cdot \log \frac{k}{k_{world}}, \quad (5)^*$$

որտեղ k_{world} իրենից ներկայացնում է կապիտալի ինտենսիվ օգտագործումը այլ տնտեսություններում: Տեղադրելով վերջին հավասարումը (11) և (12) արտահայտություններում, դիտարկենք (k, c) տարածությունում ֆազային (*փուլային*) դիագրաման (*գծապատկեր* 1), որը թույլ է տալիս ավանդական ձևերով վերլուծել մոդելի կայուն վիճակը և դրա դինամիկան: Քանի որ, 14-րդ գծապատկերում բերված է առանց միգրացիաի Ռամսեի մոդելի ֆազային (*փուլային*) դիագրաման, ապա հաջորդ քայլերի նպատակն է ստանալ նման դիագրամա արդեն Ռամսեի մոդելի համար միգրացիայով:



Գծապատկեր. 14. Առանց միգրացիաի Ռամսեի մոդելի ֆազային (*փուլային*) դիագրաման: Նկարի վրա պատկերված է Ռամսեի մոդելի դինամիկան: $\dot{c}/c = 0$ և $\dot{k} = 0$ գրաֆիկները բաժանում են տարածությունը չորս տարածքների, սլաքերը ցույց են տալիս յուրաքանչյուր տարածքում շարժման ուղղությունը: Մոդելում գոյություն ունի կայուն վիճակ թամբի տիպի: Կայուն ճյուղը ներկայացնում է իրանից թեքությամբ վերև կոր, որը անցնում է կայուն վիճակի կորդինատների սկզբից: Երբ մեկնարկը սկսվում

է ցածր k մակարդակից օպտիմալ նախնական c արժեքը ևս փոքր է:
Այնուհետև, դեպի կայուն վիճակ անցումային գործընթացի ժամանակ, c և k
աճում են: [46], [76]-[78]


(12) և (5*) արտահայտություններից հետևում է, որ եթե սպառումը $c \neq 0$, ապա $\dot{c} = 0$ գիծը տրվում է որպես.

$$f'(k) = \delta + \rho + x + \frac{(\rho - n) \cdot b \cdot \log(k / k_{world})}{c / k}.$$

Առանց վերջին բաղադրիչի, այն k և c գործակիցների ստացիոնարության արժեքի պայմանն է, ինչը նշանակում է, որ ստացիոնար տոկոսադրույքը $f'(k) - \delta$ հավասար է արդյունավետ զեղչային $\rho + \theta x$ տոկոսադրույքին:


Օլիվեր Բլանչարդը և Ֆիլիպ Վեյլը ընդունելով, որ k^* , դա պարամետրի արժեքն է կայուն վիճակում, որի դեպքում միգրացիան բացակայում է, այսինքն, այս արժեքը բավարարում է $f'(k) = \delta + \rho + x$ պայմանին: $\dot{c} = 0$ կորի տեսքը կախված է k^* և k_{world} հարաբերությունից: Եթե $k^* = k_{world}$, որը արդարացի է տիպիկ տնտեսության համար, ապա նրա գիծը կլինի ուղղահայաց, որը դուրս է գալիս k^* կետից, ոնց պատկերացված է 15ա գծապատկերում: Գիծը, այդ ժամանակ, համընկնում է Ռամսեյի մոդելի զրոյական միգրացիայով ֆազային (*փուլային*) դիագրամաի ստանդարտ գրաֆիկի (*գծապատկեր* 14) հետ:

Եթե երկրի տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, բնութագրվող միգրացիաի բացակայությամբ և դեռ *գրավիչ է իմիգրանտների համար*, այսինքն, եթե $k^* > k_{world}$, ապա կորը պատկերացվում է այնպես, ինչպես այն ներկայացված է 15բ գծապատկերում: Մասնավորապես, եթե $k_{world} < k < k^*$, ապա c արժեքը ձգտում է 0 ($c \rightarrow 0$), երբ k ձգտում է k_{world} և c ձգտում է անվերջության ($c \rightarrow \infty$), երբ k ձգտում է k^* ($k \rightarrow k^*$): Արդյունքում, եթե $k^* < k_{world}$, **ինչը համապատասխանում է Հայաստանում ստեղծված իրավիճակին**, ապա գրաֆիկը կունենա 15-րդ գծապատկերի տեսքը, երբ $k^* < k < k_{world}$.



Գծապատկեր. 15. $\dot{c} = 0$ կորի ձևը Ռամսեի մոդելում հաշվի առնելով միգրացիան:

$\dot{c} = 0$ կորի ձևը կախված է k^*/k_{world} հարաբերությունից: [43]



Գծապատկեր. 16. Ֆազային (փուլային) դիագրաման Ռամսեի մոդելի համար

միգրացիայով. Դիագրամաի վրա պատկերացված է դեպք, երբ $k^* = k_{\text{world}}$, այնպես, որ $\dot{c} = 0$ ուղղահայաց գիծ է, ինչպես ցույց է տրված 15-րդ գծապատկերում: $\dot{k}$ գրաֆիկը ունի ավանդական շրջված Ս-ձևը (հավասարակշիռ թամբաձևի հետագիծ): Կայուն վիճակում k^* -ի դեպքում միգրացիան բացակայում է, քանի որ ենթադրվում է, որ $k^* = k_{\text{world}}$: Եթե սկզբնական ժամանակում տնտեսությունը բնութագրվում է k փոքր արժեքով, ապա անցումը հավասարակշիռ վիճակին, բերում է k և c միապաղ

(մոնոպոն) աճին: Զուտ միգրացիան այդ անցումի ընթացքում բացասական է, բայց ասիմպտոտիկ հասնում է հավասարակշիռ զրոյական արժեքին: [46], [76]-[78]

(5) և (5*) արտահայտություններից հետևում է, որ $\dot{k} = 0$ տրվում է որպես.

$$c = f(k) - (x + n + \delta) \cdot k - b \cdot \log(k/k_{world}),$$

որի դասական ձևը ունի հետևյալ տեսքը.

$$\dot{k} = f(k) - c - (x + n + \delta) \cdot k$$

որտեղ $c \equiv C/L = ce^{-xt}$ և $k(0)$ տրված են: Այդ հավասարումը հանդիսանում է ամբողջ տնտեսության համար ռեսուրսային սահմանափակում:

Ֆիլիպ Վեյլը ներկայացնում է որոշ պարզաբանումներ 16-րդ գծապատկերի վերաբերյալ:

Եթե $k^* < k_{world}$, ապա տվյալ k մակարդակի դեպքում c արժեքը կլինի բարձր, քան նախկինում, իսկ երբ $k^* > k_{world}$ ապա c արժեքը կլինի ցածր, քան նախկինում: Այլ դեպքերում, ֆունկցիայի գրաֆիկը, որը պատկերված է 16-րդ գծապատկերում, կլինի այնպես, ինչպես 14-րդ գծապատկերում ստանդարտ մոդելի համար:

16-րդ գծապատկերում պատկերված է $\dot{c} = 0$ գիծը այն դեպքի համար, որը ներկայացված է 15ա գծապատկերում, երբ $k^* = k_{world}$: k արժեքը կայուն վիճակում կախված է $(k^*)_{mig}$ մեծությունից և հավասար է k^* : Այդ արդյունքը հետևանք է այն բանի, որ $(k^*)_{mig} = k_{world}$, երբ $\mathcal{N}^* = 0$ ((5)* արտահայտությունից): Այսպիսով, տիպիկ տնտեսության համար, որը գտնվում է կայուն վիճակում, կապիտալի օգտագործման ինտենսիվությունը կախված չէ միգրացիայի պոտենցիալից, իսկ միգրացիայի գործակցի հավասարակշիռ արժեքը հավասար է 0:

Եթե $k^* > k_{world}$ ինչպես պատկերացված է 15բ-րդ գծապատկերում, ապա $\dot{k} = 0$ ֆունկցիան հատում է $\dot{c} = 0$ ուղիղ գիծը կետում, որտեղ $k_{world} < (k^*)_{mig} < k^*$, $k^* > 0$: Այսպիսով, ազգային տնտեսությունը ավելի գրավիչ է միգրանտների համար, եթե այն գտնվում է հավասարակշիռ վիճակում, որը չի ենթադրում միգրացիա: Միգրացիայի

հնարավորությունը կհանգեցնի նոր հավասարակշիռ վիճակին արդեն իսկ դրական միգրացիայով և հետևաբար կապիտալի ավելի ցածր օգտագործման ինտենսիվությամբ (*քանի որ, միգրանտները տեղափոխում են իրանց հետ միայն մի փոքր կապիտալ*):

Այդ եզրակացությունները տրամագծորեն հակառակ են, եթե $k^* < k_{world}$, ինչպես պատկերացված է 15գ-րդ գծապատկերի վրա: Այդ դեպքում, $k^* < (k^*)_{mig} < k_{world}$ և $m^* < 0$: Այս դեպքը մեր համար ավելի հետաքրքիր է, քանի որ համապատասխանում է Հայաստանում ստեղծված իրավիճակին:

Մոդելում կայուն վիճակը, որպես կանոն, որոշվում է “*թամբի ձևի*” հետազիծով, իսկ ֆազային (*փուլային*) դիագրաման, որը տրված 16-րդ գծապատկերում կարող է օգտագործվել որպեսզի ցուցադրվի շարժման ուղղությունը:

Ֆիլիպ Վեյլը որպեսզի գնահատի կոնվերգենցիայի արագությունը, օգտվում է Կոբ-Դուգլասի արտադրական $f(k) = Ak^\alpha$ ֆունկցիայից: Տեղադրելով այդ ֆունկցիան (11) և (12) արտահայտություններում և հետո լոգարիթմենք և գծայնացնենք համակարգը հավասարակշռության արժեքի շրջակայքում, որի արդյունքում, **կոնվերգենցիայի գործակիցը** որոշվում է հետևյալ ձևի.

$$2\beta = \left\{ \frac{\zeta^2 + 4b \cdot (\rho - n) + 4(1 - \alpha)(\rho + \delta + x) \times}{\times \left[\frac{\rho + \delta + x}{\alpha} - (n + x + \delta) \right]} \right\}^{1/2} - \zeta, \quad (13)$$

որտեղ $\zeta = \rho - \pi - b$:

Այսպիսով, Ֆիլիպ Վեյլը գալիս է հետևյալ եզրակացության, որ Ռամսեի ստանդարտ մոդելի համապատասխանում է (13) արտահայտությունը, երբ $b=0$: Կարելի է ցույց տալ, որ (13) արտահայտությունից հետևում է, որ β աճում է b հետ միասին: Այսպիսով, ինչպես Սոլոու-Սվենի մոդելում, միգրացիայի նկատմամբ մեծ հակվածությունը բերում է կոնվերգենցիայի արագության աճին (*եթե $\delta < k$*):

2.4. Բրաունի տնտեսական աճի և միգրացիայի մոդելը, ու դրա կիրառումը Եվրասիական Տնտեսական Միության և Եվրասիական Միգրացիոն Համակարգի համար

Ներկայացնենք Ջոան Բրաունի կողմից կառուցված մոդելը:

Երկրի տնտեսությունը, ինչպես և մյուս տնտեսությունները, նկարագրվում են Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայով.

$$Y = AK^{\alpha} L^{1-\alpha} \cdot \left(\frac{R}{L}\right)^{\lambda} \quad (14)$$

որտեղ $L \equiv Le^{xt}$ — աշխատանքային ռեսուրսների արդյունավետ քանակն է, $x \geq 0$ էկզոգեն տրված՝ բոլոր տնտեսությունների համար բնորոշ աշխատանքը տնտեսող տեխնոլոգիան գործընթացը ($x \geq 0$): Բերված Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի նոր անդամն է R հաստատունը, որը բնական ռեսուրս է և ազգային տնտեսության ռեզիդենտները ունեն ազատ օգտագործման հնարավորություն: Սակայն, այդ բարիքը կուտակման առարկա է, R/L - մեկ շնչի հաշվով միջին մեծությունը ներառված է արտադրական ֆունկցիայում: Ենթադրվում է նաև, որ $0 < \lambda < 1-\alpha$, այսինքն, ընդհանուր արդյունքը K մինչև L նվազող է տվյալ R դեպքում, սակայն սահմանային սոցիալական արտադրանքը ըստ L դրական է:

Ջոան Բրաունը (14) արտահայտությունում, օրինակ, համարում է R ինչպես մասնավոր հողեր, և ներգաղթյալները կարող են օգտագործել այդ ռեսուրսը, վճարելով ռենտա: Գաղթելու ցանկությունը կախված է հարկադրման համակարգից: Դիտարկվում է այնպիսի իրավիճակ, երբ ներգաղթողները ավտոմատ ներառված են R օգտագործման մեջ և նրանցից, միգրացիոն հարկեր և վճարներ չեն գանձվում:

Հետևելով Ջոան Բրաունի ստացված արդյունքներին, ներկայացնենք երկրի ներսի համար աշխատավարձի դրույքաչափի բանաձևը: Աշխատավարձի դրույքաչափը հավասար է աշխատանքի մասնակի սահմանային ապրանքին և դուրս է բերվում (14) արտահայտությունից.

$$w = (1-\alpha)Ak^{\alpha} \cdot \left(\frac{R}{L}\right)^{\lambda} \cdot e^{xt},$$

որտեղ $k \equiv K/L$:

Կապիտալի վարձակալության արժեքը կազմում է $r + \delta$, որտեղ r — համաշխարհային (կամ ավելի կոնկրետ, ԵԱՏՄ) իրական տոկոսադրույքն է, և ստացվում է երկրի ներսի համար աշխատավարձի դրույքաչափի բանաձևը.

$$w = \left[\frac{(1 - \alpha) \cdot A^{1/(1-\alpha)} \cdot \alpha^{\alpha/(1-\alpha)} \cdot (R/L)^{\lambda/(1-\alpha)}}{r + \delta} \right] \cdot e^{xt} \quad (15)$$

Հետևաբար, աշխատավարձի ներքին դրույքաչափը հարաբերական մեծ է աշխատավարձից, որը առաջարկվում է ևս ինչ-որ տեղ, այն ենթադրությամբ, եթե տնտեսությունում առկա են բավարար քանակությամբ բնական պաշարներ մեկ շնչի R/L հաշվով և տեխնոլոգիաների A մակարդակը համեմատաբար բարձր է: Հիշեցնենք, որ կառավարության քաղաքականությունը ևս կարող է հաշվի առնվել A գործակիցում:

Միգրացիայի վերաբերյալ որոշման ընդունում

Ըստ, Ջոան Բրաունի, քանի որ դիտարկվում է կապիտալի կատարյալ շարժունակությունը և անտեսվում է բնակվելու պայմանների տարբերությունը, որոնք ներկայացված են օգտակարության ֆունկցիայում, ապա **մարդիկ համեմատում են երկիրները բացառապես աշխատավարձի դրույքաչափի հիմքի վրա**: Ենթադրենք, որ համաշխարհային տնտեսությունը հաստատում է աշխատավարձի դրույքաչափը w_{world} չափով (մեր ուսումնասիրության համար, իմաստավոր կլինի, եթե այն հիմնվի ԵԱՏՄ գոյում ձևավորված աշխատավարձի վրա): Մի երկրից մյուս երկիր տեղափոխումից շահումը՝ t ժամանակում, ներկայացնում է իրենից աշխատավարձի դրույքաչափի տարբերության ընթացիկ գնահատականը.

$$B(t) \equiv \int_t^{\infty} [w(v) - w_{world}] \cdot e^{-r \cdot (v-t)} dv \quad (16)$$

Եթե սահմանվի $B(t) \equiv B(t) \cdot e^{-xt}$, ապա $B(t)$ ածանցյալը ըստ ժամանակի որոշվում է (16) արտահայտությունից.

$$\dot{B} = -[w(t) - w_{world}] - (r - x) \cdot B(t) \quad (17)$$

որտեղ

$$w(t) \equiv w(t) \cdot e^{-xt} \quad \text{և} \quad w_{world} \equiv w_{world} \cdot e^{-xt} .$$

Ենթադրելով, որ համաշխարհային տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, w_{world} գործակիցը համարվում է հաստատուն:

Չկորցնելով ամբողջականության գնահատականը, ենթադրվում է, որ $w(t) \geq w_{world}$.

Այդ պայմանը նշանակում է, որ $w(v) \geq w_{world}$, և հետևաբար, $B(v) \geq 0$ բոլոր $v \geq t$ համար: Ցանկացած առաջացող միգրացիոն հոսքը ուղված կլինի դիտարկվող երկիր:

Իրավիճակը կլինի հակառակն, եթե $w(v) \leq w_{world}$: Այս վերջին տարբերակը համապատասխանում է Հայաստանից արտագաղթելու իրավիճակին, որի դեպքում, $B(v) \leq 0$ բոլոր $v \geq t$ համար, այսինքն, աշխատավարձը նվազող է, կամ ընդհանրացնելով կարելի եզրակացնել, որ կյանքի մակարդակը նվազում է, միգրացիոն հոսքը դիտարկվելու է ուղված Հայաստանից դուրս:

Պարզեցնելով վերլուծությունը ենթադրվում է, որ բնակչության բնական աճը երկրում հավասար է զրոյի: Նշանակենք, $M(t)$ որպես միգրանտների հոսք դեպի երկիր կամ երկրից դուրս, այսինքն նա կարող է լինել կամ դրական, կամ բացասական: Հայաստանի դեպքում, $M(t)$ ունի բացասական նշան: Եթե $M(t) \geq 0$ ՝ միգրանտների ներհոսքն այլ երկիրներից t ժամանակում, ապա բնակչության աճը ընդունող երկրի ներսում հավասար է.

$$\frac{\dot{L}}{L} = \frac{M(t)}{L(t)} . \quad (18)$$

Ջոան Բրաունի որպես առանցքային խնդիր է համարում՝ **միգրացիայի վրա կադրաված ծախսերի** գնահատականը: Ենթադրվում է, որ, յուրաքանչյուր միգրանտի ծախսերը ֆունկցիա է, որը աճում է ըստ $M(t) / L(t)$ արգումենտի: Այս ենթադրությունը բավականին խելամիտ է. հասկանալի է, որ աշխատանքի և ապրուստի վայրի որոնման ծախսերը աճում են ռեցիպիենտ-բնակչության և միգրանտների թվի աճի հետ

միասին¹⁶: Որպես ծախս հանդես է գալիս կորցրած աշխատանքը և, համապատասխանաբար, աշխատանքային ժամերը, այսինքն, տրված $M(t) / L(t)$ մեծության համար, ծախսերը՝ ներկայացված արտադրանքի միավորով, համեմասնորեն են աշխարհի աշխատավարձի w_{world} դրույքաչափին, որը միգրանտները կստանան իրանց հայրենիքում: Հետևաբար, միգրանտների կողմից կրած ծախսերը հավասար են.

$$\text{Կորցրած եկամուտը տեղափոխումից} = \eta \cdot \frac{M(t)}{L(t)} \cdot w_{world}, \quad (19)$$

որտեղ $\eta' > 0$, $\eta'' \geq 0$: Պարզության համար ենթադրվում է, որ $\eta(0) = 0$, ինչը նշանակում է, որ նկատի չենք առնվում տեղափոխման, ինչպես նաև այլ ծախսերը, այսպիսով յուրաքանչյուր միգրանտի ծախսերը նվազում են մինչև զրո, երբ միգրանտների հոսքը նվազում է մինչև զրո (*ավելի մանրամասն վերլուծությունը տրված է Ջոան Բրաունի աշխատանքում*):

Միգրանտների քանակի աճի հետ, երկրում նվազում է R / L (*կուտակման բարիքի միջին արժեքը մեկ շնչի հաշվով*), և, ըստ (15) արտահայտության՝ նվազում է աշխատավարձը՝ w : Եթե տեղափոխված մարդկանց քանակը այնքան է, որ ռեցիպիենտ-երկրում w հավասարեցվում է w_{world} , ապա միգրացիայի շարժառիթը բացակայում է¹⁷: Երբ աշխատավարձերը հավասար են $w(v) = w_{world}$, ազգային տնտեսությունը կգտնվի կայուն վիճակում, որտեղ միգրացիան գտնվում է զրոյական վիճակում; L բնակչությունը՝ հաստատուն է; k կապիտալի օգտագործման ինտենսիվությունը ևս հաստատուն է: $\eta(0) = 0$ պայմանը նշանակում է, որ համակարգում կայուն վիճակը իրականում հասանելի է, քանի որ եթե $w > w_{world}$, ապա աշխատավարձի դրույքաչափի տարբերությունը $B > 0$ և մարդկանց մոտ կլինի դրդապատճառ տեղափոխվելու՝ զրոյական ծախսերով: Այսպիսով, անձի մոտ

¹⁶ Առանցքային առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տեղափոխման սահմանային ծախսերը աճում են տեղափոխվելու ցանկացողների քանակի աճի հետ: Այդ հարաբերությունը ևս կապահպանվի տեղափոխման ծախսերի ոչ միատարրության դեպքում:

¹⁷ Եթե երկրի ներսում տեխնոլոգիական պարամետրը A համընկնի ամբողջ աշխարհի տեխնոլոգիական պարամետրի հետ, ապա աշխատավարձերը դառնում են հավասար, երբ R / L հարաբերությունը համընկնում է մյուս աշխարհի R / L հարաբերության հետ:

շարունակ կլինի դրդապատճառ արտագաղթելու, իսկ ռեցիպիենտ-երկրում բնակչությունը կաճի այնքան, քանի դեռ $w > w_{world}$ (Եթե ենթադրենք, որ $\eta(0) > 0$, ապա կայուն վիճակում կպահպանվի աշխատավարձերի միջև դրական տարբերությունը մյուս աշխարհի և երկրի ներսում):

Հետևաբար, հավասարակշռությունը ենթադրում է, յուրաքանչյուր ժամանակում, միգրացիաի այնպիսի մեծություն, որի դեպքում տեղափոխման օգուտները և կորուստները հավասար են իրար:

$$B(t) = \eta \cdot \frac{M(t)}{L(t)} \cdot w_{world} \quad (20)$$

բոլոր t համար:

Ջոան Բրաունի հաշվարկում է միգրանտների հոսքը յուրաքանչյուր ժամանակի համար, որը իր հերթին ազդում է ռեցիպիենտ-երկրի բնակչության աճի տեմպի վրա. դրա համար նա ձևափոխում է (20) արտահայտությունը.

$$\frac{\dot{L}}{L} = \frac{M(t)}{L(t)} = \psi \left(\frac{\dot{B}}{w_{world}} \right), \quad (21)$$

որտեղ ψ ֆունկցիա է, հակառակը՝ η (19) արտահայտությունից: Ինչպես վերն նշեցինք, $\eta' > 0$ և $\eta'' \geq 0$, ապա η ՝ հստակ սահմանված ֆունկցիա է, ինչպես նաև հակառակ ֆունկցիան՝ ψ ևս միանշանակ սահմանված է: ψ ֆունկցիան բավարարում է $\psi' > 0$ և $\psi'' \geq 0$ պայմաններին: $\eta(0) = 0$ ենթադրությունից հետևում է, որ $\psi(0) = 0$:

Մեր կողմից ներկայացված Սոլու-Սվենի և Ռամսեի մոդելների վերլուծությունը, դիտարկում է միգրացիաի ֆունկցիան, որում միգրացիաի գործակիցը $\mathfrak{S} \equiv M/L$ աճում էր՝ երբ մեծանում էր աշխատավարձը W և, հետևաբար, երբ մեծանում էր $k(t)$ ՝ կապիտալի քանակը, որը իր հետ տեղափոխում է (դուրս է հանում Հայաստանից) յուրաքանչյուր միգրանտ: Տվյալ ֆունկցիայում ենթադրվում է, որ այլ աշխարհի պայմանները, ներկայացված w_{world} մնում են անփոփոխ:


Համակարգը դինամիկ վիճակում, կայուն վիճակ և դրան անցման գործընթացը

L և B պարամետրերի համար դինամիկ համակարգը տրվում է (17) և (21) արտահայտություններով, որտեղ W փոփոխվում է հակադառձ համամասնական L ՝ համապատասխան (15) արտահայտության

$$\dot{w} = \left[\frac{(1-\alpha) \cdot A^{1/(1-\alpha)} \cdot \alpha^{\alpha/(1-\alpha)} \cdot (R/L)^{\lambda/(1-\alpha)}}{r + \delta} \right];$$

Ըստ Ջոան Բրաունի, 17-րդ գծապատկերում որպեսզի կառուցվի (L, B) **տարածությունում ֆազային դիագրաման**, օգտագործվել են (17) և (18) արտահայտությունները: (21) արտահայտությունից և ψ ֆունկցիայի հատկություններից, հետևում է, որ $\dot{L} = 0$ (երբ $L \neq 0$) համապատասխանում է $B = 0$: Այդ արտահայտությունը նշանակում է նաև, որ (քանի որ $\psi' > 0$) $\dot{L} > 0$, երբ $B > 0$ և $\dot{L} < 0$, երբ $B < 0$:

Արտահայտություն 17-ից հետևում է, որ $\dot{B} = 0$ համապատասխանում է դրական գծային կախվածության՝ B և w միջև: Քանի որ w հակառակ համամասնական է L (15) արտահայտությունից, B և L միջև հարաբերակցությունը ևս հակառակ համամասնական է, ինչպես դա ցույց է 14-րդ գծապատկերում: Քանի որ $r > x$, և եթե աշխատավարձի դրույքաչափի տարբերության B մեծությունը ավելի բարձր է $\dot{B} = 0$ կորից, ինչը նշանակում է, որ $\dot{B} > 0$, ապա մեծությունները՝ ավելի ցածր կորի դեպքում նշանակում է, որ $\dot{B} < 0$:



Գծապատկեր. 17. Ֆազային դիագրաման այն դեպքում, երբ միգրացիան՝ ընտրության գործակից է:

Մոդելի դինամիկան կարող է նկարագրվել օգտագործելով երկու պարամետր՝ B տեղափոխումից ստացված օգուտի ընթացիկ գնահատականը և երկրի ներսում L բնակչությունը: Համակարգի լուծումն հանդիսանում է կայուն թամբաձև հետագիծ, որի թեքությունը միշտ բացասական է: Այսպիսով, ենթադրվում է, որ ի սկզբանե ռեցիպիենտ երկրում բնակչության ցածր քանակը նշանակում է՝ բարձր միգրացիայից օգուտները, և հետևաբար, զուտ միգրացիայի $\mathcal{N}$ ավելի բարձր գործակիցը: Բնակչության աճի հետ միասին՝ զուտ օգուտը միգրացիայից փոքրանում է: Կայուն վիճակում զուտ օգուտը B ՝ զրոյական է, իսկ L բնակչությունը՝ հաստատուն: [80]

Գծապատկեր 17-ում երևում է, որ կայուն վիճակում բնակչությունը $L = L^*$ հաստատուն է, իսկ $\dot{B} = 0$: (17) արտահայտությունից հետևում է, որ $w^* = w_{world}$, իսկ (15) արտահայտությունից որոշվում է L^* արժեքը, որը բավարարում է այդ հավասարմանը: Մասնավորապես, L^* աճում է Կոբ-Դուգլասի ֆունկցիայի A -ի պարամետրի հետ միասին և ավելանում է ուղղակի համամասնորեն բնական ռեսուրս R -ին (*երկրի տնտեսության համար*):

Համակարգի լուծումն հանդիսանում է թամբաձև հետագիծ. գծապատկեր 17-ում ցույց է տրված շարժի ուղղությունը: Եթե ժամանակի սկզբում, տնտեսությունում $L < L^*$, ապա $\dot{B} > 0$ և L ժամանակի ընթացքում աճում է: Արդյունքում, w համապատասխան նվազեցումը բերում է B նվազեցման և, հետևաբար, միգրացիայի գործակցի նվազեցման: Ժամանակի ընթացքում միգրացիայի գործակիցը միապաղաղ (*մոնոտոն*) նվազում է, հասնելով մինչև զրո L դեպքում, որը ձգտում է L^* :

Ջոան Բրաունը իր աշխատանքում **գնահատում է կոնվերգենցիայի (converge, մոտեցման) արագությունը**, դրա համար իրականացնելով համակարգի ավանդական գծայնացումը՝ կայուն վիճակի կետի շրջակայքում: Այս դեպքում, համակարգը նկարագրվում է (17) և (21) արտահայտություններով, իսկ գծայնացումը իրականացվում է ըստ B և $\log(L / L^*)$: Միգրացիայի գործակիցը, որը հավասար է L աճի տեմպին, տրվում է հետևյալ ձևի.

$$\frac{M}{L} = \frac{\dot{L}}{L} \approx \beta \cdot \log \frac{L^*}{L}, \quad (22)$$

որտեղ **կոնվերգենցիաի գործակիցը** որոշվում է հետևյալ հավասարումից.

$$2\beta = \left[(r-x)^2 + \frac{4\lambda \cdot \psi'(0)}{1-\alpha} \right] - (r-x) \quad (23)$$

(23) արտահայտությունից երևում է, որ առանցքային գործակիցը, սահմանող կոնվերգենցիաի արագությունը, հանդիսանում է $\psi'(0)$ (*նայիր արտահայտություն 21*), ինչը ցույց է տալիս միգրացիաի գործակցի զգայունությունը հավասարակշիռ վիճակի շրջակայքում՝ հարաբերակցված տեղափոխումից B/w_{world} ստացված օգուտին: Իչքան մեծ է զգայունությունը, այդքան մեծ է կոնվերգենցիաի արագությունը: Հիշեցնենք, որ ψ ֆունկցիա է (19) արտահայտությունում, հակառակը η , կապում է տեղափոխման ծախսեր՝ միգրացիաի գործակցի հետ: Իչքան ավելի արագ են աճում միգրացիաի ծախսերը, երբ աճում են միգրանտների քանակը, այդքան փոքր կլինի միգրացիաի գործակցի արձագանքը B/w հարաբերական օգուտին և, հետևաբար, կոնվերգենցիաի արագությունը փոքր է: Կոնվերգենցիաի արագությունը L համար, նաև հանդիսանում է y համար՝ կոնվերգենցիաի արագություն:

Հիմնվելով, նախորդում քննարկված որոշ էմպիրիկ արդյունքների վրա, կապված միգրացիաի զուտ գործակցի հետ, մասնավորապես՝ որ նա կախված է մեկ շնչի

հաշվով եկամուտի կամ արտադրանքի տարբերությունից և փոխարինելով $\log \frac{L^*}{L}$,

$\log \frac{y}{y^*}$ արտահայտությունով, (22) հավասարումը կարելի ներկայացնել հետևյալ ձևի.

$$\frac{M}{L} = \frac{\dot{L}}{L} \approx \frac{\beta \cdot (1-\alpha)}{\lambda} \log \frac{y}{y^*} \quad (24)$$

(24) արտահայտությունը կարելի է դիտարկել որպես երկու հավասարումների համակարգ՝ արտադրության և միգրացիաի գործակցի աճի տեմպի վերաբերյալ: Ենթադրվում է, որ ուսումնասիրվում են պետությունների խումբ, որոնց համար α և λ գործակիցները նույն են: Այդ դեպքում, ավելի բարձր $\psi'(0)$ արժեքով երկիրների համար

β գործակիցը կլինի ևս բարձր: Հետևաբար, համաձայն (24) արտահայտության, այդ պետությունները կբնութագրվեն միգրացիաի գործակիցների ավելի բարձր զգայունությամբ՝ մեկ շնչին ընկնող ապրանքների տարբերությամբ:

Ջոան Բրաունը ստուգեց այն վարկածը, որ միգրացիաի գործակցի ավելի բարձր զգայունությունը կհամապատասխանի կոնվերգենցիաի ավելի բարձր արագությանը՝ մեկ շնչին ընկնող եկամուտի կամ արտադրանքի վերաբերյալ: Նա կարողացավ բավականին ստույգ համեմատել միգրացիաի յոթ գործակցի զգայունության գնահատականները, համապատասխան կոնվերգենցիաի գործակիցներով՝ մեկ շնչին ընկնող եկամուտի կամ արտադրանքի համար: Չնայած նրան, որ ընտրությունը բավականին փոքր էր, նրա արդյունքները հաստատեցին հիմնական վարկածը, այսինքն, **երկիրները միգրացիաի գործակցի բարձր զգայունությամբ ևս բնութագրվում են կոնվերգենցիաի ավելի բարձր արագությամբ:**

Համաշխարհային կամ Եվրասիական Տնտեսական Միության տնտեսության դինամիկան

Մինչ այժմ ենթադրում էինք, որ համաշխարհային / ԵԱՏՄ տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, բնութագրվելով հաստատուն աշխատավարձի դրույքաչափով՝ մեկ միավոր արդյունավետ w_{world} աշխատանքի նկատմամբ, և կապիտալի օգտագործման համապատասխան ինտենսիվությամբ, որը նշանակվել է k_{world} : Արդեն նկարագրվել է նաև տեղափոխման գործընթացի դինամիկան՝ միգրացիաի առկայության դեպքում, համաձայն որի երկրի ներսում աշխատավարձի արդյունավետ դրույքաչափը w հավասարեցվում է համաշխարհային/ԵԱՏՄ w_{world} հաստատուն մակարդակին: Եթե երկրի ներսում տնտեսությունը բնութագրվում է նույն տեխնոլոգիաներով, ինչ համաշխարհային/ԵԱՏՄ տնտեսությունը, ապա k ձգտում է k_{world} :

Ինչպես վերն նշվել է, հրատապ հիմնախնդիր է դիտարկել այդ վերլուծությունները ոչ թե համաշխարհային տնտեսության տեսակետից, այլ Եվրասիական Միգրացիոն Համակարգի ներքո:

Ընդհանուր դեպքում, կարելի է դիտարկել անցումային դինամիկան, որում կայուն վիճակում k_{world} հասնում է $(k_{world})^*$ արժեքին: Այդ դեպքում i տնտեսության համար k_i փոփոխությունները կարող է բաժանվել երկու փուլի. *առաջինը*, անցում k_i դեպի k_{world} և, *երկրորդը*, անցում k_{world} դեպի $(k_{world})^*$:

Ջոան Բրաունը իր աշխատանքում աշխարհը (*մեր դեպքում, նաև ԵԱՏՄ*) դիտարկում է կազմված երկու $i = 1, 2$ ռեգիոններից: Ռեգիոնների միջև միգրացիան հնարավոր է, ու այդ դեպքում տեղափոխման ծախսերը սահմանվում են (19) արտահայտության միջոցով: Համաշխարհային/ԵԱՏՄ տնտեսության համար (*այս դեպքի համար, որպես երկու տնտեսությունների միացում*) k_{world} և C_{world} հիմնական կապիտալի և մեկ արդյունավետ աշխատակցի սպառման, դինամիկան համընկնում են Ռամսեի մոդելի արժեքների հետ: Այդ գործընթացը ենթադրում է աստիճանական անցում k_{world} դեպի $(k_{world})^*$, իսկ կոնվերգենցիայի արագությունը կախված է նույն գործակիցներից ունեն հիմնարար նշանակություն Ռամսեի մոդելում:

Այդ նույն ժամանակ մարդիկ գաղթում են երկիր՝ աշխատավարձի ավելի բարձր դրույքաչափով, ինչը բերում է ռեցիպիենտ-երկրում մեկ շնչի հաշվով արտադրության նվազման և այդ ցուցանիշի աճին երկրում, որտեղ աշխատավարձի դրույքաչափը ունի ցածր մակարդակ: Այդ գործընթացի արագությունը կախված է կոնվերգենցիայի գործակիցներից, որոնք տրված են (23) արտահայտությունում:

Յուրաքանչյուր երկրի համար մեկ արդյունավետ աշխատողի համար արտադրության աճի տեմպը կարող է հաշվարկվել հետևյալ ձևի.

$$\frac{\dot{y}_i}{y_i} = -\beta \cdot \log \frac{y_i}{y_{world}} - \mu \cdot \log \frac{y_{world}}{(y_{world})^*}, \quad (25)$$

որտեղ β տրված է (23), իսկ μ որոշվում է համաշխարհային/ԵԱՏՄ տնտեսության Ռամսեի մոդելից: (25) արտահայտությունը թույլ է տալիս հաշվի առնել տարածքային արդյունքը, որը ենթադրում է երկրների միջև տարբերությունների հարթեցում, ինչպես նաև ժամանակային արդյունք, որը ենթադրում է համաշխարհային տնտեսության անցումը կայուն վիճակին: Եթե դիտարկվեն կոնկրետ ժամանակի դեպքում՝

տարածքային ցուցանիշները, ապա հարաբերական աճի տեմպը հակադարձ կախված է սկզբնական համեմատական վիճակից և կներառի β գործակիցը: Հակառակը, երբ դիտարկվում են ժամանակային տվյալները հարաբերակցված y_{world} գործակցին, ապա աճի տեմպը կնվազի $y_{world}/(y_{world})^*$ աճի հետ միասին և կներառի μ գործակիցը: Պանելային վերլուծության դեպքում յուրաքանչյուր տնտեսության աճի տեմպը կախված է $y_i/(y_{world})^*$ և $y_{world}/(y_{world})^*$, նրա հաշվարկման բանաձևը ներառում է երկու β և μ գործակիցները:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

3.1. ՀՀ աշխատանքային միգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա և դրա մոդելավորման հիմնախնդիրները

Հայաստանի բնակչության միգրացիայի արդյունքում ի հայտ են գալիս ինչպես դրական, այնպես էլ բացասական էֆեկտներ տնտեսական զարգացման համար, ինչպես միգրանտների ելքի, այնպես էլ մեկնման վայրերում: Նրանց նկարագրմանը բավական շատ գրականություն է նվիրված: Միգրացիայի հիմնական հետևանքները թվարկված են ՄԱԿ 2010թ. հրապարակված *«Պատմեշների հաղթահարում. մարդկային շարժը և զարգացումը»* զեկույցում [84]: Համաշխարհային պրակտիկան ապացուցել է, որ թեև միգրացիան շատ դրական ասպեկտներ ունի ընտանիքների նյութական խնդիրների լուծման առումով, բայց և այնպես, այն կարող է հանգեցնել սուր սոցիալական հետևանքների: Կարելի է եզրակացնել, որ որքան ավելի շատ բնակչություն է ընդգրկվում միգրացիոն գործընթացում, այնքան ավելի շատ են միգրացիայի հետևանքները: Բնակչության միգրացիան պարզապես մարդկանց մեխանիկական տեղաշարժ չէ տարածությունում, այն բարդ, բազմակողմ սոցիալական գործընթաց է: Միգրացիայի՝ ինչպես ուղարկող, այնպես էլ ընդունող երկրների հասարակական կյանքի տարբեր ոլորտները շոշափող բարդ սոցիալական գործընթացի ընկալումը շատ կարևոր է միգրացիոն գործընթացների կառավարման մեխանիզմի ճիշտ գործադրման համար: Բնակչության միգրացիան տեղի է ունենում մի շարք պատճառների և գործոնների ազդեցությամբ, որոնք բարդ և բազմաբնույթ են: Այս դիրքերից միգրացիայի աճը պայմանավորող հիմնական գործոնների, դրա կարգավորմանն անհրաժեշտ միջոցների ընդունման հետազոտությունը հայրենական տնտեսագիտության արդիական խնդիր է համարվում:

Շուկայական տնտեսության ներկայիս պայմաններում, հաշվի առնելով ազգային և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող փոփոխությունները, միգրացիոն ցուցանիշների դինամիկայի կանխատեսումը և դրա ազդեցությունը տնտեսական աճի

վրա ձեռք է բերում կենսական նշանակություն տնտեսական քաղաքականության մշակման բոլոր բնագավառներում և մակարդակներում, բոլոր հետազոտական կառույցների կողմից: Միայն այդ դեպքում է հնարավոր ձևավորել և իրականացնել համապատասխան **պետական քաղաքականությունը միգրացիայի կարգավորման գործում:**

Այդ երկու հանգամանքները կարևոր են այն տեսակետից, որ թույլ են տալիս տնտեսամաթեմատիկական մոդելավորման ժամանակ ձևավորել օգտագործվող փոփոխականները և հստակ ներկայացնել նրանց կապերը:

Համապատասխանաբար, ատենախոսությունում կարևորվում է ուղարկող (*արտահանող*) դոնոր երկրի տնտեսական աճի վրա միգրացիայի ազդեցության գնահատականը:

Այս հարցի ուսումնասիրությունը սկսվել է համեմատաբար վերջերս, բայց սրընթաց գլոբալիզացիայի պատճառով էլ ավելի լայն տարածում է ստանում: Միակողմանի միգրացիայի ազդեցությունը ընդունող և ուղարկող երկրի տնտեսությունների վրա, տեսական մոտեցման շրջանակներում պարզագույն դեպքում ուսումնասիրվում է *աշխատանքի առաջարկի բազային ստատիկ մոդելի* հիման վրա: Այս մոտեցման շրջանակներում ուղարկող երկրի տնտեսության չափերը փոքրանում են, այն դեպքում, երբ աշխատանքի արտադրողականությունն աճում է. ընդունող երկրում տեղի է ունենում ուղիղ հակառակը [40]:

Նույն եզրահանգումները կարող են ստացվել էկզոգեն առաջադրվող միգրացիան Սոլոուի (*Սոլոու-Սվենի*) ստանդարտ մոդելում ներառելով: Հիշեցնենք, որ Սոլոուի մոդելը [41] առանց տեխնոլոգիական առաջընթացի դիտարկման միարտադրանք մոդել է, որտեղ թողարկումը որոշվում է երկգործոն նեոդասական արտադրական $Y = F(K, L)$ ֆունկցիայի միջոցով, որտեղ Y – թողարկումն է, K – հիմնական կապիտալը, L – աշխատանքը, F – արտադրական ֆունկցիան, որն ունի հատկությունների ստանդարտ հավաքածու: Ժամանակի մեջ արտադրական գործոնների փոփոխությունները նկարագրվում են $\dot{K} = -\delta K + pF(K, L)$ հավասարումներով, որտեղ n – բնակչության աճի մշտական տեմպն է, δ – կապիտալի հեռանալու գործակիցը, p – խնայողության նորմը: Կապիտալ զինվածության տերմիններով $k = \frac{K}{L}$ մոդելը կարող է գրվել մեկ

դիֆերենցիալ հավասարման օգնությամբ՝ $\dot{k} = pf(k) - (n + \delta)k$, որտեղ

$f(k) = \frac{F(K, L)}{L} = F(k, 1)$ - աշխատանքի արտադրողականությունն է, այսինքն՝ մեկ

աշխատողին բաժին ընկնող թողարկումը: Հայտնի է, որ Սոլոուի մոդելի շրջանակներում բնակչության աճի տեմպի մեծացումը n հանգեցնում է կապիտալ զինվածության k^* և արտադրողականության $f(k^*)$ ավելի փոքր հավասարազոր մեծությունների: Այսպիսով, Սոլոուի մոդելում բնակչության թվի աճը հանգեցնում է արտադրողականության ավելի փոքր մեծությունների: Համապատասխանաբար, միգրացիայի հաշվառմամբ Սոլոուի մոդելը կանխատեսում է արտադրողականության նվազում ընդունող երկրում և աճ՝ ուղարկողում:

Էմպիրիկ հետազոտությունները հաստատում են ընդհանուր թողարկման աճի-նվազման վերաբերյալ արդյունքներն ընդունող-ուղարկող երկրներում, ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող թողարկմանը, ապա գործնականում կարող են դիտվել այդ ցուցանիշի տարբեր փոփոխություններ:

Ատենախոսությունում դիտարկվում է տնտեսական աճի մոդել, որում կներառվի միգրացիան/արտագաղթը, և տնտեսական աճը նկարագրվում է, հիմք ընդունելով Սոլոու-Սվենի նոր դասական մոդելը:

Կոնցեպտուալ մոտեցումը այդ մոդելներում կայանում է նրանում, որ միգրացիայի գործընթացը կամ աշխատուժի մոբիլությունը դիտարկվում է որպես կապիտալի մոբիլության անալոգ: Տարբերությունն այն է, որ կապիտալը եկամտաբերության ավելի փոքր նորմ ունեցող երկրներից հոսում է եկամտաբերության ավելի մեծ նորմ ունեցող երկրներ, իսկ աշխատուժը պակաս աշխատավարձ և կեցության պակաս նպաստավոր պայմաններ ունեցող երկրներից անցնում է բարձր աշխատավարձ և կեցության ավելի նպաստավոր պայմաններ ունեցող երկրներ:

Ինչպես հայտնի է, կապիտալի մոբիլությունը նպաստում է իրենց կայուն վիճակին երկրների կոնվերգենցիային: Ինչպես ցույց են տալիս Ռ.Ջ. Բարոն և Խ. Սալա-ի-Մարտինը, աշխատանքի մոբիլությունը հանգեցնում է նույն արդյունքներին [57]:

Ենթադրվում է նաև, որ միգրացիան տարբերվում է բնակչության բնական աճից, քանի որ կախված չէ ծնելիությունից և մահացությունից: Նախ՝ միգրացիայի պարագայում բնակչության աճը ընդունող երկրում նշանակում է մեկ այլ երկրում

բնակչության թվաքանակի համապատասխան նվազում: Ուստի, անհրաժեշտ է **ներգաղթը և արտագաղթը դիտարկել որպես մեկ գործընթացի երկու կողմեր:** Մոդելի նման ճշգրտումը, որը նկատի է առնվում մեր կողմից, թույլ է տալիս գնահատել միգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական աճի վրա, որը դիտարկվում է որպես դոնոր երկիր:

Երկրորդ՝ միգրանտները գալիս են արդեն կուտակված մարդկային կապիտալով: Քանի որ միգրացիան ներառում է նաև մարդկային կապիտալի տեղափոխությունը, ապա աշխատուժի մոբիլությունը նշանակում է նաև կապիտալի որոշ մոբիլություն:

Եվ հենց այս դիրքերից այն, ինչը պահպանում է արժեքը Սոլոու-Սվենի և Ռամսեի մոդելում, կարելի է վերագրել այն երկրներին, որոնք դեռ չեն գտնվում գիտատեխնիկական առաջընթացի վերին աստիճաններին, որոնք շարունակում են մնալ արտադրության կազմակերպման ինդուստրիալ ձևի մեջ: Դա բնորոշ է այնպիսի երկրին, ինչպիսին Հայաստանն է, ինչն էլ հիմքերից մեկն է հանդիսացել նման մոդելի կիրառման համար:

Զարգացած երկրների արդի տնտեսությունը բնութագրվում է նոր որակական պարամետրերով, որոնք արդի տնտեսագետներն անվանում են գիտելիքի տնտեսություն, չորրորդ արդյունաբերական հեղափոխության սկիզբ: Այս տնտեսությունում ուրույնությունը, անմրցակցությունը ձեռք են բերում համազգային մասշտաբի գծեր: Բայց եթե գիտելիքների տնտեսությունում հիմնական արտադրողները անմրցակցային են, ապա ինքը՝ տնտեսական համակարգը նույնպես չի կարող ձեռք բերել մրցունակության գծեր, հատկանիշներ, համեմայն դեպս՝ գիտատար ճյուղերում:

Նման *մեթոդաբանական ճշգրտումը* Սոլոու-Սվենի և Ռամսեի մոդելների առումով հանգեցնում է այն մտքին, որ այս դեպքում միգրացիան ռեցիպիենտ երկրների համար չի կարող լուծել համազգային խնդիրներ երկարաժամկետ շրջանում, թեև չպետք է բացառել, որ կարճաժամկետ շրջանում բարձրորակ մասնագետների միգրացիան թույլ կտա ապահովել նյութական արտադրության առանձին բնագավառների որոշ զարգացում: Գիտելիքները չեն կարող գաղթել առանց դրանք կրողների, գիտական դպրոցների, արտադրական ավանդույթների և մշակույթի: Սրանից հետևում է, որ

բարձրորակ ստեղծագործական արտադրաուժի միգրացիան չի լուծում տնտեսական աճի խնդիրը: Այդ շուկան մրցակցային չէ ըստ էության: Նման տնտեսությունների և երկրների համար հազիվ թե Սվեն-Սոլոուի և Ռամսեի մոդելները պահանջված լինեն, որոնք տնտեսական աճը, ազգային տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումը կապում են աշխատանքի, կապիտալի և գիտելիքների սերտաճման հետ՝ իրենց գիտական մեկնաբանություններում: Մեկ անգամ ևս ուզում եմ ընդգծել, որ խոսքն **այն ռեցիպիենտ երկրների մասին է, որոնք կանգնած են չորրորդ արդյունաբերական հեղափոխության շեմին:**

Սոլոու-Սվենի մոտ ստացվում է տնտեսական աճի կախվածության բավական համոզիչ մոդել անգամ երկարաժամկետ շրջանում, երբ կապիտալը և աշխատանքային ռեսուրսները հանդիսանում են մրցակցային ռեսուրսներ: Սա առաջին հերթին վերաբերում է այնպիսի դոնոր երկրների, ինչպիսին է Հայաստանը: Անմրցակցային են համարվում միայն գիտելիքները և տեխնոլոգիաները, քանի որ կա գիտական գիտելիքների ազատ փոխանակում, տեխնոլոգիաների, տեխնոլոգիական փաստաթղթերի ձեռքբերման և փոխանցման շուկայական մեխանիզմ:

Ենթադրությունները, թե բարձրորակ մասնագետների արտագաղթը, որոնք փորձում են հասնել արտասահմանում իրենց տնտեսական բարեկեցության բարձրացման, խթանում է բնակչությանը՝ ձգտել ստանալ բարձրագույն կրթություն, ինչը հանգեցնում է միգրանտների ելքի երկրներում որակյալ կադրերի ընդհանուր ավելացմանը, գործնականում չեն հաստատվում: Իրականում «*ուղեղների արտահոսքի*» ազդեցությունը միանշանակ չէ [42]:

Եթե դիտելու լինենք համաշխարհային պրակտիկան, ապա կարելի է գտնել միգրանտների ելքի երկրների և սփյուռքերի հաջող համագործակցության ու փոխգործակցության մի քանի օրինակներ, ինչը որոշ երկրներում թույլ է տվել ձևավորել և զարգացնել նոր, այդ թվում գիտատար արտադրություններ և գործունեության տեսակներ: Որպես նման օրինակ կարելի է նշել այն դերը, որը խաղացել է հնդկական սփյուռքը Հնդկաստանում Սիլիկոնային հովտի անալոգի ստեղծման գործում:

Հավասարակշռված քաղաքականությունը պահանջում է միգրացիայից ստացվող օգուտներն օգտագործել (*արտասահմանից դրամական փոխանցումների շնորհիվ բնակչության եկամուտների աճի, արտասահմանում աշխատանքի ժամանակ ձեռք բերած հմտությունների և որակավորման միջոցով*) երկրի ներսում նոր արտադրական աշխատատեղերի ստեղծման ակտիվ քաղաքականության հետ, որոնք թույլ կտային պահել որակյալ աշխատողներին և ապահովել կայուն տնտեսական աճի նոր հիմք:

Վերադառնալով Ռ.Ջ. Բարոյի և Խ. Սալա-ի-Մարտինի մոդելին՝ նշենք, որ միգրացիան ներառելով Սոլոու-Սվենի [41] մոդելում և Ռամսեի [42]-[43]՝ Բլանչարդ-Վեյլ [44]-[45] մոդիֆիկացված մոդելում, դրանք ցույց տվեցին, որ նետո-միգրացիայի և տնտեսական աճի կապը պետք է լինի բացասական: Զուտ արտահոսքը ուժեղացնում է տնտեսական աճը, իսկ զուտ ներհոսքը դանդաղեցնում է, քանի որ մեծացնում է աշխատանքի առաջարկն ու հանգեցնում երկրի ներսում հիմնական կապիտալի օգտագործման արդյունավետության նվազման: Այս բացասական ազդեցությունը հատկապես զգալի է, եթե միգրանտների մարդկային կապիտալն ավելի փոքր է, քան միջինը տեղի բնակիչներինը [48]: Սակայն մոդելները ԱՄՆ և Ճապոնիայի շրջանների համար ցույց տվեցին տնտեսական աճի վրա զուտ (*netto*) միգրացիայի դրական ազդեցություն: Բազմաթիվ համանման արդյունքների մասին հիշատակվում է նաև [50]-ում:

Խնդիրն այն է, որ Բարոյի և Սալա-ի-Մարտինի տեսական մոդելներում պարզեցման համար մեկնարկ վերցրել են զրոյական բնական աճի մասին ենթադրությունը: Սակայն աշխատանքի առաջարկը մեծանում է ոչ միայն դրական նետո-միգրացիայի արդյունքում, այլև աշխատանքային ռեսուրսների բնական աճի դեպքում: Սրանից հետևում է, որ ***չի կարելի ադեկվատ գնահատել միգրացիայի ազդեցությունը, Հայաստանի համար՝ արտագաղթինը, տնտեսական աճի վրա՝ էմպիրիկ մոդելում չներառելով աշխատանքային ռեսուրսների բնական վերարտադրության ցուցանիշը:***

Սրա հետ կապված՝ ատենախոսությունում, մոդելի կառուցման ընթացքում, դիտարկվելու է այն մոտեցումը, որ աշխատանքային ռեսուրսների բնական աճի շատ ցածր մակարդակը կամ դրա անկումը կարող է արգելակել տնտեսական աճը, եթե

անգամ տնտեսական աճ ասելով հասկացվի աշխատանքային ռեսուրսների թվաքանակի հանդեպ ՀՆԱ հարաբերակցության դինամիկան: Տնտեսական աճի և արտագաղթի միջև փոխկապվածության (*բացասական միգրացիոն սալդո*) խնդիրը, աշխատունակ բնակչության մասնաբաժնի և թվաքանակի նվազման ազդեցությունը տնտեսական աճի վրա սակավ է ուսումնասիրված [44]:

Ռ.Սոլոուի կապիտալի հանդեպ պակասող փոխձածկման մասին հիպոթեզից հետևում է, որ տնտեսական աճի վրա տնտեսական զարգացման ելակետային մակարդակի ազդեցությունը պետք է բացասական լինի: Ավելի հաճախ տնտեսական աճի մոդելներում օգտագործվել է **«շրջանի սկզբում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ»** փոփոխականը:

Զ.Սաքսի և Ա.Ուորների մոդելում [48] ամենամեծ պարզաբանող ունակություն ունի *«այն տարիների թիվը, երբ տնտեսությունը բաց է»* փոփոխականը: Որպես բացության ցուցանիշ օգտագործվել է **«ՀՆԱ-ում ուղղակի օտարերկրյա ներդրումների բաժին»**-ը: Բարոն և Սալա-ի-Մարտինը, որպես մարդկային կապիտալի մակարդակի ցուցանիշներ, օգտագործել են **ծնվելիս կյանքի ակնկալվող տևողության հակառակ մեծություն** փոփոխականը: Որպես բնական վերարտադրության միջոց օգտագործվել է **ծնելիության ընդհանուր գործակիցը**: Առևտրի պայմանների փոփոխությունները Բարոն և Սալա-ի-Մարտինը գնահատում են որպես արտահանման և ներմուծման գների փոփոխություն: Որպես այդպիսին օգտագործվել է **արտաքին առևտրային հաշվեկշիռը**: Որպես բացատրվող փոփոխական օգտագործվում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճը:

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսության գլոբալացման արագացած գործընթացները, բնակչության մոբիլության մակարդակի աճը, տարբեր երկրների և աշխարհի տարածաշրջանների զարգացման տեմպերի անհավասարաչափությունը ստիպում են շատ հետազոտողների ճշգրտումներ մտցնել տնտեսական աճի վրա այնպիսի ավանդական գործոնների ներգործության մեխանիզմների մասին ավանդական պատկերացումներում, ինչպիսին են աշխատանքը, կապիտալը և արդյունավետությունը [47]: Աշխատանքի նոր չափիչներ են դառնում *արտաքին աշխատանքային միգրացիայի սալդոն, ազգային աշխատանքային ռեսուրսների և*

աշխատանքային միգրանտների որակական հատկանիշները, ինչպես նաև հայրենիք աշխատանքային միգրանտների ուղարկած դրամական փոխանցումները:

Այս գործոնների մի մասը, հիփոթետիկորեն, պետք է դրականորեն ազդի տնտեսական դինամիկայի վրա, մյուսները՝ բացասաբար: Ավելի մեծ գիտական հետաքրքրություն է առաջացնում ԱՊՀ երկրների (որոնք իրենց աշխատանքային ռեսուրսները մատակարարում են աշխարհի ավելի զարգացած պետություններին) տնտեսական դինամիկայի վրա այդ գործոնների քանակական ազդեցության մասին:

Հեղափոխության մեթոդաբանական բազան. միգրացիայի տնտեսական և սոցիոլոգիական տեսությունները

Գոյություն ունեն բազմաթիվ տեսական շրջանակներ միջազգային միգրացիոն հոսքերի վերլուծության համար: Massey-ի համաձայն [54]՝ դրանք կարելի է միավորել վեց հիմնական տեսական հայեցակարգերում.

1. *Նեոդասական տեսություն*, որի համաձայն՝ եկամուտներում գոյություն ունեցող տարբերությունները, որոնք առաջ են եկել կապիտալի հանդեպ աշխատանքի համամասնության տարբերություններով, ցածր աշխատավարձով երկրների աշխատողներին դրդում են մեկնել բարձր աշխատավարձ ունեցող երկրներ: Ապրանքների, մարդկանց և կապիտալի ազատ տեղաշարժը բնութագրվում է երկու հիմնական խողովակներով. առաջինը ներկայացված է եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներից դեպի եկամտի ավելի բարձր մակարդակ ունեցող երկրներ աշխատանքային միգրանտների հոսքով; երկրորդը՝ արդյունաբերապես զարգացած երկրներից դեպի աշխատավարձի ցածր մակարդակ ունեցող երկրներ կապիտալի հոսքով [55]: Դա պետք է հանգեցնի հավասարակշռության, քանի որ ժամանակի ընթացքում տեղի է ունենում աշխատավարձի մակարդակի իջեցում ռեցիպիենտ երկրում, այն դեպքում, երբ դրա մակարդակն ուղարկող երկրում կաճի:

2. *Միգրացիայի նոր տնտեսական տեսությունը* (*New economic theory of migration*) հաշվի է առնում ոչ միայն աշխատաշուկայի, այլ նաև այլ շուկաների պայմանները: Միգրացիան դիտարկվում է ոչ թե որպես անհատական որոշում, այլ որպես տնային տնտեսությունների որոշում՝ ընտանիքի ֆինանսական և նյութական վիճակը բարելավելու նպատակով: Այլ խոսքով՝ «միգրացիայի նոր տնտեսական» հայեցակարգի

համաձայն՝ գոյություն ունեն նաև այլ դրդապատճառներ միգրացիայի համար, աշխատավարձերի մակարդակների տարբերությունը այլ երկիր միգրացիայի որոշում կայացնելու անհրաժեշտ պայման չէ [56]: Սույն տեսության շրջանակներում ուսումնասիրության առարկա է հանդիսանում ոչ թե առանձին անհատը, այլ ընտանիքը (*տնային տնտեսությունը*): Մաքսիմիզացվում է մարդկանց մի որոշ հանրույթի եկամուտը, որոնք որոշակի ձևով միմյանց միջև կիսելու են ինչպես ծախսերը, այնպես էլ եկամուտներն արտագաղթի երկրում: Պետությունը կարող է վերահսկել միգրացիոն գործընթացները ոչ միայն ազդելով աշխատաշուկայի վրա, այլև օգտագործելով այլ գործիքներ (օրինակ, *բարեփոխելով ապահովագրության ծրագրերն առողջապահության ոլորտում և այլն*):

3. *Կրկնակի (սեգմենտացված) աշխատաշուկայի տեսությունը (Dual [segmented] labor market theory)* աշխատաշուկան բաժանում է երկու հատվածի՝ առաջնային սեգմենտը ներկայացված է արտադրության կապիտալատար եղանակներով, դրանում գործադրված է որակյալ աշխատուժը, երկրորդայինը՝ արտադրության աշխատատար եղանակներով, այն ապահովում է զբաղվածություն ցածրորակ աշխատուժի համար: Piore-ի համաձայն [7], արտասահմանյան աշխատուժի պահանջարկը ծագում է կապված այն բանի հետ, որ երկրի ներքին աշխատանքային ռեսուրսների մեծ մասը գործադրված է առաջնային սեգմենտում, ինչը ստիպում է գործատուներին պահանջարկը լրացնել երկրորդային սեգմենտում՝ ի հաշիվ արտասահմանյան աշխատուժի: Այլ խոսքով՝ տեղի բնակչությունն իր համար ընտրում է ավելի լավ վարձատրվող մասնագիտության տեսակները, այն դեպքում, երբ ներգաղթյալներին մնում են ոչ հրապուրիչ աշխատատեղերը:

4. *Համաշխարհային համակարգի տեսությունը (World system theory)*, որպես կանոն, անտեսում է միկրոմակարդակներում ընդունվող որոշումները, ինչպես երկու նախորդ դեպքերում՝ կենտրոնանալով ավելի ընդհանուր պարամետրերի վրա, որոնք ի հայտ են գալիս ավելի ագրեգացված վերլուծության մակարդակում: Եթե առաջին դեպքում միգրացիան դիտարկվում է որպես արդի արդյունաբերական տնտեսության պարտադիր պայման, ապա երկրորդ դեպքում միգրացիայի մեջ տեսնում են տնտեսական գլոբալացման բնական հետևանքը: Այս տեսության համաձայն՝ զգալի

միգրացիոն հոսքերը կապում են նախկին մետրոպոլիաները նախկին գաղութների հետ [52]:

5. *Սոցիալական կապիտալի տեսությունը (Social capital theory)* նկարագրում է ռեցիպիենտ երկրներում ստեղծված միգրանտների հանրության կարևորությունը, ինչը հանգեցնում է միգրանտների ցանցերի աճին և նպաստում միգրացիոն գործընթացների շարունակմանը: Առկա սփյուռքերը, որոնք դառնում են փոխօգնության կենտրոններ, թույլ են տալիս կրճատել անորոշությունը, բարելավել ապագա միգրանտների տեղեկացվածությունը: Բացի այդ, աշխատանքային միգրացիային կարող է հետևել ընտանիքների վերամիավորումը՝ միգրանտների նոր հոսքեր ստեղծելով:

6. *Կումուլյատիվ պատճառայնության տեսությունը (Cumulative causation theory)* միգրացիան դիտարկում է որպես մշտական երևույթ, քանի որ փոխում է սոցիալական համատեքստը և իր հետևից բերում է փոփոխությունների հավելյալ ալիք հետևյալ ոլորտներում. եկամուտների բաշխում, հողերի բաշխում, գյուղատնտեսության կազմակերպում, մշակույթ, մարդկային կապիտալի տարածաշրջանային բաշխում և աշխատանքի սոցիալական նշանակություն [57]:

Միգրացիայի արդի սոցիոլոգիական տեսություններում կարելի է առանձնացնել նաև Դ.Մասեյի միգրացիոն ցանցերի տեսությունը, միգրացիայի ինստիտուցիոնալ տեսությունը, ընդհանուր պատճառային փոխալյամանավորվածության տեսությունը, Մ.Կրիտցի միջազգային միգրացիոն համակարգերի տեսությունը [55]: Նշված մոտեցումները կարող են որոշակի չափով համադրվել:

Միգրացիայի քանակական գնահատում իրականացնելու համար, հենվելով այս տեսությունների վրա, մենք կունենանք վերլուծության հետևյալ հիմնական գործիքները. էքստրապոլյացիոն մեթոդներ, իմիտացիոն հավանականական մոդելներ, միգրացիոն հոսքերի ձևավորում (*մարկովյան շղթաներ, դիֆուզիոն և բնակչության ճոճանակային հոսքերը, միգրացիոն հոսքերի մատրիցային մոդելները*), ռեգրեսիոն մոդելներ, գործոնային մոդելներ, այդ թվում՝ գրավիտացիոն մոդելներ: Մեր հետազոտության մեթոդաբանական հիմք է ընդունվում **միգրացիայի ընդլայնված մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելը** [61]:

3.2 Միգրացիոն գործընթացների և տրանսֆերտների տնտեսամաթեմատիկական գնահատումը

Երկրների միջև միգրացիոն հոսքերի և միգրացիոն հոսքերի դետերմինանտների գնահատումը բարդ խնդիր է, որը բնութագրվում է անորոշության բարձր մակարդակով: Դա պայմանավորված է ինչպես նրանով, որ աշխատանքային միգրանտների հոսքերի վերաբերյալ առկա վիճակագրական տվյալները քիչ են համապատասխանում իրականությանը, այնպես էլ դոնոր երկրում և ռեցիպիենտ երկրում վիճակագրական տեղեկատվության տարբերություններով:

Հայաստանից աշխատանքային միգրացիայի դետերմինանտների որոշման համար իրականացվել է վերլուծություն մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելի հիման վրա: Աշխատանքային միգրանտների սոցիալ-տնտեսական բնութագրերի վերհանման համար օգտագործվել են վիճակագրական վերլուծության արդյունքները տնային տնտեսությունների հետազոտության՝ Ազգային վիճակագրական վարչության տրամադրած նախնական տվյալների մշակման հիման վրա:

Գրավիտացիոն մոդել.

Միգրացիայի (միջազգային և միջտարածաշրջանային) քանակական գնահատում կատարելու համար, հենվելով այս տեսությունների վրա, մենք կիրառում ենք չորս հիմնական տեխնիկական գործիք [81].

- գրավիտացիոն մոդել,
- գծային ռեգրեսիոն մոդել,
- Մարկովի շղթայի մոդել,
- մատրիցային պոպուլյացիոն մոդել:

Որպես տեսական հիմք ընտրել ենք **գրավիտացիոն մոդելը**, քանի որ այս մոդելի՝ որպես գործիքի կիրառումից ստացված արդյունքները հաջողվել է առավել դյուրին պարզաբանել: Բացի այդ, վերջին ժամանակներս սույն տեսական մոդելի հանդեպ

գիտական հանրության վերականգնված հետաքրքրությունը թույլ տվեց կատարելագործել այն, բարելավել ամփոփիչ տվյալների որակը և ստանալ ավելի հուսալի ու սխալների հանդեպ կայուն գնահատականներ:

Գրավիտացիոն մոդելը ենթադրում է, որ բնակչության մեծ թվաքանակ ունեցող երկրներից էմիգրանտների համեմատաբար ավելի մեծ հոսք է ուղղվում դեպի բնակչության ավելի փոքր թվաքանակ ունեցող երկրներ: Ընդհակառակը, ուղարկող երկրի և նշանակման երկրի միջև հեռավորությունը դժվարացնում է տեղաշարժը, և նման դեպքում կարելի է կանխատեսել միգրացիայի նվազում՝ կախված երկու երկրների միջև հեռավորությունից: Այս փաստարկն անուղղակիորեն ենթադրում է, որ եթե երկու երկրներն ունեն ընդհանուր սահման, ապա դա կրճատում է տրանսպորտային ծախսերը և թեթևացնում միգրանտների ադապտացման գործընթացն ի հաշիվ մշակութային և լեզվական սերտության [82]: Սակայն հարց է առաջանում. որքանո՞վ է այսօրվա դրությամբ ռելևանտ մնում այս փաստարկը, եթե հաշվի առնենք արդի տրանսպորտային-հաղորդակցային հնարավորությունները և տեղեկատվական տեխնոլոգիաները: Բացի այդ, Հայաստանից Ռուսաստան միգրացիայի դեպքում շատ ցածր լեզվական և մշակութային պատենշների մակարդակը նաև կարող է պակաս կարևոր դեր չխաղալ հեռավորության պարամետրի մեծության նվազման հարցում:

Շատ էմպիրիկ արդյունքներ ցույց են տալիս, որ քաղաքում ապրելը մարդկանց հնարավորություն է տալիս միջազգային միգրացիայի հարցերում լինել համեմատաբար ավելի լավ տեղեկացված, քան գյուղերի բնակիչների պարագայում է: Քաղաքները նաև կարող են այլընտրանք լինել անլեզալ միգրանտների համար՝ շնորհիվ արդեն կայացած ցանցերի: Այսպես, միջազգային միգրացիան կարող է դիտարկվել գլխավորապես որպես «քաղաքից քաղաք» միգրացիա: Այսպիսով, քաղաքային բնակչության ավելի բարձր տոկոսը (*ինչպես ուղարկող, այնպես էլ նշանակման երկրում*) նպաստում է միգրացիային:

Կյանքի տևողությունը, մանկական մահացությունը, սանիտարահիգիենիկ պայմանները, առողջապահության և կրթության վրա հանրային ծախսերի մակարդակը, առողջապահության և կրթության համակարգերի որակը,

տրանսպորտային միջոցները, բնակարանային պայմանները շատ կարևոր են միգրացիայի մասին որոշում կայացնելու համար: Դրանք կարելի է դիտարկել որպես «ձգող» և «վանող» գործոններ:

Բազային գրավիտացիոն մոդելը որոշում է հոսքի ինտենսիվությունը (*միջազգային առևտուր, միգրացիա*) որպես երկու տնտեսությունների «զանգվածի» ձգողականության դրական ֆունկցիա և նրանց միջև հեռավորության բացասական ֆունկցիա: Հոսքի ինտենսիվությունը որոշվում է, գլխավորապես, բնակչության թվաքանակով և միգրանտներ ուղարկող երկրի ու ռեցիպիենտ երկրի միջև հեռավորությամբ: Այս մոդելներն իրենց անվանումն ստացել են ֆիզիկայում գրավիտացիոն օրենքի հետ նմանության պատճառով: 1941թ. ամերիկացի աստղագետ Ջոն Սթյուարտը ձևակերպել է տարածական փոխգործակցության օրենքը, որի համաձայն՝ «*ձգողականության ժողովրդագրական ուժը*» տարածաշրջանների միջև ուղիղ համամասնական է մեկնման շրջանի և ժամանման շրջանի բնակչությանը և հակառակ համամասնական շրջանների միջև հեռավորության քառակուսուն:

Գրավիտացիոն մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$I_{ij} = k \cdot \frac{P_i P_j}{d_{ij}}, \quad i \neq j \quad (26),$$

որտեղ

I_{ij} հոսքի ինտենսիվությունն է i և j երկրների միջև,

P_i i ելման՝ դոնոր երկրի բնակչությունը,

P_j j ռեցիպիենտ երկրի բնակչությունը,

d_{ij} i և j երկրների միջև հեռավորությունը,

k մշտական մեծություն:

Գրավիտացիոն մոդելներն ունեն իրենց առավելությունները և թերությունները:

Առավելություններից է այն, որ որպես գործիք գրավիտացիոն մոդելի օգտագործմամբ ստացված արդյունքները հաջողվում է առավել ցայտուն պարզաբանել: Գրավիտացիոն մոդելը թույլ է տալիս համեմատաբար պարզ ձևով փաստորեն միակ հավասարման մեջ հաշվի առնել երկրների միջև միգրացիայի վրա ազդող առանցքային գործոնները:

Բացի ստանդարտ տնտեսական փոփոխականներից, որոնք օգտագործվում են միգրացիան մոդելավորելիս, գրավիտացիոն մոդելները թույլ են տալիս հաշվի առնել այնպիսի ինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունը, ինչպիսին են տնտեսության պետական կարգավորման մակարդակը, մշակութային տարբերությունները, ենթակառուցվածքի զարգացման մակարդակը, կոռուպցիայի առկայությունը և մակարդակը:

Այս մոդելները ժամանակի ընթացքում կատարելագործվել են, ինչը թույլ է տվել բարելավել ամփոփիչ տվյալների որակը և ստանալ ավելի հուսալի ու սխալների հանդեպ կայուն գնահատականներ:

Գրավիտացիոն մոդելի **կրիտիկական գործոնների** թվին պետք է դասել այն, որ դրանք թույլ են տալիս ստանալ այն գործոնների գնահատականները, որոնք ուղղակիորեն չեն արտացոլվում պաշտոնական վիճակագրական տվյալներում:

Եվս մեկ խնդիր է այն, որ գրավիտացիոն մոդելում բացակայում է հակադարձ կապը, որն արտացոլում է տնտեսական աճի վրա միգրացիայից առաջացող էֆեկտների ազդեցությունը, օրինակ՝ տրանսֆերտների տեսքով: Այս խնդիրը կարելի է լուծել **տնտեսական աճի մոդելի կառուցմամբ՝ միգրացիոն և տրանսֆերտային մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելներում ստացված արդյունքներն օգտագործելով:**

Բավական մեծաթիվ են աշխատությունները՝ նվիրված գրավիտացիոն մոդելների օգտագործմամբ միգրացիոն հոսքերի վերլուծությանը: Սակայն հարկ է նշել, որ օգտագործվող մոդելավորման տեխնիկայի, դիտարկվող կախվածությունների և արդյունքների նկարագրման տեսակետից այս ոլորտի աշխատանքները բավական նման են:

Միգրացիոն գործընթացի գրավիտացիոն մոդելը և տրանսֆերտների մոդելը Հայաստանի օրինակով.

«Գրավիտացիոն մոդելի» առաջարկվող էկոնոմետրիկ գրառումը մեր կողմից կիրառվում է ռեգրեսիոն մոդելի վերաբերյալ, որտեղ որպես բացատրելի փոփոխական վերցվում է **երկու երկրների միջև միգրացիոն հոսքերի ինտենսիվությունը:** Դրա համար բազային գրավիտացիոն մոդելը (26) ձևափոխվում է հետևյալ կերպ.

$$Migr_{i,j,t} = \alpha_{i,j,t} + \gamma_t Y_{i,t} + \delta_t Y_{j,t} + \varepsilon_{i,j,t} \quad (27)$$

որտեղ

$Migr_{i,j,t}$ i երկրից (շրջանից) միգրացիոն հոսքի մեծությունը j երկիր (շրջան) t տարում: «Միգրանտ» տերմինը նշանակում է օտարերկրացի՝ կեցության իրավունքով կամ օտար երկրում աշխատանքի թույլտվությամբ.

$Y_{i,t}$ i շրջանի (մեկնման շրջանի) բնութագրերի վեկտորը ժամանակի $t-1$ պահին,

$Y_{j,t}$ ժամանման j շրջանի բնութագրերի վեկտորը ժամանակի $t-1$ պահին,

$\alpha_{i,j,t}$ ռեգրեսիայի հավասարման ազատ անդամը ժամանակի t պահին, որը տարբերվում է i, j շրջանների տարբեր զույգերի համար (այսինքն՝ որը ներառում է շրջանների զույգերի անհատական էֆեկտը),

γ_t, δ_t ժամանման և մեկնման շրջանների գործակիցների վեկտորները բացատրող փոփոխականների-բնութագրերի դեպքում:

Որպես մոդելի կախյալ փոփոխական (M_{ijt}) ընդունված է մեկնման « i » երկրից նշանակման « j » երկիր « t » տարում միգրանտների ամենամյա քանակությունը: Որպես մեկնման երկիր ենթադրվում է Հայաստանը, միևնույն ժամանակ, որպես նշանակման երկրներ վերցված են ԵԱՏՄ երկրները, որտեղ վճռական դեր է խաղում Ռուսաստանը (ռեցիպիենտ երկիր): Պատճառը, թե ինչու չենք դիտարկում Եվրոպական միության և Հյուսիսային Ամերիկայի երկրները, այն է, որ դրանցում ներգաղթողների ընդունման պայմանները դժվարացվում են, և ըստ ամենայնի՝ դա կդառնա պետական քաղաքականություն երկար ժամանակաշրջանի համար: Այնտեղ բազմաթիվ հայկական համայնքների առկայությունն ստեղծում է սոցիալական ցանցեր, որոնք դառնում են հավելյալ «ձգողական» գործոն աշխատելու նպատակով մեկնել ցանկացողների համար, բայց չի կարելի անտեսել ներգաղթի սահմանափակման գործոնը: Սոցիալական միգրացիոն ցանցերը ակտուալ են Ռուսաստանի (ռեցիպիենտ երկիր) պարագայում, դրանք կարող են առանձնացվել տնտեսական գործոններից և դառնալ աշխատանքային միգրացիայի ինքնուրույն գործոն:

Հետազոտության խնդիրներից և անհրաժեշտ տեղեկատվության առկայությունից կախված՝ գրավիտացիոն մոդելների առանձնահատկությունները (սպեցիֆիկացիաները) կարող են տարբերվել ընդհանուր ձևից:

Հետևելով նման մեթոդաբանությանը՝ ատենախոսությունում գրավիտացիոն մոդելով միաժամանակ կատարում ենք երկու երկրների միջև միգրացիայի և տրանսֆերտների հնարավոր աճի հաշվարկ: Բուն գրավիտացիոն մոդելում օգտագործում ենք լրացուցիչ սոցիալ-տնտեսական և վարքագծային փոփոխականներ ներգաղթողների համար, այնպիսիք, ինչպիսին են գործազրկության մակարդակը, հայկական սփյուռքի թվաքանակը, արդյունաբերության բաժինը, մարդկային պոտենցիալի զարգացման հարացույցը, Զինիի գործակիցը: Այս գործոնները ծավալուն ներկայացրել ենք 1-ին գլխում: Որոշելով ուրբանացման գործակիցը ռեցիպիենտ երկրի համար՝ մենք ելնում ենք այն փաստից, որ քաղաքային բնակչությունը նպաստում է միգրանտների ցանցային էֆեկտներին: Ուրբանացման աճը պոտենցիալ միգրանտներին թույլ է տալիս ծրագրեր կազմել իրենց միգրացիայի վերաբերյալ պակաս ռիսկային պայմաններում՝ օգտագործելով աշխատանքի որոնման, իրենց իրավունքների, սոցիալական պաշտպանվածության համակարգերի մասին ավելի իրազեկված լինելու առավել արդյունավետ խողովակներ և այլն:

Ռեգրեսիոն մոդելների գնահատման համար օգտագործվել են Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության, Համաշխարհային բանկի եռամսյակային վիճակագրական և այլ տվյալներ: Կյանքի պայմանների վերաբերյալ օգտագործվել է *«ՄԱԿ մարդկային զարգացման ինդեքս» (մարդկային ներուժի զարգացման միջազգային ցուցանիշներ)* շտեմարանը: Բացի այդ, օգտագործվել են ԱՊՀ վիճկոմի վիճակագրական տվյալները: Հետազոտության շրջանակները ներառում են 2000-2015թթ. տվյալներն ըստ եռամսյակների: Այն ցուցանիշներով, որոնց վերաբերյալ ըստ եռամսյակների տվյալները բացակայել են, ըստ եռամսյակների տվյալները ներկայացվել են դրանց տարեկան փոփոխության դինամիկայի և փորձագիտական գնահատականների վերլուծության հիման վրա:

Միգրացիայի մեծությունը գնահատվում է գնահատված մոդելի օգնությամբ և պատմական ժամանակաշրջանում այն գործոնների փոփոխությամբ, որոնք զսպում են միգրացիոն հոսքերը:

Նախ նշենք, որ ուշադրության առնելով տեղաշարժի արդի միջոցները՝ զուտ հեռավորությունն արդեն նշանակալի գործոն չի հանդիսանում: Ավելի հաճախ մարդիկ

տեղափոխություն են ծրագրում՝ ելնելով այն երկրի գրավչությունից, ուր տեղափոխվում է միգրանտը, սոցիալական կապերից և մի շարք այլ գործոններից: Ուստի, մեր մոդելում Հայաստանի և ռեցիպիենտ երկրի միջև d_{ij} հեռավորության փոխարեն օգտագործվում են միգրացիայի **գրավչության ցուցանիշները** (տե՛ս աղյուսակ 7): Հետևաբար, գնահատվում է, թե որքան գրավիչ է Հայաստանի միգրանտների համար ռեցիպիենտ երկիրը և, համապատասխանաբար, ինչպես է դա ազդում ստացվող տրանսֆերտների վրա:

Էկոնոմետրիկ մոդելի և ստացված արդյունքների նկարագրումը և դրանց գնահատումը.

Վերջնական տեսքով ՀՀ միգրացիոն հոսքերը և տրանսֆերտային մուտքերը գնահատելու նպատակով Հայաստանի և ռեցիպիենտ երկրի բնութագրերի վեկտորներ են ընտրված.

աղյուսակ 7

t	2000-2015թթ.
$Migr_t$	Հայաստանից ռեցիպիենտ երկիր (<i>Ռուսաստան</i>) միգրացիոն հոսքի մեծությունը t տարում
$growt_t$	Հայաստանի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն t տարում (\$ <i>բնակչության մեկ շնչի հաշվով</i>)
$growt_{r,t}$	Ռեցիպիենտ երկրի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն t տարում (\$ <i>բնակչության մեկ շնչի հաշվով</i>)
$\Delta growt_{r,t}$	Էկոնոմետրիկ մոդելում որպես փոփոխական, համապատասխանում է $growt_{r,t} - growt_t$
$nlab_t$	Գործազրկության մակարդակը Հայաստանում, %
$nlab_{r,t}$	Գործազրկության մակարդակը ռեցիպիենտ երկրում, %
$\Delta nlab_{r,t}$	Էկոնոմետրիկ մոդելում որպես փոփոխական, համապատասխանում է $nlab_{r,t} - nlab_t$
$ArmDisp$	Հայկական սփյուռքի թվաքանակը ռեցիպիենտ երկրում (<i>միգրանտների համար գրավչության գործակիցը</i>)

$product_t$	Հայաստանի արդյունաբերության մակարդակը ՀՆԱ-ում, %
$product_{r,t}$	Ռեցիպիենտ երկրի արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում, %
$\Delta product_{r,t}$	Էկոնոմետրիկ մոդելում որպես փոփոխական, համապատասխանում է $Product_{r,t} - Product_t$
$HumKap_t$	Մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքսը Հայաստանում (նշանակությունն ամփոփված է 0-ի և 1-ի միջև; որքան ավելի մոտ է 1-ին, այնքան բարձր է մարդկային պոտենցիալի զարգացման մակարդակը): Մարդու զարգացման ինդեքսը (1990-2012թթ.)¹⁸: Մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքսը (Human Development Index (HDI)) – ինտեգրալ ցուցանիշ, որն ամեն տարի հաշվարկվում է՝ համեմատելու և չափելու համար՝ կյանքի մակարդակը (գնահատված ըստ ԳՈՒՊ-ի (ԱՄՆ դոլարով)՝ բնակչության մեկ շնչի հաշվով Եկամտաբերության ներքին նորմի միջոցով); գրագիտությունը (ուսման վրա ծախսված տարիների միջին թիվը), կրթվածությունը և երկարակեցությունը՝ որպես հետազոտվող տարածքի մարդկային կապիտալի հիմնական բնութագրեր: Այն ստանդարտ գործիք է տարբեր երկրների և շրջանների կյանքի մակարդակի ընդհանուր համեմատության ժամանակ:
$HumKap_{r,t}$	Մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքսը ռեցիպիենտ երկրում (նշանակությունն ամփոփված է 0-ի և 1-ի միջև; որքան ավելի մոտ է 1-ին, այնքան ավելի բարձր է մարդկային պոտենցիալի զարգացման մակարդակը):
$\Delta HumKap_{r,t}$	Էկոնոմետրիկ մոդելում որպես փոփոխական, համապատասխանում է $HumKap_{r,t} - HumKap_t$
$Gini_t$	Ջինիի գործակիցը Հայաստանի համար (նշանակությունն ամփոփված է 0-ի և 1-ի միջև կամ %-ով; որքան ավելի մոտ է 1-ին, այնքան ավելի անարդար է): Ջինիի գործակից (1996-2008¹⁹):

¹⁸ Հասանելի է. <http://hdrstats.undp.org/en/countries/profiles/ARM.html>

¹⁹ Հասանելի է. <http://www.tradingeconomics.com/armenia/gini-index-wb-data.htm>

$Gini_{r,t}$	Ջինիի գործակիցը ռեցիպիենտ երկրում (նշանակությունն ամփոփված է 0-ի և 1-ի միջև կամ %-ով; որքան ավելի մոտ է 1-ին, այնքան ավելի անարդար է):
$\Delta Gini_{r,t}$	Էկոնոմետրիկ մոդելում որպես փոփոխական, համապատասխանում է $Gini_{r,t} - Gini_t$
$EurEconUnion$	ԵԱՏՄ-ում և ռեցիպիենտ երկրում միգրանտների համար ընդհանուր կանոնների ընդունման ցուցանիշը (ցուցանիշն ընդունում է 0 կամ 1 նշանակություն)
Ces_t	Հայաստան տրանսֆերտային մուտքերը
$salary_{r,t}$	Աշխատավարձի մակարդակը ռեցիպիենտ երկրում (աշխատողների հաշվարկված միջին ամսական անվանական աշխատավարձը, \$)
urb_t	Ռեցիպիենտ երկրի ուրբանացման գործակիցը (%)
$\gamma, \gamma_1, \gamma_2, \gamma_3, \gamma_4, \gamma_5, \gamma_6, \gamma_7, \gamma_8$	Միգրացիոն հոսքերը գնահատելիս բացատրող փոփոխականների գործակիցները
$\lambda, \lambda_1, \lambda_2$	Տրանսֆերտների մուտքերի ժամանակ բացատրող փոփոխականների գործակիցները
ε_t	Պատահական սխալ

Համապատասխանաբար, միգրացիոն հոսքերի և ՀՀ կատարվող տրանսֆերտային մուտքերի գնահատման նպատակով օգտագործվել են հետևյալ կապակցված բազմաչափ ռեգրեսիոն մոդելները.

$$\begin{aligned}
 Migr_t = & \gamma + \gamma_1 \Delta growt_{r,t} + \gamma_2 \Delta nlab_{r,t} \\
 & + \gamma_3 ArmDisp_t + \gamma_4 \Delta product_{r,t} \\
 & + \gamma_5 \Delta HumKap_{r,t} + \gamma_6 \Delta Gini_{r,t} \\
 & + \gamma_7 EurEconUnion + \gamma_8 urb_t + \varepsilon_t
 \end{aligned} \tag{28}$$

$$Ces_t = \lambda + \lambda_1 salary_{r,t} + \lambda_2 Migr_t + \varepsilon_t, \tag{29}$$

Մինչև (28) – (29)-ում ներկայացված մոդելները գնահատելը նախապես իրականացրել ենք որոշակի պրոցեդուրային գործողություններ՝ հատուկ ուշադրություն

դարձնելով տնտեսական ցուցանիշների համար եռամսյակային շարքերի ստացիոնարության հարցերին: Փոփոխականների բոլոր շարքերի համար անցկացվել է Դիկի-Ֆուլերի թեստը:

Միգրանտների թվի շարքի համար Դիկի-Ֆուլերի թեստի արդյունքները հետևյալն են.

աղյուսակ 8

Միգրանտների թվի շարքի ստացիոնարության ստուգում

ADF Test Statistic	-1.31	1% Critical Value*	-4.14
		5% Critical Value	-3.50
		10% Critical Value	-3.17
* MacKinnon critical values for rejection of hypothesis of a unit root			

աղյուսակ 9

Միգրանտների թվի շարքի առաջին կարգի տարբերությամբ ստացիոնարության ստուգում

ADF Test Statistic	-6.94	1% Critical Value*	-4.15
		5% Critical Value	-3.50
		10% Critical Value	-3.18
* MacKinnon critical values for rejection of hypothesis of a unit root			

Ինչպես երևում է աղյուսակ 8-ից, միգրանտների թվի շարքը *ստացիոնար* չէ: Նույն թեստը կիրառվել է մյուս փոփոխականների շարքի համար, և ստացված բոլոր արդյունքները ցույց են տվել այդ շարքերի ոչ ստացիոնարությունը: Սովորաբար այդ հանգամանքներում նման շարքերի համար դիտարկվում է առաջին կարգի տարբերությունը, և եթե դրանք շարունակում են մնալ ոչ ստացիոնար, այդ ժամանակ դիտարկվում է ավելի բարձր կարգի տարբերություն: Աղյուսակ 9-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ միգրանտների թվի շարքի համար *առաջին կարգի դիտարկվող տարբերությունը միանգամայն բավարար է ստացիոնարության տեսակետից*:

Հաջորդ հիմնական գաղափարը, որն առաջարկվում է մինչև էկոնոմետրիկ մոդելների հաշվարկներ կատարելը, վերաբերում է կախյալ փոփոխականների սեզոնայնությանը: (28) – (29) մոդելներում որպես բացատրելի (*կախյալ*) փոփոխականներ դիտարկվում են միգրանտների թիվը, տրանսֆերտների ծավալները: Ակնհայտ է, որ այդ ցուցանիշները ենթարկված են սեզոնային տատանումների: Այդ նպատակով, հաշվառելու համար այս գործոնը, էկոնոմետրիկ մոդելում ներառվել են ֆիկտիվ փոփոխականներ, որոնք նկարագրում են չորս եռամսյակ՝ $\psi_1, \psi_2, \psi_3, \psi_4$:

Այսպիսով, վերջնական տեսքով մեր (28) – (29) մոդելները ներկայացվում են հետևյալ մոդիֆիկացված ձևով.

$$\begin{aligned} \Psi(Migr_t) = & \gamma + \gamma_1 \Psi(\Delta growt_{r,t}) + \gamma_2 \Psi(\Delta lab_{r,t}) \\ & + \gamma_3 \Psi(ArmDisp_t) + \gamma_4 \Psi(\Delta product_{r,t}) \\ & + \gamma_5 \Psi(\Delta HumKap_{r,t}) + \gamma_6 \Psi(\Delta Gini_{r,t}) \\ & + \gamma_7 EurEconUnion + \gamma_8 urb_t + \varepsilon_t \end{aligned} \quad (28^A)$$

$$\Psi(Ces_t) = \lambda + \lambda_1 \Psi(salary_{r,t}) + \lambda_2 \Psi(Migr_t) + \varepsilon^2_t \quad (29^A)$$

(28^A) – (29^A) մոդելների սպեցիֆիկացիան և դրանց վերաբերյալ ստացված գնահատողական արդյունքները բավարար չեն էկոնոմետրիկայի տեսակետից, քանի որ դետերմինացիայի գործակիցները բավական աննշան են: Դարբին-Ուոթսոնի վիճակագրության նշանակությունը մոտ չէ 2 թվին, գործակիցների նշանները չեն կորելացվում տնտեսական գործընթացների տրամաբանության հետ: Պատճառները կարող են տարբեր լինել, բայց էկոնոմետրիկ մոդելավորման տեսակետից հայտնի են էկոնոմետրիկ մոդելների հինգ դասական պայմաններ, որոնց աճը կարող է տալ նման արդյունքներ:

Առաջին պայմանը, որը պետք է իրականացվի, մոդելի ճիշտ սպեցիֆիկացիան է: Այն ներառում է ոչ միայն գծային բազմաչափ ձևի պահպանումը, այլև բացատրող փոփոխականների ճիշտ ընտրությունը: Հետևաբար, մինչ վերջնական մոդելների գնահատումը գնահատվել են մի շարք միջանկյալ մոդելներ՝ սպեցիֆիկացիաներով: Այն սպեցիֆիկացիան, որը էկոնոմետրիկ մոդելավորման տեսակետից տվել է ավելի լավ արդյունք, համարվել է լավագույնը: Հենց ամենալավ մոդելի հատկանիշներից էլ

կարելի է եզրակացնել, որ, ամենայն հավանականությամբ, մյուս դասական պայմանները որոշակի չափով պահպանվել են. մոդելները հետերոսկեդաստիկ են, մնացորդներում չկա կորելյացիա, իսկ կոինտեգրման առկայության ստուգումն իրականացվել է հետևյալ կերպ. գնահատվել է մոդելը, այնուհետև հաշվարկվել են ստացված մոդելի մնացորդները, ինչից հետո հետազոտվել է մնացորդների ստացված շարքի ստացիոնարությունը: Եթե վերջինը ստացիոնար է, ապա կան հիմքեր ենթադրելու, որ սույն սպեցիֆիկացիայի դեպքում, հնարավոր է, կոինտեգրումը բացակայում է:

Մոդելները կարելի է գնահատել ամենափոքր քառակուսիների սովորական մեթոդի օգնությամբ: Սակայն նկատի ունենալով, որ սույն պարագայում ամենափոքր քառակուսիների մեթոդի արդյունքները բավարար չեն, կիրառվել է այսպես կոչված ամենափոքր քառակուսիների անուղղակի մեթոդը, որում օգտագործվել են գործիքային փոփոխականներ՝ միգրանտների թիվը և տրանսֆերտների ծավալը:

աղյուսակ 10

Միգրացիոն մոդելի գնահատողական արդյունքները

Dependent Variable: $\Psi(\text{Migr})$

Method: Least Squares

Sample(adjusted): 2002:3 2015:4

Included observations: 55 after adjusting endpoints

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
$\Psi(\text{growtp}(-2))$	0.46	0.2131	2.51	0.0317
$\Psi(\text{ArmDisp2}(-9))$	61.35	22.032	3.28	0.0021
EurEconUnion	141.32	139.12	2.51	0.0211
ψ_1	1096.6	194.81	5.45	0.0001
ψ_2	621.22	152.19	3.97	0.0001
ψ_3	1219.31	245.77	4.51	0.0002
$\Psi(\text{nlabdif})$	191.85	38.11	5.12	0.0001
$\Psi(\text{nlabdif}(-4))$	-159.61	36.02	-4.11	0.0002
_cons	1,713.0	132.69	-4.37	0.0003
R-squared	0.73	Mean dependent var		195.22
Adjusted R-squared	0.61	S.D. dependent var		623.08

S.E. of regression	348.34	Akaike info criterion	14.46
Sum squared resid	3944173	Schwarz criterion	14.78
Log likelihood	-303.24	F-statistic	9.61
Durbin-Watson stat	1.88	Prob(F-statistic)	0.0000

աղյուսակ 11

Տրանսֆերային մոդելի գնահատողական արդյունքները

Dependent Variable: $\Psi(\text{Ces})$

Method: Least Squares

Sample(adjusted): 2001:1 2015:4

Included observations: 60 after adjusting endpoints

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
$\Psi(\text{Salary}(-2))$	42172.0	177.31	3.62	0.0002
$\Psi(\text{Salary}(-3))$	32291.4	164.29	2.21	0.0135
$\Psi(\text{Migr}(-3))$	1681.2	916.21	2.56	0.0064
ψ_1	-41381015	122.53	-3.24	0.0003
ψ_4	12628981	185,23	1.55	0.0925
$\Psi(\text{Ces1}(-2))$	-0.891762	0.0872	-5.99	0.0001
_cons	709,852	786.34	0.07	0.9261
R-squared	0.83	Mean dependent var		8982831
Adjusted R-squared	0.75	S.D. dependent var		59162018
S.E. of regression	31032172	Akaike info criterion		36.73
Sum squared resid	3.76	Schwarz criterion		37.35
Log likelihood	-851.61	F-statistic		28.21
Durbin-Watson stat	2.11	Prob(F-statistic)		0.000000

Մոդելների վիճակագրական հատկանիշները լավ են, քանի որ դետերմինացիայի գործակիցները բարձր են, Դարբին-Ուոթսոնի ցուցանիշը նորմի մեջ է²⁰, իսկ հավանականությունը, որ գործակիցները զրոյական են, մոտ է զրոյին: Հաշվարկված են նաև Ակաիկեի (AIC) տեղեկատվական չափանիշը և Շվարցի

²⁰ Տրանսֆերտների մոդելներում, հավասարման ձախ մասում առկա է կախյալ փոփոխականի լագային նշանակությունը, դա նշանակում է, որ Դարբին-Ուոթսոնի վիճակագրության նշանակությունը կասկածելի է: Այդ մոդելների համար հավելյալ հաշվարկվել են Դարբինի *h*-վիճակագրությունները: Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ այդ մոդելների մնացորդներում բացակայում է ինքնակորելյացիան:

չափանիշը, որոնք այլ մոդելների համեմատությամբ փոքրացել են էլ ավելի, ինչը նույնպես վկայում է մոդելի հուսալիության մասին:

Այնուհետև մոդելներն ստանալու նպատակով, պարզագույն թվաբանական գործողությունների միջոցով բացառվել են առաջին և երկրորդ կարգի տարբերությունները: Եվ վերջնական քայլով, որպեսզի համեմատենք դետերմինանտների ազդեցությունը արդյունքի վրա, վերցնում ենք էլաստիկության միջին գործակիցը: Վերջնական տեսքով մոդելներն ունեն հետևյալ տեսքն.

Միգրացիոն մոդել.

$$\widehat{Migr}_t = 0.008 \cdot growtp_{t-2} + 1.5 \cdot ArmDisp2_{t-9} + 0.8 \cdot EurEconUnion_t + 0.9 \cdot \psi_t^1 + 0.6 \cdot \psi_t^2 + 1.1 \cdot \psi_t^3 + 2.1 \cdot nlabdif_t - 0.7 \cdot nlabdif_{t-4} + 0.48 \cdot e_{t-4} + 1,713$$

Մոդելում բացակայում է Ջինի գործակիցը և մարդկային զարգացման ինդեքսը, քանի որ վերջինները զգալի չեն: Արդյունաբերությունը ներառված չի մոդելում, քանի նա ներկայացվում է ՀՆԱ ցուցանիշում, իսկ նա արտացոլված է մոդելում:

Գնահատված էկոնոմետրիկ մոդելից կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

- $growtp$ – մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի տարբերությունը ԵԱՏՄ և ՀՀ միջև ազդում 2 լագով ուշացումով: Այսինքն, եթե $growtp$ գործակիցը $t-2$ աճում է 2 ԱՄՆ դոլարով, ապա միգրանտների քանակը t եռամսյակում ավելանում է միջինը 0.008%՝ այլ հավասար պայմաններում:
- $ArmDisp2$ (ԵԱՏՄ-ում հայ համայնքի հարաբերակցված մեծությունը՝ այլ համայնքներին) ազդում է միգրացիաի վրա $t-9$ ուշացումով, այսինքն, մոտավորապես 2 տարուց հետո: Եթե հայկական համայնքի մասնաբաժինը ԵԱՏՄ մեծանա 1% $t-9$ եռամսյակում, ապա միգրանտների քանակը, միջինը, t եռամսյակում կավելանա 1.5%:
- Եթե Հայաստանը միանար ԵԱՏՄ 2015-2016 թվականներին ($EurEconUnion$, ինտեգրման ցուցանիշ – 0 կամ 1), ապա այդ ժամանակահատվածում միգրանտների թիվը՝ ըստ եռամսյակների, միջինը կավելանար 0.8%:

- Մոդելում առաջին՝ ψ_t^1 , երկրորդ՝ ψ_t^2 , երրորդ՝ ψ_t^3 եռամսյակները համեմատած չորրորդ եռամսյակի հետ միջինում ազդում են միգրանտների քանակի վրա համապատասխանաբար՝ 0.9, 0.6 և 1.1 տոկոսների մեծությամբ:
- nlabdif – գործազրկության մակարդակի տարբերությունը ԵԱՏՄ և Հայաստանի միջև ազդում է միգրացիայի վրա առաջին և չորրորդ եռամսյակներում, մասնավորապես, տարբերությանը ավելացումը 1% առաջին եռամսյակում բերում է միգրանտների թվաքանակի աճին, միջինը, 2.1%: Նույնը, տարբերության ավելացումը 1% չորրորդ եռամսյակում կարող է բերել միգրանտների թվաքանակի նվազման 0.7% (*փաստացի, սույն տարբերության տատանումները տարբեր եռամսյակներում ոչ միանշանակ են ազդում*):
- Ազդում է նաև մոդելի մնացորդը $t-4$ եռամսյակում: Մնացորդը ներկայացնում է իրանից փաստացի և գնահատված միգրանտների քանակի ցուցանիշի տարբերությունը: Այդ տարբերությունը պրակտիկորեն բերում է միգրանտների միջին աճին մեկ մարդու նկատմամբ: Մնացորդը նաև նկարագրում է ցնցումները: Օրինակ, եթե ԵԱՏՄ բացվեր նոր արտադրություն, այս դեպքում, ցնցումները դրական կազդեն միգրացիայի վրա:
- Ազատ անդամը ունի 1,713 արժեք և ներկայացնում է այն ակնհայտ դրական կապերը, որոնք գոյություն ունեն ԵԱՏՄ և Հայաստանի միջև հարաբերություններում՝ լեզուն, հնարավորությունները անվիզ այցելել այդ երկրները, պատմական կապերը, կրոնը: Այս ամենը դրականորեն է ազդում միգրացիայի վրա:

Տրանսֆերտային մոդել.

$$\widehat{Ces}_t = 0.9 \cdot Salary_{t-2} + 0.75 \cdot Salary_{t-3} + 0.06 \cdot \widehat{Migr}_{t-3} - 5.3 \cdot \psi_t^1 + 3.2 \cdot \psi_t^4 - 0.0006 \cdot Ces_{t-2} + 709,852$$

Տրանսֆերտների վրա t եռամսյակում (Ces_t) ազդում են.

- Միջին աշխատավարձը $Salary_{t-2}$, $Salary_{t-3}$ ԵԱՏՄ պետություններում համապատասխանաբար $t-2$ և $t-3$ եռամսյակներում: Աշխատավարձի աճը \$1 ԱՄՆ դոլարով $t-2$ եռամսյակում բերում է փոխանցումների միջին աճին 0.9% t

եռամսյակում: Աշխատավարձի աճը $t-3$ եռամսյակում բերում է տրանսֆերտների միջին աճին t եռամսյակում 0.75%:

- Միգրանտների քանակը՝ $Migr_2$ ազդում է $t-3$ եռամսյակում: Միգրքնտների աճը տվյալ եռամսյակում մեկ անձով բերում է տրանսֆերտների աճին, միջինը, 0.06%:
- Տրանսֆերտների վրա ազդում են առաջին և չորրորդ եռամսյակում՝ ψ_t^t և ψ_t^4 , որոնք համապատասխանում են ձմեռային ամիսներին: Առաջին եռամսյակում տրանսֆերտները նվազում են համեմատաժամառվա և աշնան ամիսների հետ 5.3%, իսկ Նոր տարում (*չորրորդ եռամսյակ*) համեմատաժամառվա աշնանային և ամառային ամիսների հետ աճում են 3.2% ԱՄՆ դոլարով:
- Տրանսֆերտների ծավալի վրա t եռամսյակում ազդում են նաև $t-2$ եռամսյակում (Ces_{t-2}), եթե վերջինը աճի \$1 ԱՄՆ դոլարով, ապա սույն եռամսյակի տրանսֆերտները կնվազեն 0.0006%: Դա բացատրվում է նրանով, որ արդեն $t-2$ եռամսյակում իրականացվել են փոխանցումներ, հետևաբար, այդ եռամսյակում տրանսֆերտների ծավալը նվազում է:
- Ազատ անդամը հավասար է \$709,852 ԱՄՆ դոլար: Դա նշանակում է, որ միջինում, այլ գործոնները դրական են ազդում փոխանցումների ծավալի վրա (*նույնիսկ շարունակ Ռուսաստանի տնտեսությունում պահպանվող դժվարություններին*), մասնավորապես, դա կարող է լինել Հայաստանի և ԵԱՏՄ, մասնավորապես Հայաստանի և Ռուսաստանի Դաշնությունը սոցիալ-տնտեսական հարաբերությունները ներկայացնող պատճառները:

Նշենք, որ 2015 թվականի չորրորդ եռամսյակում փոխանցումների ծավալու դեպի Հայաստան ԵԱՏՄ-ից կազմել է \$280 մլն ԱՄՆ դոլար, իսկ տարեկան կտրվածքով՝ մոտավորապես՝ \$916 մլն ԱՄՆ դոլար:

3.3 Միգրացիոն գործընթացների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա (աշխատանքային ուժ արտահանող պետության օրինակով)

Բնակչության միգրացիայի արդյունքում տնտեսական զարգացման համար առաջ են գալիս ինչպես դրական, այնպես էլ բացասական էֆեկտներ թե՛ միգրանտների ծագման, թե՛ մեկնման երկրներում: Դրանց նկարագրությանը բավական ընդարձակ

գրականություն է նվիրված: Երկրորդ գլխում և 3.1 պարագրաֆում հետազոտել ենք միգրացիայի և տնտեսական աճի տեսական կապը, դիտարկել դրանց հիմնական դետերմինանտները, որոնք կարող են տեղ գտնել կառուցվող էկոնոմետրիկ մոդելում:

Սույնով պայմանավորված, հետևելով ատենախոսության 2-րդ գլխում նկարագրված և ստացված արդյունքներին, հենվելով [47], [49], [83] աշխատությունների վրա, կներկայացնենք դոնոր երկրում, Հայաստանի օրինակով, տնտեսական աճի վրա արտագաղթի մակարդակի ազդեցության էկոնոմետրիկ մոդելը: Վերջինիս համար, որպես հիմք ընտրում ենք Սոլոու-Սվենի ընդլայնված և ձևափոխված մոդելը, ուսումնասիրված Ռ.Ջ. Բարոյի և Խ.Սալա-ի-Մարտինի [76]-[78] աշխատություններում:

Ընդ որում՝ պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները: **Առաջինը՝** գրեթե բացակայում են, Հայաստանի օրինակով, տնտեսական աճի վրա արտագաղթի ազդեցությունը գնահատող էկոնոմետրիկ մոդելները: Ուստի, ատենախոսության 2-րդ գլխում Սոլոու-Սվենի ընդլայնված և ձևափոխված մոդելի հանգամանալի վերլուծությունը կատարվել է դոնոր երկրի օրինակով, դրա կիրառման հնարավորության շեշտադրմամբ, այսինքն՝ դիտարկվել են միգրացիոն փոփոխականները՝ արտագաղթի նկարագրման համար փոփոխություններով, որոնք ազդում են տնտեսական աճի վրա:

Երկրորդ՝ միգրացիոն գործընթացների գործոնների ազդեցության նկարագրման ժամանակ անհրաժեշտ է ներառել դրամական փոխանցումները՝ տրանսֆերտները, քանի որ դրամական փոխանցումները կարող են բարձրացնել երկարատև տնտեսական աճը, ինչպես քաղաքական և տնտեսական ինստիտուտների ավելի բարձր որակ ունեցող երկրներում, այնպես էլ միջին եկամուտներ ունեցող երկրներում, ինչպիսին է Հայաստանը [С.В. Чепель, К.А. Бондаренко, 49]: Վերջինիս դեպքում, չնայած տնտեսական աճի և աղքատության նվազման վրա դրամական փոխանցումների դրական ազդեցությանը, դրանք արտաքին շուկերի և տնտեսական զարգացման անկայունության աղբյուրներ են: Այսպես, դրամական փոխանցումների կտրուկ ավելացումը կամ պակասումը կարող է խիստ բացասական էֆեկտ ունենալ տնտեսական աճի վրա՝ առաջին հերթին երկրի առևտրային հատվածի հնարավոր թուլացման և նրա արտաքին մրցունակության նվազման շնորհիվ արդյունքում: Վերջին

տարիների պրակտիկան ցույց է տվել նման եզրահանգումների ողջ հիմնավորվածությունը:

Անդրադառնալով ատենախոսության (2) և (4) բանաձևերին, հետևելով Boubtane, Dumont և Rault [83] աշխատությանը և դրանում արտացոլված էկոնոմետրիկ հավասարման լոգ-գծայնացման մեթոդիկային, ներկայացնենք, լոգ-գծայնացված հավասարումների բանաձևերը բազմակի ռեգրեսիոն կախվածության ձևով (*Հավելվածում ներկայացվում է դրա ստացման մանրամասն եզրահանգումը*): Այն թույլ կտա, Հայաստանի օրինակով, գնահատել տնտեսական աճի վրա արտագաղթի ազդեցությունը.

$$\ln y_t = \beta_1 + \beta_2 \ln y_{t-1} + \beta_3 \ln s_{H_t} + \beta_4 \ln(\delta + x + n_t) + \beta_5 \frac{m_t k_t^{Migr}}{\delta + x + n_t} + \beta_6 trf_t + \mu \quad (30):$$

Որպես անկախ փոփոխականներ (*Հայաստանի և ռեցիպիենտ երկրի բնութագրեր*) ընտրված են.

աղյուսակ 12

t	2000-2015թթ.
y_t	t տարում Հայաստանի ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով (\$ բնակչության մեկ շնչի հաշվով) (արտադրողականություն)
m_t	զուտ միգրացիայի գործակիցն է ($m = Migr / Labor$). <i>Migr</i> - Հայաստանից ռեցիպիենտ երկիր (<i>Ռուսաստան</i>) միգրացիոն հոսքի մեծությունը t տարում: <i>Migr(t)</i> որպես միգրանտների հոսք դեպի երկիր կամ երկրից դուրս, այսինքն, նա կարող է լինել կամ դրական, կամ բացասական: Սուրու-Սվէնս մոդելում, Հայաստանի դեպքում , <i>Migr(t)</i> ունի բացասական նշան: <i>Labor</i> – աշխատուժը, որը օգտագործվում է Կոբ-Դուգլաս ֆունկցիայում:

S_{H_t}	Տեսականորեն, սույն գործակիցը ցույց է տալիս, մարդկային կապիտալի ներդրումը, որը իրականացվել է միգրանտների վրա: Քանի որ, նման վիճակագրական տվյալների հավաքագրումը բարդ է, մենք դիտարկում ենք սույն փոփոխականը որպես, կրթությանը տրամադրվող միջոցների աճի տեմպը (<i>ըստ տարիների, ՀՀ վիճակագրական տվյալների համաձայն</i>):
δ	Էկզոգեն տրված հիմնական կապիտալի մաշվածության դրույքաչափը
x	Էկզոգեն տրված տեխնոլոգիական առաջընթացի չափաքանակը (<i>նորման</i>). Նույն է երկրի ներսում և արտասահմանում
n_t	Ազգաբնակչության (<i>համապատասխանաբար՝ և աշխատուժի</i>) աճի տեմպը
K_t^{Migr}	Հարաբերական կապիտալի քանակը մեկ “արդյունավետ արտադրության” համար կամ հարաբերական մարդկային կապիտալը միջին մարդկային կապիտալի համեմատ՝ ուղարկող երկրի տնտեսությունում մեկ աշխատողի հաշվարկով: Քանի որ, մարդկային կապիտալը ատենախոսությունում ընդունվում է, որպես կրթության մակարդակ, ապա հետևելով [83] աշխատությունում շարադրված տրամաբանության, բայց այն տարբերությամբ, որ մենք դիտարկում ենք այն դոնոր-երկրի համար, սույն պարամետրը հաշվարկվում է որպես արտադադրողներում բարձրագույն կրթություն ունեցողների հարաբերությունը ՀՀ ամբողջ բնակչության նկատմամբ (<i>սոցիոլոգիական հարցումների տվյալներով</i>):
$\delta + x + n_t$	Մաշվածության արդյունավետ դրույքաչափն Սոլոու-Սվէնի դասական մոդելում առանց միգրացիաի (<i>մանրամասնորեն ներկայացված է 2.2 ենթակետում</i>):
$\xi(k) = \frac{m_t k_t^{Migr}}{\delta + x + n_t}$	Մարդկային կապիտալը կլանող՝ զուտ միգրացիաի (<i>արտադադր</i>) ազդեցությունը:
trf_t	Դրամական փոխանցումներ դեպի Հայաստան
$\beta_1, \beta_2, \beta_3, \beta_4, \beta_5, \beta_6$	Բացատրող փոփոխականների գործակիցները միգրացիոն հոսքերը գնահատելիս
ε_t	Պատահական սխալ

(30) մոդելի գնահատման ժամանակ բարդություններ են ծագում հետազոտության տեղեկատվական բազան ձևավորելիս: Աշխատանքային միգրացիան դեռևս բավականաչափ չի արտացոլվել վիճակագրական չափումների առկա համակարգում: Աշխատանքային միգրանտների թվաքանակի, նրանց դրամական փոխանցումների, կրթական մակարդակի և այլ ցուցանիշների վիճակագրությունը հատվածային է և ընդհատումներով: Հիմնական պատճառները կապված են միգրանտների գրանցման դժվարությունների, մասշտաբային անլեգալ միգրացիայի, աշխատանքային միգրանտների ուղարկած դրամական փոխանցումների՝ դրամական հոսքերի ընդհանուր գումարից առանձնացնելու խնդիրների հետ: Այս պայմաններում, մեր տեղեկատվական ռեսուրսներն են հանդիսանում, ինչպես միջազգային (*օրինակ՝ Համաշխարհային բանկի WDI տեղեկատվական ռեսուրսը, որի համար կա համադրելի վիճակագրություն՝ սկսած 1990 թվականից, պետությունների բավական լայն շրջանակի համար*), և պետական՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ռեցիպիենտ-երկրների վիճակագրական ծառայությունները, այնպես էլ, առանձին հարցումների վրա հիմնված տվյալների շտեմարանները:

Մեր կողմից ընտրված փոփոխականների (*դեպերմիանտների*) գնահատման, նրանց համեմատական վերլուծության և ստացված էկոնոմետրիկ արդյունքների մեկնաբանման ընթացքում մենք հետևում [83] աշխատությանը²¹: Որպես էկոնոմետրիկ հավասարման գնահատման ձև ընտրված է **ընդհանրացված պահերի մեթոդը** (*GMM - Generalized Method of Moments*):

ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով (y_t) շարքի համար Դիկի-Ֆուլերի թեստի արդյունքները հետևյալն են.

աղյուսակ 13

ADF Test Statistic	-9.39	1% Critical Value*	-4.73
		5% Critical Value	-3.44
		10% Critical Value	-2.97
* MacKinnon critical values for rejection of hypothesis of a unit root			

²¹ Այս աշխատության մեջ դիտարկվել է Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) 22 երկիրները, 1986-2006թթ. ժամանակահատվածի համար

Դիտարկվող (30) հավասարման կախյալ փոփոխականի (y_t) շարքի Դիկի-Ֆուլերի թեստի արդյունքները գոհացուցիչ են ստացիոնարության տեսանկյունից: Նման բավարար արդյունք ստանալու համար, ինչպես հետևում է Հավելվածում ներկայացված եզրահանգումներից, դիտարկվել է այդ շարքի առաջին կարգի տարբերությունը: Այլ պարագայում, մեր շարքը կլիներ ոչ ստացիոնար: Իհարկե, հնարավոր տարբերակներից է, որ առաջին կարգի տարբերության ժամանակ ստացվեին ոչ ստացիոնար շարք, որի դեպքում, անհրաժեշտ է դիտարկել ավելի բարձր կարգի տարբերությամբ շարքեր:

Մեր փոփոխականների համար բերվում է պարզ գնահատողական վիճակագրություն (*առաջին գնահատականը S<24 պեությունների համար* [83], *իսկ երկրորդը՝ Հայաստանի, բացի trf գործակցից*).

աղյուսակ 13

Variables	Mean	Standard deviation	Min	Max
y_t	39768 / 37641	(11.331) / (10.429)	20027 / (21001)	92994 / 89761
y_{t-1}	36575 / 35891	(9.826) / (9.961)	15972 / 14918	83280 / 83810
S_{H_t}	0.483 / 0.229	(0.190) / (0.271)	0.025 / 0.101	0.919 / 0.872
n	0.031 / 0.046	(0.031) / (0.512)	-0.008 / -0.001	0.255 / 0.173
m	0.021 / -0.035	(0.015) / (0.038)	-0.006 / -0.001	0.071 / 0.082
K^{Migr}	1.758 / 1.927	(0.672) / (0.519)	0.577 / 0.492	4.221 / 3.998
trf	15748	(5.934)	3762	29729

Նշենք, որ ընդհանրացված պահերի մեթոդը (GMM) միաժամանակ պահերի մեթոդի և մոդելի պարամետրերի գնահատման ամենափոքր քառակուսիների մեթոդի ընդհանրացումն է:

Փոփոխականներ	Սուրու-Սվենի ընդլայնված մոդելը $S\<24$ երկրների համար [74]	Սուրու-Սվենի ընդլայնված մոդելը Հայաստանի համար
$\ln \hat{y}_{t-1}$	-0.857 (0.080)	-0.901 (0.079)
$\ln s_{H_t}$	-0.011 (0.021)	-0.023 (0.056)
$\ln (g_A + x + n_t)$	-0.381 (0.156)	-0.416 (0.209)
$m_t k_t^{Migr} / \delta + x + n_t$	-0.190 (0.189)	0.281 (0.223)
	<i>P-value</i> Arellano-Bond test for AR(1) – 0.005 <i>P-value</i> Arellano-Bond test for AR(2) – 0.202 <i>P-value</i> Hansen-Sargan test – 0.546	<i>P-value</i> Arellano-Bond test for AR(1) – 0.007 <i>P-value</i> Arellano-Bond test for AR(2) – 0.198 <i>P-value</i> Hansen-Sargan test – 0.602

GMM մեթոդի սպեցիֆիկացիան մեր մոդելի համար բավարարում է ստանդարտ դիագնոստիկ թեստերին, որոնց p -նշանակությունները բերված են աղյուսակ 14-ի վերջին երեք տողերում (ներկայացվում է [83] աշխատությունում բերված $S\<24$ երկրների համեմատությամբ): Մասնավորապես, դա նշանակում է, որ չեն նկատվում ավտոկորելյացիայի առաջին կամ երկրորդ կարգի մնացորդային նշաններ ըստ Arellano-Bond-ի թեստի, իսկ ընտրված մեթոդի (*գործիքների*) իսկությունը հաստատվում է Hansen-Sargan-ի թեստով:²² Այսպիսով, 1) Պահերի ընդհանրացված երկքայլ մեթոդը հուսալի ստանդարտ սխալներ է տալիս: 2) Arellano-Bond թեստի զրոյական գնահատականը AR (1) համար ցույց է տալիս 1 կարգով մնացորդային ավտոկորելյացիայի բացակայությունը: 3) Arellano-Bond թեստի զրոյական գնահատականը AR (2) համար ցույց է տալիս 2 կարգով մնացորդային ավտոկորելյացիայի բացակայությունը: 4) Hansen-

²² Որպեսզի, Eviews միջոցով գնահատել հավասարումը GMM մեթոդով, ընտրում ենք **Object / New Object .../Equation**, կամ սեխմում ենք **Estimate** կոճակը գործիքադարակի վր, որը վերաբերվում է առկա հավասարմանը: Երկխոսության վանդակում **Equation Specification** ընտրում ենք գնահատման մեթոդը. **GMM**. http://www.eviews.com/help/helpintro.html#page/content/gmmiv-Generalized_Method_of_Moments.html

Sargan թեստի զրոյական գնահատականը մատնանշում է գործիքների ճիշտ ընտրությունը:

Լրացուցիչ, Հայաստանի տարբերակի համար, մեր կողմից գնահատվող փոփոխականների վերաբերյալ բերում ենք ստացված այլ գնահատականները.

աղյուսակ 15

Variable	t-Statistic	Prob.	
$\ln \hat{y}_{t-1}$	3.83	0.0001	
$\ln s_{H_t}$	2.53	0.0204	
$\ln (g_A + x + n_t)$	3.02	0.0059	
$m_t k_t^{Migr} / \delta + x + n_t$	-3.51	0.0003	
R-squared	0.79	Mean dependent var	8971939
Adjusted R-squared	0.74	S.D. dependent var	63151309
S.E. of regression	2998301	Akaike info criterion	38.13
Sum squared resid	3.81	Schwarz criterion	38.61
Log likelihood	-901.27	F-statistic	27.73
Durbin-Watson stat	2.34	Prob(F-statistic)	0.000000

Ստացված արդյունքները թույլ են տալիս անել բավական կայուն եզրահանգումներ:

Աղյուսակ 14-ում և 15-ում, Հայաստանի համար, այդ թվում՝ ՏՀԶԿ երկրների համեմատությամբ, ներկայացված են գնահատականներ (30) հավասարման Սոլոու-Սվենի ընդլայնված և ձևափոխված մոդելի համար, որում հաշվառված է միայն մարդկային կապիտալը: Նման հանգամանքը կարևորվում է այն պատճառով, որ Հայաստանից արտագաղթող քաղաքացիների տանում են իրենց հետ միայն իրենց հմտությունները, այսինքն, $S_{K_t} = 0$: Եվ առավել մեծ ուշադրության է առժանանում s_{H_t} պարամետրը:

Արդյունքները ցույց են տալիս, որ, նախ, գործակիցների մեծ մասը նշանակալի է, և նշանները համաձայնեցվում են խնդրի առաջադրման հետ: Երկրորդ՝ մարդկային կապիտալի (s_{H_t}) գործակիցը բացասական է և նշանակալի, ինչը վկայում է Հայաստանի

աճի վրա արտագաղթողների հմտությունների էական դերի մասին, որը նրանք կարող էին ունենալ այն դեպքում, եթե չարտագաղթեին: Մարդկային կապիտալում ներդրումների հաշվարկային գործակիցը մնում է աննշան: Ինչպես նշվում է [83]–ում, սա համաձայնեցվում է մարդկային կապիտալում ներդրումների աճի ազդեցության մասին էմպիրիկ հետազոտությունների արդյունքների հետ: Աշխատուժի աճի տեմպի գործակիցն ունի սպասվող բացասական նշան: Մարդկային կապիտալի արտագաղթը բացասական ազդեցություն է գործում արտադրողականության աճի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունները և հետազոտության առարկա հանդիսացող խնդիրների և հիմնահարցերի տնտեսամաթեմատիկական մեթոդների և վերլուծությունների հիման վրա իրականացված հետազոտությունները թույլ են տալիս կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները.

- ԽՍՀՄ փլուզումից հետո անցած ժամանակաշրջանում ԱՊՀ-ում և ԵԱՏՄ-ում առկա են բազմաթիվ, կայուն և բազմազան միգրացիոն հոսքեր, որոնք ձևավորել են միասնական միգրացիոն տարածքի հիմքը՝ Եվրասիական միգրացիոն համակարգը:
- Երկու երկրների միջև միգրացիոն հոսքի ծավալը պարտադիր չէ, որ հարաբերակցվի աշխատավարձի կամ զբաղվածության նորմերի տարբերության հետ, քանզի դրանց ազդեցությունը միգրացիայի վրա աստիճանաբար նվազում է, պայմանավորված միգրացիոն ցանցերի աճի հետևանքով:
- Գնահատման արդյունքները պրոբիտ-ռեգրեսիայի մեթոդով թույլ է տալիս եզրակացնել, որ եթե ընդունող և ուղարկող երկրների միջև աշխատավարձի տարբերությունն ավելանում է՝ միգրացիայի հավանականությունը բարձրանում է: Կրթությունը, գործազրկությունն ունեն դրական նշան: Բնակչության մեկ շնչին ընկնող ընտանեկան եկամուտը և տարիքն ունեն բացասական հարաբերակցություն:
- Նոր դասական տնտեսական աճի Սոլու-Սվենի և Ռամսեի ընդլայնված և ձևափոխված, Բարրու մոդելները, ներառված իրանց մեջ միգրացիոն հոսքերը (*ներկայացվում է միգրացիոն ֆունկցիա տեսքով*), ուսումնասիրվել և դրա հիման վրա եզրակացվել է նրանց հնարավոր տարբերակների կիրառումը Հայաստանի օրինակով:

- Նոր դասական տնտեսական աճի Բարոու մոդելը, ներառված իր մեջ միգրացիաի փոփոխականով, ուսումնասիրվել և դրա հիման վրա եզրակացվել է նրա հնարավոր տարբերակների կիրառումը Հայաստան և Եվրասիական Տնտեսական Միության հարաբերություններում:
- Ակնհայտ է, որ առաջին հերթին միգրացիայի վրա ազդում են անվիզա ռեժիմը, բնակչության մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ-ի տարբերությունը ռեցիպիենտ երկրում, ԵԱՏՄ-ում և ՀՀ-ում ու հայկական սփյուռքի մեծությունը: Արտադրության զգալի աճը ռեցիպիենտ երկրում, ՀՀ-ում արտադրության նույն մակարդակի պայմաններում, նույնպես հանգեցնում է միգրացիայի աճին:
- Ռեցիպիենտ երկրում միգրացիայի վրա ազդում է նաև ռեցիպիենտ երկրի՝ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և Հայաստանի նույն ցուցանիշի միջև զգալի դրական տարբերությունը: Հայկական սփյուռքի աճը, որը ԵԱՏՄ-ում կազմում է ավելի քան 2.4 մլն մարդ, նույնպես ձգողական էֆեկտ է ունենում: Միգրացիայի վրա իր ազդեցությունը ունի ռեցիպիենտ երկրում և ՀՀ-ում գործազրկության մակարդակների միջև տարբերությունը:
- Գնահատված է կոնոմետրիկ միգրացիոն մոդելից կարելի է անել հետևյալ եզրահանգումները: Եթե մեկ շնչին ընկնող ՀՆԱ t-2 աճում է 2 ԱՄՆ դոլարով, ապա միգրանտների քանակը t եռամսյակում ավելանում է միջինը 0.008%: Եթե հայկական համայնքի մասնաբաժինը ԵԱՏՄ մեծանա 1% t-9 եռամսյակում, ապա միգրանտների քանակը, միջինը, t եռամսյակում կավելանա 1.5%: Գործազրկության մակարդակի տարբերության ավելացումը այլ ԵԱՏՄ անդամ երկրների և Հայաստանի միջև բերում է միգրանտների թվաքանակի աճին:
- Հայաստանի և Ռուսաստանի միջև ստեղծված սոցիալ-տնտեսական հարաբերությունները դրական են ազդում տրանսֆերտների ծավալի վրա՝ ի հաշիվ միգրացիայի մեծության: Սակայն Ռուսաստանի տնտեսությունում առկա հիմնախնդիրների և դեպի Հայաստան տրանսֆերտների նկատվող անկման պայմաններում, մատնանշում է Հայաստանից արտագաղթի պահպանվող միտման մասին, ինչն ազդելու է տրանսֆերտների մեծության վրա:

- Գնահատված էկոնոմետրիկ տրանսֆերտային մոդելից հետևում է, որ աշխատավարձի աճը ԵԱՏՄ այլ երկրներում \$1 ԱՄՆ դոլարով t-2 և t-3 եռամսյակներում բերում են դեպի ՀՀ փոխանցումների միջին աճին, համապատասխանաբար՝ 0.9 և 0.75 տոկոսներով:
- Մարդկային կապիտալի գործակիցը բացասական է, ինչը վկայում է Հայաստանի աճի վրա արտագաղթողների հմտությունների դերի մասին, որը նրանք կարող էին ունենալ այն դեպքում, եթե չարտագաղթեին: Աշխատուժի աճի տեմպի գործակիցն ունի սպասվող բացասական նշան: Մարդկային կապիտալի արտագաղթը բացասական ազդեցություն է գործում արտադրողականության աճի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Stephen Castles , Hein de Haas, Mark J. Miller PhD. The Age of Migration: International Population Movements in the Modern World. Macmillan Publishers Ltd
2. Рязанцев С.В. Трудовая миграция в странах СНГ и Балтии: тенденции, последствия, регулирование. — М.: Формула права, 2007. — 576 с.
3. Юдина Т.Н. Социология миграции. М., 2003
4. International labour migration. A rights-based approach, Geneva, International Labour Office, 2010.
5. Migration and Development. A theoretical perspective. Research Officer at IMI. 1999
6. Stephen Castles , Hein de Haas, Mark J. Miller PhD.
7. Piore M.L., Birds of Passage: Migrant Labor and Industrial Societies. Cambridge, UK: Cambridge University Press. 1979 - 229 pp.
8. Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ / Ջոյա Թադևոսյան և ուրիշ.; Մասն. խմբ՝ Ա.Խ. Մարկոսյան. – Եր.: Տնտեսագետ, 2014 - 80 էջ.- («Ամբերդ» մատենաշար)
9. Шота Тетвадзе, Отар Тетвадзе. Армяне в Грузии. (с древних времён до сегодняшнего дня) Национальная Академия Грузии. Тбилиси - 2008
10. Этнические и культурно-бытовые процессы на Кавказе. Москва, «Наука», 1978 г. Стр. 6, Этнические процессы в Грузинской ССР. Автор – Н. Г. Волкова
11. Народное хозяйство СССР. <http://s45.radikal.ru/i109/0812/7f/652476ace39c.jpg>
12. Statistical Yearbook, 2001
13. Migration Trends in Eastern Europe and Central Asia, 2002
14. Gevork Pogosian, Conditions of Refugees in Armenia, Yerevan, Noyan Tapan, 1996, 27 p.
15. Миграционные мосты в Евразии: Сборник материалов VI международной научно-практической конференции «Роль миграции в социально-экономическом и демографическом развитии посылающих и принимающих стран Евразии» / Под

ред. чл.-корр. РАН, д-р экон. наук, профессора С.В. Рязанцева. – М.: Изд-во «Экон-Информ», 2014. – 594 с.

16. Cassarino J. P. Conditions of Modern Return Migrants – Editorial Introduction, International Journal on Multicultural Societies (IJMS), Vol.:10, №2, 2008 // (<http://unesdoc.unesco.org/images/0018/001812/181209E.pdf#page=3>)
17. Осадчая Г.И. Мигранты из Армении и Грузии в Москве. – М.: Изд-во РГСУ, 2010
18. Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 2009 թվականին Երևանում հրապարակված «Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն»
19. ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2011 թվականին առաջարկված «ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացում»
20. Գ. Հարությունյան. «Ժողովրդագրությունը որպես կրիտիկական ոլորտ և տեխնոլոգիաներ (հայեցակարգային մոտեցումներ)», «21-ԴԱՐ», 2015, N 1
21. Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց 2011/2012թթ. Հայաստանում հմտությունների, միգրացիայի և զարգացման միջև եղած կապերի հետազոտության արդյունքները Եվրոպական կրթական հիմնադրամ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012թ. հունիս
22. Մանուկյան Ս.Ա. «Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2013», - IPSC «Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ», 2013թ., էջ 174
23. Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ/ Զոյա Թադևոսյան և ուրիշ.; Մասն. խմբ՝ Ա.Խ. Մարկոսյան. –Եր.: Տնտեսագետ, 2014 - 80 էջ.- («Ամբերդ» մատենաշար):
24. Հայաստանի տնտեսական զեկույց 2013. Մարդկային կապիտալ և աճի հեռանկարներ. EDRC

25. International labour migration. A rights-based approach, Geneva, International Labour Office, 2010.
26. Гонтмахер Е., Малеева Т. Социальные проблемы России: альтернативные пути их решения // Вопросы экономики. – 2008. – № 2. – С. 65.
27. Ходжабекян В.Е. (2001). Регулирование миграционными процессами в Республике Армения. Сборник материалов Международного семинара «Демография Армении на стыке тысячелетий» (Дилижанские чтения 2000). UNFPA, Ереван. 73. (на арм.).
28. Human Development Report, 1999. Published for the United Nations
29. Носко В.П. Эконометрика для начинающих (*Дополнительные главы*). – М.: ИЭПП, 2005. С. 379
30. Бородич С.А. Эконометрика. Учебное пособие. – Минск: Новое знание, 2006. – 407 с.
31. Доугерти К. Введение в эконометрику. – М.: ИНФРА-М, 2009. – 413 с.
32. Г.В.Борисов. Человеческий капитал в переходной экономике России: влияние возраста. <http://studydoc.ru/doc/2724127/chelovecheskij-kapital-v-perehodnoj-e-konomike>
33. Колосницына М. Г., Суворова И. К. Международная трудовая миграция: теоретические основы и политика регулирования // Экономический журнал ВШЭ. – 2005. – № 4. – С. 543-565.
34. Щекунских Ю. Б. Международная миграция рабочей силы // Международный журнал экспериментального образования. – 2010. – № 4. – С. 20-21.
35. Migration and Remittances. Recent Developments and Outlook. 2016
36. Migration and Remittances Factbook. 2016
37. Bodvarsson O., Van den Berg H. The Economics of Immigration. Theory and Policy. – Springer, 2013. – 2nd ed. – 474 pp.
38. Romer D. Advanced Macroeconomics. – 4th ed. – McGraw-Hill, 2012.- 716 pp.
39. Stryszowski, P., Di Maria, Corrado. Migration, human capital accumulation and economic development. In: Journal of Development Economics, Vol. 90, No. 2, 11.2009, p. 306-313.

40. Глущенко Г. И., Пономарев В. Миграция и развитие. Экономика, 2009 г.
41. Solow, Robert. A Contribution to the Theory of Economic Growth. *The Quarterly Journal of Economics*, Vol. 70, No. 1 (Feb., 1956), pp. 65-94.
42. Swan, Trevor. A Contribution to the Theory of Economic Growth. *Quarterly Journal of Economics* 70 (February 1956)
43. Ramsey F.P. A mathematical theory of saving // *The Economic Journal*. — December 1928
44. Blanchard, Olivier. Debt, Deficits, and Finite Horizons. *The Journal of Political Economy*, Vol. 93, No. 2. (Apr., 1985), pp. 223-247
45. Weil, Philippe. Overlapping Families of Infinitely-Lived Agents // 1989
46. Barro R.J., Sala-i-Martin X. *Economic Growth*. MIT Press, 2004. 654 page
47. М. Л. Лифшиц. Влияние миграции и естественного воспроизводства трудовых ресурсов на экономический рост в странах мира. N 31 (3) 2013. *Прикладная эконометрика*. Дмитриев и др., 2009, с. 125
48. Sachs J., Warner A. (1997). Fundamental sources of long-run growth. *The American Economic Review*, 87 (2), 184–187
49. С.В. Чепель, К.А. Бондаренко. Является ли внешняя трудовая миграция фактором экономического роста. Эконометрический анализ и выводы для стран СНГ. *Новой экономической ассоциации*, № 4 (28), с. 142–166
50. Massey, D., Arango, J., Hugo, G., Kouaouci, A., Pellegrino, A. and Taylor, J. Theories of international migration: A review and appraisal. *Population and Development Review*. No. 19, 1993
51. Öberg, S. (1997) 'Theories of Inter-Regional Migration: an Overview', in H. Blotevogel and A.J. Fielding (eds) *People, Jobs and Mobility in the New Europe*, Wiley, Chichester.
52. Stark O., Bloom D. The New Economics of Labor Migration // *The American Economic Review*. - 1985. - Vol. 75. -No. 2. - Pp. 173-178
53. Wallerstein I. *The Modern World-System. Capitalist Agriculture and the Origins of the European World Economy in the Sixteenth Century*. - Academic Press, 1974. 410 pp.

54. Massey D. Social Structure, Household strategies, and the Cumulative Causation of Migration. *Population Index* 56(1): 3-26
55. Massey D. The Social and Economic Origins of Immigration // *The Annals of the American Academy of Political and Social Science*. - 1990. - Vol. 510. - Pp. 60-72
56. Myrdal G. *Rich Lands and Poor*. - New York: Harper & Row, 1957. - 168 pp.
57. Barro R.J., Sala-i-Martin X. Convergence across States and Regions // *Brookings Papers on Economic Activity*, 1991(1). 1991. p. 107-182
58. Билсборроу Р.Е., Хьюто Гр., Оберам А.С., Злотник Х. Статистика международных миграций. Рекомендации по совершенствованию систем сбора данных. Международное бюро труда. Женева. М.: ACADEMIA.1999
59. *State of World Population 2011*. N.Y. UNFPA. 2012.
60. *Labour Force Survey. User Guide. VOLUME 2 – LFS Questionnaire*.Version 2. August 2012
61. Руководство по разработке эффективной политики в области трудовой миграции в странах происхождения и назначения. МОМ, ОБСЕ, МОТ. 2006.
62. Чудиновских О.С. Статистика международной миграции. Европейская Экономическая Комиссия Объединенных Наций Фонд ООН в области народонаселения. Практическое руководство для стран Восточной Европы и Центральной Азии. ООН. Женева, 2011.
63. Bilsborrow R. *Surveys of International Migration: Issues and Tips*. Carolina Population Center. Report of the Expert Group Meeting on the Use of Censuses and Surveys to Measure International Migration Sixth Coordination Meeting on International Migration. 26-27 November 2007. New York.
64. Bilsborrow R., Zlotnik H. The Systems Approach and the Measurement of the Determinants of International Migration. *Causes of International Migration. Proceedings of a Workshop*, 14-16 December 1994. Luxembourg.
65. Bilsborrow R., Richard E., Graeme H., Amarjit S. Oberai and Hania Zlotnik. 1997. *International Migration Statistics: Guidelines for Improving Data Collection Systems*. Geneva: International Labour Office.

66. Harrod, Roy. Towards a Dynamic Economics. London: Macmillan, 1948
67. Domar, Evsey. Capital Expansion, Rate of Growth, and Employment. Author(s): Source: *Econometrica*, Vol. 14, No. 2 (Apr., 1946)
68. Romer P. Increasing Returns and Long-Run Growth // *Journal of Political Economy*. 1986. Vol. 94. N 5.
69. Romer P. Endogenous Technical Change // *Journal of Political Economy*. 1990. Vol. 98. N 5. R 71—102
70. Lucas R. Making a Miracle // *Econometrica*. 1993. Vol. 61. N 2. R 251—271.
71. Lucas R. On the Mechanics of Economic Development // *Journal of Monetary Economics*. 1988. N 22.
72. Rebelo S., Long-Run Policy Analysis and Long-Run Growth // *Journal of Political Economy*. 1991. Vol. 99. N 3. R 500—521
73. Philippe Aghion and Peter W. Howitt. *The Economics of Growth*. MIT Press. 2008
74. Gene M. Grossman, Elhanan Helpman. *Innovation and Growth in the Global Economy*. MIT Press. 1991
75. Russell, Sharon Stanton. *International Migration: Implications for the World Bank*. May 1995 I. HROWP 54. Public Disclosure Authorized
76. Sala-i-Martin, Xavier; Barro, Robert J. *The application of rational expectations theory to clapping one-handed*. 1987. New York: McGraw-Hill.
77. Sala-i-Martin, Xavier, Barro, Robert J., *Convergence* // *Journal of Political Economy*, 100(2). 1992. p. 223–251
78. Barro, Robert J. *Economic Growth in a Cross Section of Countries*. *The Quarterly Journal of Economics*, Vol. 106, No. 2. (May, 1991)
79. Hatton, Timothy and Williamson, Jeffry. *What Drove the Mass Migrations from Europe in the Late nineteenth century?* NBER Historical Working Paper No. 43. 1994
80. Braun, Juan. *Essay on Economic Growth and Migration*. Harvard University. Cambridge, Massachusetts. May 1993

81. Demographic Modeling of the Geography of Migration and Population: A Multiregional Perspective Andrei Rogers. 2006. Department of Geography and Population Program, Institute of Behavioral Sciences. www.colorado.edu/ibs/pubs/pop/pop2007-0002.pdf
82. Ximena Clark. Timothy J. Hatton. Jeffrey G. Williamson. Explaining U.S. Immigration, 1971–1998. The Review of Economics and Statistics. 2007, Vol. 89, No. 2, Pages: 359-37
83. Ekrame Boubtane, Jean-Christophe Dumont, Christophe Rault. Immigration and economic growth in the OECD countries 1986-2006. CES Working Papers. 2013
84. «Преодоление барьеров: человеческая мобильность и развитие». ООН. Доклад о развитии человека 2009.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Միգրացիայի ազդեցությունը աճի վրա

Աշխատուժի աճը սահմանվում է.

$$\dot{L} = \tilde{n}L + M \quad (1)$$

որտեղ $\tilde{n}$ սահմանում է ազգաբնակչության բնական աճը: Սահմանենք m որպես արտաքին զուտ միգրացիայի գործակից ($m=M/L$): Մոդելը համապատասխանում է Սոլոու մոդելին և ենթադրում է, որ աշխատուժը աճում է մշտական մեծությամբ՝ $n = \tilde{n} + m$: Այստեղ մենք օգտագործում ենք Կոբ-Դուգլասի ֆունկցիան. Ֆիզիկական կապիտալ (K), մարդկային կապիտալ (H) և աշխատուժ (L).

Միգրանտները իրանց ներդրումը ունեն ազգային մարդկային կապիտալում, որը լրացնում է (*ներգաղթյալների դեպքում*) ներքին մարդկային կապիտալը: Եվ հակառակը, նրանք, ովքեր արտագաղթում են իրանց հետ են տանում մարդկային կապիտալը: Նշանակենք h^M մարդկային կապիտալի միջին քանակը, որը յուրաքանչյուր միգրանտ բերում է (*տանում է*) իր հետ, և $\hat{h}$ մեկ աշխատողին ընկնող միջին մարդկային կապիտալը ($\hat{h}=H/L$): Մարդկային կապիտալի կուտակումը տրվում է հետևյալ հավասարմամբ.

$$\dot{H} = S_H Y - \delta H + M h^M = S_H Y - (\delta - m \kappa^M) H \quad (2)$$

որտեղ S_H ռեսուրսի մի մասն է, որոնք տրամադրվում են մարդկային կապիտալի կուտակման համար, δ – մաշվածության դրույքաչափը, $\kappa^M = h^M / \hat{h}$ միգրանտների հարաբերական մարդկային կապիտալն է՝ համեմատած մեկ աշխատողին ընկնող միջին մարդկային կապիտալը (ընդունող/դոնոր երկրում): մենք ենթադրում ենք, որ միգրանտների հարաբերական մարդկային կապիտալը՝ $m \kappa^M$, հաստատուն մեծություն է:

Ֆիզիկական կապիտալի դինամիկան սահմանվում է ինճպես Սոլոուի մոդելում: Արտադրության S_K մասը կուտակվում է և կապիտալը ենթակա է մաշվածության էկզոգեն դրույքաչափով δ :

$$\dot{K} = s_K \cdot Y - \delta \cdot K \quad (3)$$

Օգտագործելով արդյունավետ աշխատանքի միավոր (*այսինքն* $y \equiv Y / AL$, $\kappa \equiv K / AL$, $h \equiv H / AL$), արտադրության ֆունկցիան ներկայացվում է ինտենսիվ ձևով.

$$y = k^\alpha h^\beta \quad (4)$$

Տնտեսության փոփոխությունը սահմանվում է.

$$\dot{k} = s_k y - (\delta + g_A + n) \cdot k \quad (5)$$

$$\dot{h} = s_H y - (\delta + g_A + n - m\kappa^M) \cdot h \quad (6)$$

Երկրի տնտեսությունը զուգամիտում է կայուն վիճակի, որը սահմանվում է հետևյալ ձևի.

$$k^* = \left(\frac{S_K}{\delta + g_A + n} \right)^{\frac{1-\beta}{1-\alpha-\beta}} \left(\frac{S_H}{\delta + g_A + n - m\kappa^M} \right)^{\frac{\beta}{1-\alpha-\beta}} \quad (7)$$

$$h^* = \left(\frac{S_K}{\delta + g_A + n} \right)^{\frac{\alpha}{1-\alpha-\beta}} \left(\frac{S_H}{\delta + g_A + n - m\kappa^M} \right)^{\frac{1-\alpha}{1-\alpha-\beta}} \quad (8)$$

Տեղադրելով (7) և (8) արտադրողականության ֆունկցիաի մեջ և վերցնելով նրա լոգարիֆմը, որոշում ենք մեկ արդյունավետ աշխատողի համար եկամուտը (*հաշվի են առնվում նաև տրանսֆերտային փոխանցումները*).

$$\begin{aligned} \ln y^* = & \frac{\alpha}{1-\alpha-\beta} \ln s_K + \frac{\beta}{1-\alpha-\beta} \ln s_H \\ & - \frac{\alpha}{1-\alpha-\beta} \ln(\delta + g_A + n) \\ & - \frac{\beta}{1-\alpha-\beta} \ln(\delta + g_A + n - m\kappa^M) + trf_t \end{aligned} \quad (9)$$

Եթե ենթադրենք, որ պետությունը գտնվում է կայուն վիճակում, ապա այդ հավասարումը կարելի է օգտագործել էմպիրիկ (*փորձնական*) վերլուծության համար:

Ավելի շուտ, մենք ենթադրում ենք, որ երկրի աճը ընթանում է կայուն վիճակի մոտակայքում: Տնտեսության աճի տեմպը զուգամիտում է կայուն վիճակին, և կարող է մոտեցվել հետևյալ ձևի.

$$\frac{\dot{y}}{y} = \frac{\partial \ln y}{\partial t} \simeq -\lambda (\ln y(t) - \ln y^*) \quad (10)$$

Որտեղ $\lambda = (1 - \alpha - \beta)(g_A + \delta + n)$: Այս y եկամուտը բավարարում է հետևյալ հավասարմանը.

$$\ln y(t) - \ln y^* \simeq e^{-\lambda t} (\ln y(0) - \ln y^*) \quad (11)$$

որտեղ $y(0)$ մեկ արդյունավետ աշխատողի եկամուտն է սկզբնական ժամանակում: Պետք է նշել, ենթադրելով λ համար, որ նա, ժամանակաի ընթացքում, զուգամիտվում է մշտական արագությամբ, ապա (11) հավասարումը ճիշտ է t և $t-1$ միջև.

$$\ln y(t) - \ln y^* \simeq e^{-\lambda} (\ln y(t-1) - \ln y^*)$$

Գնահատելու նպատակով, մենք պետք է ստանանք y եկամուտի արտահայտությունը մեկ աշխատողի y դեպքում: Օգտագործելով (9) հավասարումը, և հաշվի առնելով $\hat{y} \equiv Y/L$, $\ln y(t) = \ln \hat{y}(t) - \ln A(0) - g_A t$, վերջնականապես ստանում ենք արտադրողականության աճի տեմպը.

$$\begin{aligned} \ln \hat{y}(t) - \ln \hat{y}(t-1) \simeq & g_A \left(t - e^{-\lambda}(t-1) \right) + (1 - e^{-\lambda}) \ln A(0) \\ & - (1 - e^{-\lambda}) \ln \hat{y}(t-1) \\ & + (1 - e^{-\lambda}) \frac{\alpha}{1 - \alpha - \beta} (\ln s_K - \ln (\delta + g_A + n)) \\ & + (1 - e^{-\lambda}) \frac{\beta}{1 - \alpha - \beta} \ln s_H \\ & - (1 - e^{-\lambda}) \frac{\beta}{1 - \alpha - \beta} \ln (g_A + \delta + n - m\kappa^M) \end{aligned} \quad (12)$$

(12) հավասարում ցույց է տալիս, որ λ , β , δ , λ , և g_A արտադրողականության աճի տեմպը բացասական կապված է զուտ միգրացիայի տեմպի հետ, քանի որ կապիտալի նուսրացման էֆեկտի հետ կապված աշխատուժի աճը, n . Սակայն, այդ ազդեցությունը, որը հակակշիռ դրական ազդեցություն ունի միգրանտների հոսքի $m\kappa^M$ մարդկային կապիտալի էության հետ: Այդ պատճառով, զուտ միգրացիայի արդյունքը

արտադրողականության աճի վրա միանշանակ չի, և կախված է մարդկային կապիտալի **հարաբերական մեծությունից**, որը իր լուծման ունեն միգրանտները (κ^M), զուտ միգրացիան (m) և արտադրողականության ֆունկցիաի գործակիցները (α և β): Նման ենթադրությունների շրջանակում, այլ հավասար պայմաններում, եթե մենք ունենք զուտ արտագաղթ, ապա այն կարող է ունենալ բացասական ազդեցություն արտադրողականության վրա:

Միգրացիան ունի դրական ազդեցություն արտադրողականության աճի վրա այն և միայն այն դեպքում, երբ նրա ավանդը մարդկային կապիտալի կուտակման գործում ավելի քան փոխհատուցում է կապիտալի նվազման արդյունքը, ինչը հանդիսանում է Սոլոու-Սվանի տեսական հիմքերի ուղղակի արդյունքը:

Փորձնական վերլուծություն

(12) հավասարումը առաջարկում է մոդելի օգտակար սպեցիֆիկացիա, որը կարող է օգտագործվել միգրացիաի ազդեցության տնտեսական աճի գնահատման համար ընդունող/արտահանող երկրի դեպքում: Նկատի ունենանք.

$$\begin{aligned} \ln(g_A + \delta + n - m\kappa^M) &= \ln\left((g_A + \delta + n)\left(1 - \frac{m\kappa^M}{g_A + \delta + n}\right)\right) \\ &= \ln(g_A + \delta + n) + \ln\left(1 - \frac{m\kappa^M}{g_A + \delta + n}\right) \end{aligned} \quad (13)$$

Կարելի է սպասել, որ $\frac{m\kappa^M}{g_A + \delta + n}$ փոքր է: Մոտեցնելով (*approximation*)

$\ln(1 - x) \cong -x$ ստանում ենք աճի տեմպի հետևյալ հավասարումը, մեկ աշխատողի համար.

$$\begin{aligned}
\ln \hat{y}_t - \ln \hat{y}_{t-1} \cong & g_A \left(t - (t-1)e^{-\lambda} \right) + (1 - e^{-\lambda t}) \ln A(0) \\
& - (1 - e^{-\lambda t}) \ln \hat{y}_{t-1} + (1 - e^{-\lambda t}) \ln \frac{\alpha}{1 - \alpha - \beta} \ln S_{K_t} \\
& + (1 - e^{-\lambda t}) \ln \frac{\alpha}{1 - \alpha - \beta} \ln S_{H_t} \\
& - (1 - e^{-\lambda t}) \ln \frac{\alpha + \beta}{1 - \alpha - \beta} \ln (g_A + \delta + n_t) \\
& + (1 - e^{-\lambda t}) \ln \frac{\beta}{1 - \alpha - \beta} \frac{m_t \kappa_t^M}{g_A + \delta + n_t} \\
& + (1 - e^{-\lambda t}) \ln trf_t
\end{aligned} \tag{14}$$

Զուտ միգրացիաի մարդկային կապիտալի արդյունքը ներկայացվում է հետևյալ ձևի $m\kappa^M / g_A + \delta + n$:

Հետևելով ստանդարտ պրակտիկային, ենթադրում ենք, որ λ գործակիցը, տրվաշ ժամանակում, մշտական զուգամիտում է: $A(0)$ նշանակում է բոլոր չդիտարկվող գործակիցները (օրինակ, տեխնոլոգիական սկզբնական մակարդակը, ապահովությունը բնական ռեսուրսներով, ինստիտուտները և այլն):

Մոդելը օգտագործվում է, որպեսզի գնահատվի արտագաղթի ազդեցությունը երկրի արտադրողականության աճի վրա.

$$\begin{aligned}
\ln y_t = & \beta_1 + \beta_2 \ln y_{t-1} + \beta_3 \ln s_{K_t} + \beta_4 \ln s_{H_t} \\
& + \beta_5 \ln (\delta + x + n_t) + \beta_6 \frac{m_t k_t^M}{\delta + x + n_t} + \beta_7 trf_t + \mu
\end{aligned} \tag{15}$$

որտեղ μ_i և γ_t ներկայացնում են կոնկրետ երկրի և կոնկրետ ժամանակի արդյունքը, որտեղ $\beta_1, \dots, \beta_7$ գործակիցներ են, որոնք պետք է հաշվարկվեն.

$$\begin{aligned}
\frac{\partial (\ln d(t) - \ln d(0))}{\partial m} &= \frac{\partial \left(\ln \frac{L_t}{L_0} \right)}{\partial m} - \frac{\partial \left(\ln \frac{P_t}{P_0} \right)}{\partial m} \\
&= \frac{L_0}{L_t} - \frac{L_0}{P_t}.
\end{aligned}$$

1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը (հազ. դոլար)

Տարիներ	2000	2001	2002	2003	2004	2005
Ներհոսք	129,635.2	139,876.3	194,187.5	248,560.0	760,700	965,287

2006	2007	2008	2009	2010	2011
1,237,597	1,742,205	2,270,615	1,575,678	1,627,056	1,960,033

2012	2013	2014	2015	2016
2,234,124	2,302,336	2,123,615	1,631,659	1,532,883

	Հայաստանի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն <i>t</i> տարում (\$ <i>բնակչության մեկ շնչի հաշվով</i>)	ՀՆԱ Հայաստանում (US \$)	Գործազր- կության մակարդակը Հայաստա- նում, %	Մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքսը Հայաստանում (նշանակությունն ամփոփված է 0- ի և 1-ի միջև; որքան ավելի մոտ է 1-ին, այնքան բարձր է մարդկային պոտենցիալի զարգացման մակարդակը)	Զինիի գործակիցը Հայաստանի համար (նշանակությունն ամփոփված է 0- ի և 1-ի միջև կամ %-ով; որքան ավելի մոտ է 1- ին, այնքան ավելի անարդար է):	Հայաստանի արդյունա- բերության մակարդակը ՀՆԱ-ում, %
2000	621.4	1,911,563,665.4	11.7	0.648	36.01	24.1
2001	692.3	2,118,467,913.4	10.4	0.654	36.22	22.3
2002	779.9	2,376,335,048.4	10.8	0.660	35.66	20.9
2003	924.6	2,807,061,008.7	10.1	0.670	33.80	21.2

2004	1,182.1	3,576,615,240.4	9.6	0.670	37.79	21.0
2005	1,625.4	4,900,436,758.5	8.2	0.695	36.16	23.8
2006	2,126.1	6,384,457,744.4	7.5	0.709	32.84	18.8
2007	3,079.1	9,206,277,479.0	7.0	0.723	30.23	16.6
2008	3,916.7	11,662,017,844.9	16.4	0.727	30.86	14.7
2009	2,913.6	8,648,015,305.0	18.7	0.720		9.7
2010	3,124.8	9,260,285,762.1	19.0	0.722	31.30	10.7
2011	3,420.3	10,138,077,996.4	18.4	0.726		10.6
2012	3,337.9	9,910,387,657.4	17.3	0.729		16.1
2013	3,680.0	11,120,000,000.0	16.2	0.730		16.2
2014	3,864.0	11,600,000,000.0	17.6	0.733		16.0
2015	3,515.0	10,560,000,000.0	18.5	0.733		16.2
2016	3,898.0	10,770,000,000.0	18.0			16.3

	Ռեցիպիենտ երկրի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն <i>t</i> տարում (\$ <i>բնակչության մեկ շնչի հաշվով</i>)	ՀՆԱ ռեցիպիենտ երկրում (մլրդ. US \$)	Գործազր- կության մակարդակը ռեցիպիենտ երկրում, %	Մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքսը ռեցիպիենտ երկրիում (նշանակությունն <i>ամփոփված է 0- ի և 1-ի միջև;</i> <i>որքան ավելի մոտ է 1-ին,</i> <i>այնքան բարձր է մարդկային պոտենցիալի զարգացման մակարդակը)</i>	Ջինիի գործակիցը ռեցիպիենտ երկրի համար (նշանակությունն <i>ամփոփված է 0- ի և 1-ի միջև կամ %-ով; որքան ավելի մոտ է 1- ին, այնքան ավելի անարդար է):</i>	Ռեցիպիենտ երկրի արդյունա- բերության մակարդակը ՀՆԱ-ում, %
2000	1,425.7	260.0	10.9	0.689	35.1	
2001	1,612.0	307.0	8.98	0.694	39.6	
2002	1,837.6	345.0	7.88	0.703	35.7	17.6
2003	2,287.9	430.0	8.21	0.711	37.26	17.0
2004	3,120.4	591.0	7.76	0.718	37.14	18.2

2005	4,078.2	764.0	7.12	0.735	37.51	19.0
2006	5,362.4	990.0	7.05	0.744	42.13	18.6
2007	6,884.6	1300.0	6.0	0.753	43.71	18.5
2008	8,863.7	1661.0	6.2	0.760	42.27	18.0
2009	6,987.7	1223.0	8.3	0.765	40.11	14.8
2010	8,532.8	1488.0	7.35	0.770	41.4	15.0
2011	10,475.1	1858.0	6.5	0.774	41.7	15.0
2012	10,909.5	2017.0	5.46	0.778	41.9	15.0
2013	14,247.0	2097.0	5.58	0.778		15.1
2014	13,872.0	2049.0	5.6	0.778		13.7
2015	9,054.0	1325.0	5.8	0.798		13.9
2016	7,742.0	1133.0	5.6			13.7

Միջին աշխատավարձ

Հայաստան

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
դրամ	22,706.0	24,483.0	27,324.0	34,783.0	43,445.0	52,060.0	62,293.0	74,227.0

2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
87,406.0	96,019.0	102,652.0	108,092.0	113,163.0	146534.0	158580.0	1716150	188851.0

Ռեցիպիենտ (ընդունող) երկիր

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
ռուբլի	2,223.0	3,240.0	4,360.0	5,499.0	6,740.0	8,555.0	10,634.0	13,593.0

2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
17,290.0	18,638.0	20,952.0	23,693.0	26909	29940	32600	33925	36703

Միգրացիոն հոսքեր

Տարի	Թվաքանակ	Տարի	Թվաքանակ	Տարի	Թվաքանակ
2000	7020.3	2006	3407	2012	37805
2001	4044.4	2007	10952	2013	34791
2002	3352	2008	10774	2014	33294
2003	3352	2009	17084	2015	32861
2004	2749	2010	23088	2016	30837
2005	3156	2011	29968		

Հայկական սփյուռքի թվաքանակը ռեցիպիենտ երկրում (միգրանտների համար գրավչության գործակիցը)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
մարդ	1217388	1312160	1406930	1501700	1596470	1691240	1786010	1880780

2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1975550	2070320	2165090	2259860	2260000	2374900	2415100	2497200	2532800